

**ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ  
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ԶԵԿՈՒՅՑ**

**ԵՐԵՎԱՆ 2019**



«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ  
 Գյումրի 3102, Պուշկինի 96  
 Հեռ.՝ +374 312 50622  
 Էլ. հասցե՝ [admin@asparez.am](mailto:admin@asparez.am)  
 Կայքէջ՝ [www.asparez.am](http://www.asparez.am)

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ  
 Երեւան 0002, Սարյան 12, 5-րդ հարկ  
 Հեռ.՝ +374 10 569589, 569689  
 Ֆաքս՝ + 374 10 569519  
 Էլ. հասցե՝ [info@transparency.am](mailto:info@transparency.am)  
 Կայքէջ՝ [www.transparency.am](http://www.transparency.am)

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան  
 Երեւան 0002, Թումանյան փ., 2-րդ փակուղի, 7/1  
 Հեռ.՝ +374 10 533862, 536758  
 Էլ. հասցե՝ [info@osi.am](mailto:info@osi.am)  
 Կայքէջ՝ [www.osf.am](http://www.osf.am)

*Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով, ինչպես նաև «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» հիմնադրամի աջակցությամբ: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատվությունը կրում են բացառապես «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունները, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության, ինչպես նաև «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» հիմնադրամի կարծիքը:*

Գծապատկերներ և Աղյուսակներ.....	5
Հապավումներ.....	8
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ.....	9
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	12
Մոնիտորինգի մեթոդաբանության տեսական հիմքերը.....	13
ՀՀ օրենսդրական կարգավորումները.....	15
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	16
Մոնիտորինգի նպատակը, խնդիրները.....	16
Տեղեկատվության ստացման մեթոդները.....	17
Հետազոտության ընտրանքը.....	17
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....	20
ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՈՍՈՒՆԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՅԻԳԻԵՆԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	24
ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐՈՎ.....	34
Դպրոցի ընդհանուր և հարակից տարածքի գնահատում.....	34
Դասասենյակներում առկա վիճակի գնահատում.....	38
Ճաշարաններում առկա վիճակի գնահատում.....	39
Մարզադահլիճների վիճակի գնահատում.....	42
Գրադարանների և հանդիսությունների դահլիճի առկա վիճակի գնահատում.....	43
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ ԵՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՎ.....	46
Դպրոցների ներքին հարդարանքը.....	46
Դպրոցների կահավորումը, ապահովվածությունը անհրաժեշտ կրթական նյութերով և պարագաներով.....	51
Դասասենյակների կահավորումը և ապահովվածությունը կրթական նյութերով և պարագաներով.....	51
Համակարգչային սենյակի կահավորումը.....	53
Գրադարանների հագեցվածությունը.....	56
Քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաների կահավորումը.....	56
Մարզադահլիճի կահավորումը և մարզասարքերի առկայությունը.....	58
Արտակարգ իրավիճակների կառավարման համակարգը դպրոցներում.....	59
ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒԺՍՊՈՐՏԱՐԿՄԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ.....	62
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՊԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ.....	68

Աշակերտների առաջադիմությունը .....	68
Աշակերտների վերաբերմունքը գույքի նկատմամբ .....	72
Բարոյահոգեբանական մթնոլորտ դպրոցներում .....	73
<b>ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՊԸ ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ</b> .....	76
Դպրոցի ֆիզիկական պայմանների և բարոյահոգեբանական մթնոլորտի կապը ուսուցիչների աշխատանքային արդյունավետության հետ.....	76
Վերապատրաստումների անհրաժեշտությունը .....	77
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	78
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b> .....	84
Հավելված 1. Ուսուցիչների հետ իրականացվող հարցման հարցաթերթ .....	84
Հավելված 2. Աշակերտների հետ իրականացվող հարցման հարցաթերթ .....	90
Հավելված 3. Տնօրեններին ուղղված գրավոր հարցման տեքստ.....	98
Հավելված 4. Դպրոցի նյութատեխնիկական և սանիտարահիգիենիկ պայմանների դիտարկման քարտ .....	100
Հավելված 5. Աղյուսակներ և Գծապատկերներ.....	112
Հավելված 6. Կրթության և գիտության նախարարության գրությունը զեկուլցի վերաբերյալ .....	112

**Գծապատկերներ և Աղյուսակներ**

Գծապատկեր 1. Աշակերտների և աշխատակիցների թիվն ըստ դպրոցների քանակի..... 20

Գծապատկեր 2. Հարցված աշակերտների սեռատարիքային բաշխումը ..... 20

Գծապատկեր 3. Հարցված ուսուցիչների սեռատարիքային բաշխումը (N)..... 21

Գծապատկեր 4. Հարցված ուսուցիչների դրույթաչափերը ուսումնասիրված դպրոցներում..... 21

Գծապատկեր 5. Հարցված ուսուցիչների մանկավարժական ստաժը..... 21

Գծապատկեր 6. Հարցված ուսուցիչների բաշխումն ըստ դասավանդվող առարկաների (%)..... 22

Գծապատկեր 7. Տվյալ դատողություններից ո՞րն է առավել լավ բնորոշում ձեր ընտանիքի ֆինանսական դրությունը: (%)..... 23

Գծապատկեր 8. Հիմնականում հաճույթ ո՞վ էք դպրոց գալիս/ դպրոց գալիս աշխատանքի: (%)..... 24

Գծապատկեր 9. Հիմնականում հաճույթ ո՞վ էք դպրոց գալիս/ դպրոց գալիս աշխատանքի, ըստ մարզերի: (%)..... 25

Գծապատկեր 10. Դպրոցում առկա՞ են հետևյալ հոտերը: (%)..... 25

Գծապատկեր 11. Որքանո՞վ էք գոհ դպրոցի հետևյալ պայմաններից: (%)..... 26

Գծապատկեր 12. 2016-2017 ուս.տարում Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն ըստ շենքերի վիճակի..... 27

Գծապատկեր 13. Սանհանգույցների մաքրության և ընդհանուր վիճակի գնահատական, դիտարկման արդյունքներ (%)..... 29

Գծապատկեր 14. Սանհանգույցներում առկա է... (N, դիտարկում)..... 29

Գծապատկեր 15. Ինչպես է ջեռուցվում դպրոցը, դասարանները (N, դիտարկում)..... 30

Գծապատկեր 16. Դպրոցում կա՞ մաքուր խմելու ջուր, որից կարող էք օգտվել: (%)..... 31

Գծապատկեր 17. Խմելու և տնտեսական ջրի առկայությունը դպրոցի ներսում և դպրոցից դուրս (%)..... 33

Գծապատկեր 18. 2017-2018 ուս.տարում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն ըստ շենքերի վիճակի..... 34

Գծապատկեր 19. Դպրոցի ընդհանուր վիճակ, բաղադրիչների գնահատում (% , դիտարկում)..... 35

Գծապատկեր 20. Որքանո՞վ էք գոհ դպրոցի հետևյալ պայմաններից, դասասենյակներ (% , աշակերտներ, ուսուցիչներ) ..... 38

Գծապատկեր 21. Որքանո՞վ էք գոհ դպրոցի հետևյալ պայմաններից, ճաշարան (%)..... 39

Գծապատկեր 22. Որքա՞ն հաճախ էք օգտվում դպրոցի ճաշարանից (% , աշակերտներ, ուսուցիչներ) ..... 41

Գծապատկեր 23. Գնահատել մարզադահլիճի... (N, դիտարկում)..... 42

Գծապատկեր 24. Գնահատել հանդիսությունների դահլիճի... (դպրոցների քանակ, դիտարկում).. 43

Գծապատկեր 25. Որքանո՞վ էք գոհ հանդիսությունների դահլիճի կահավորումից (%) ..... 44

Գծապատկեր 26. Որքանո՞վ հաճախ էք օգտվում գրադարանից (%) ..... 44

Գծապատկեր 27. Պատերի գույն/եր/ը դպրոցում (N, դիտարկում)..... 46

Գծապատկեր 28. Կահույքի գույն/եր/ը դպրոցում (N, դիտարկում) ..... 48

Գծապատկեր 29. Հատակի գույները դպրոցում (նշումների թիվ, դիտարկում)..... 48

Գծապատկեր 30. Վարագույրների գույները դպրոցում (նշումների թիվ, դիտարկում) ..... 48

Գծապատկեր 31. Մարզադահլիճում առկա գույները (նշումների թիվ, դիտարկում)..... 49

Գծապատկեր 32. Հանդիսությունների դահլիճում առկա գույները (նշումների թիվ, դիտարկում). 49

Գծապատկեր 33. Որքանո՞վ էք գոհ... (%)..... 52

Գծապատկեր 34. Ուսուցիչները կիրառում են հետևյալ նյութերը... (%)..... 52

Գծապատկեր 35. Որքա՞ն հաճախ էք օգտվում համակարգչային սենյակից և համացանցից: (%).. 53

Գծապատկեր 36. Որքանո՞վ էք գոհ համակարգչային սենյակի հագեցվածությունից: (%) ..... 54

Գծապատկեր 37. Համակարգիչներ թիվն ըստ դպրոցների քանակի (N, դիտարկում) ..... 55

Գծապատկեր 38. Բնագիտական առարկաների շրջանակներում սովորաբար կատարո՞ւմ եք լաբորատոր փորձեր (%).....	56
Գծապատկեր 39. Որքանո՞վ եք գոհ լաբորատորիաների հագեցվածությունից (%).....	57
Գծապատկեր 40. Ծանո՞թ եք դպրոցի աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների պլանի/տարհանման պլանի հետ:.....	60
Գծապատկեր 41. Վերջին անգամ ե՞րբ է դպրոցում իրականացվել տարհանում ուսումնական նպատակով: (%).....	60
Գծապատկեր 42. Ինչպիսի՞ բժշկական ստուգումներ եք անցել ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում (% , աշակերտներ).....	64
Գծապատկեր 43. Ընթացիկ ուսումնական տարում դպրոցում իրականացվե՞լ են առողջ ապրելակերպի վերաբերյալ միջոցառումներ (այո, %, ըստ մարզերի).....	66
Գծապատկեր 44. Որքանո՞վ եք գոհ բուժկետի հագեցվածությունից (%).....	66
Գծապատկեր 45. Ինչպիսի՞ն է քո առաջադիմությունը դպրոցում (% , աշակերտներ).....	68
Գծապատկեր 46. Աշակերտների առաջադիմությունն ըստ ֆիզիկական պայմանների համաթվի (%).....	69
Գծապատկեր 47. Աշակերտների առաջադիմությունն ըստ բարոյահոգեբանական մթնոլորտի համաթվի (% , աշակերտներ).....	70
Գծապատկեր 48. Ի՞նչ մասնագետ ես ուզում դառնալ (% , աշակերտներ).....	71
Գծապատկեր 49. Ի՞նչ հետաքրքրություններ ունեք դասերից դուրս (% , աշակերտներ).....	71
Գծապատկեր 50. Ի՞նչ է քեզ հարկավոր ավելի լավ սովորելու համար: (% , աշակերտներ).....	72
Գծապատկեր 51. Աշակերտները, ուսուցիչները, տնօրինությունը հոգատար են դպրոցի գույքի, պայմանների պահպանման հարցում (%).....	72
Գծապատկեր 52. Դպրոցում գտնվելիս ինչպիսի՞ զգացողություն ես ունենում (% , աշակերտներ). 73	
Գծապատկեր 53. Աշակերտների դրական զգացողությունների կապը դպրոցի ֆիզիկական պայմանների հետ: (%).....	74
Գծապատկեր 54. Ի՞նչ պարագաների և պայմանների կարիք ունի դպրոցը: (%).....	74
Գծապատկեր 55. Դպրոցի ֆիզիկական պայմանները և բարոյահոգեբանական մթնոլորտը որքանո՞վ են նպաստում Ձեր աշխատանքի արդյունավետությանը: (% , ուսուցիչներ).....	76
Գծապատկեր 56. Ի՞նչ պարագաների ձեռք բերման համար եք ծախսում գումարը: (% , ուսուցիչներ).....	76
Գծապատկեր 57. Որքանո՞վ եք գոհ այդ վերապատրաստումներից: (% , ուսուցիչներ).....	77
Գծապատկեր 58. Ի՞նչ վերապատրաստումների կարիք ունեք այժմ: (% , ուսուցիչներ).....	77
Գծապատկեր 59. Մասնակցե՞լ եք 2017թ. խորհրդարանական ընտրություններին: (% , ուսուցիչներ):.....	117
Գծապատկեր 60. Խնդրում եմ նշել Ձեր մասնակցության ձևը: (% , ուսուցիչներ):.....	117
Գծապատկեր 61. Դուք հանդիսանո՞ւմ եք որևէ կուսակցության անդամ կամ համակիր: (%).....	118

Աղյուսակ 1. Դպրոցների ընտրանքն ըստ դպրոցի տեսակի.....	18
Աղյուսակ 2. Մաքրող պարագաների առկայությունը դպրոցում (N).....	41
Աղյուսակ 3. 2016-2017 ուս.տարում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն ըստ շենքերի վիճակի և հարմարությունների.....	41
Աղյուսակ 4. Ճաշարանի և աշխատակիցների աշխատանքի գնահատում, դիտարկում (N).....	41
Աղյուսակ 5. Դպրոցում առկա է... , դիտարկում (N).....	42
Աղյուսակ 6. Տեսանելի վայրերում առկա խորհրդանիշներ, նկարներ և այլն (N, դիտարկում).....	49
Աղյուսակ 7. Դասասենյակներում առկա ... (N, դիտարկում).....	51
Աղյուսակ 8. Համակարգիչների քանակն ըստ Windows-ի տարբերակների (N, դիտարկում).....	55
Աղյուսակ 9. Տպող, պատճենահանող սարքերի առկայությունը դպրոցում (N, դիտարկում).....	55

Աղյուսակ 10. Պրոյեկտորների առկայությունը դպրոցում (N, դիտարկում) .....	56
Աղյուսակ 11. Գրադարանի հագեցվածությունը .....	56
Աղյուսակ 12. Զիմիայի, ֆիզիկայի լաբորատորիայում առկա է... (N, դիտարկում) .....	57
Աղյուսակ 13. Դպրոցում առկա է... (N, դիտարկում) .....	58
Աղյուսակ 14. Աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ փաստաթղթերի առկայությունը (տնօրենների հարցում, դպրոցների թիվ).....	59
Աղյուսակ 15. Դպրոցում առկա է... (դպրոցների քանակ, դիտարկման արդյունքներ) .....	61
Աղյուսակ 16. Որքա՞ն հաճախ եք զգում... (% , աշակերտներ) .....	62
Աղյուսակ 17. Դեղորայքի և պարագաների առկայությունը դպրոցի բուժկետում (N, դիտարկում) .....	66
Աղյուսակ 18. Հետազոտության մեջ ներառված դպրոցներն ըստ մարզերի .....	112
Աղյուսակ 19. Դպրոցների բաշխումն ըստ Ֆիզիկական/Նյութական ապահովվածության և բարոյահոգեբանական մթնոլորտի համաթվերի.....	113
Աղյուսակ 20. Հարցված ուսուցիչների մասնագիտությունը.....	116
Աղյուսակ 21. Ուսուցիչների կողմից դասավանդվող առարկաներն ըստ նրանց մասնագիտությունների (քանակ, ուսուցիչներ).....	119

## Հապավումներ

<b>ԱՄՆ ՄՁԳ</b>	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
<b>ԱՆ</b>	ՀՀ Առողջապահության նախարարություն
<b>ԱՌՆ</b>	Աղետների ռիսկերի նվազեցում
<b>ԿԳՆ</b>	ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
<b>ՀԵԿ</b>	Հայոց եկեղեցու պատմություն
<b>ՀՀ</b>	Հայաստանի հանրապետություն
<b>ՄԱԿ</b>	Միավորված Ազգերի Կազմակերպություն
<b>ՆԶՊ</b>	Նախնական զինվորական պատրաստություն
<b>ՊՈԱԿ</b>	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
<b>ՏՀՏ</b>	Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ
<b>ՏՁԵՆ</b>	ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն
<b>ՔԵԿ</b>	Քաղաքացիական երիտասարդական կենտրոններ



## ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Մի շարք հետազոտություններ փաստում են, որ դպրոցում երեխաների կրթական արդյունքների և ուսուցիչների աշխատանքի որակի վրա ազդում են միջավայրային գործոնները և պայմանները, իսկ դպրոցական հարմարությունների որակի մակարդակը ազդում է ուսումնական միջավայրի որակի վրա<sup>1</sup>:

Չեկույցում ամփոփված են [ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը Թրանսիպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի](#) հետ համատեղ ԱՄՆ ՄԶԳ օժանդակությամբ «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում իրականացված ՀՀ հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական և սանիտարահիգիենիկ պայմանների մոնիտորինգի արդյունքները:

Մոնիտորինգի շրջանակներում տվյալների հավաքագրումն իրականացվել է մարզային Զաղաքացիական երիտասարդական կենտրոնների (ԶԵԿ) ակտիվ երիտասարդական խմբերի կողմից:

Չեկույցը մշակվել է [Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի](#) փորձագիտական թիմի կողմից:

Մոնիտորինգի շրջանակներում կիրառվել են քանակական և որակական մեթոդներ՝ հարցազրույցներ ուսուցիչների և աշակերտների շրջանում, դիտարկումներ, փաստաթղթերի վերլուծություն: Մոնիտորինգն իրականացվել է ՀՀ 50 մարզային դպրոցներում:

Չեկույցի նախնական տարբերակը քննարկվել է բոլոր 10 մարզկենտրոններում, որից հետո վերջնականացվել է՝ հաշվի առնելով քննարկումների արդյունքները:

Մոնիտորինգի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել ուսումնասիրության ենթարկված 50 դպրոցների նյութատեխնիկական պայմանների վերաբերյալ: Արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցների նյութատեխնիկական պայմանները կարգավորող՝ ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանը ամբողջությամբ չի կիրարկվել, իսկ որոշ դեպքերում կոպտորեն խախտվել է:

### Մոնիթորինգի հիմնական բացահայտումները

- Հետազոտության արդյունքների համաձայն, դպրոցի ֆիզիկական պայմանները, ներառյալ՝ սանիտարահիգիենիկ պայմանները, ենթակառուցվածքների առկայությունը և որակը, դպրոցի ներքին հարդարանքը, անուղղակի ազդեցություն ունեն, մի կողմից, աշակերտների առաջադիմության, մյուս կողմից, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա: Հետազոտական տարբեր մեթոդների և գործիքների կիրառմամբ ստացված տվյալների համադրումը թույլ է տալիս արձանագրել, որ դպրոցի ֆիզիկական պայմանների ազդեցությունը աշակերտների առաջադիմության և ուսուցիչների վրա միջնորդավորված է դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտով: **Այլ կերպ ասած, ֆիզիկական պայմանները ազդում են բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, իսկ վերջինս էլ, իր հերթին, աշակերտների առաջադիմության վրա:**
- Հետազոտության մասնակիցները (աշակերտները, ուսուցիչները) տարբեր կերպ են ընկալում դպրոցներում առկա խնդիրները, որոնք, մասնավորապես, վերաբերում են ֆիզիկական պայմանների առկայությանը և ծառայությունների որակին: Սակայն նրանց միավորում է մեկ բան. թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները ժամանակի ընթացքում համակերպվում են այն իրավիճակի հետ, որն առկա է դպրոցում:
- Համեմատելով աշակերտների և ուսուցիչների կարծիքը դպրոցների դիտարկման արդյունքների հետ՝ մենք տեսնում ենք, որ հիմնականում միևնույն իրավիճակին դիտարկողը տվել է

<sup>1</sup> Hasbullah A., Wan Zahari Wan Yusoff, Maziah Ismail, Prima Vitasari, [A framework study of school facilities performance in public primary school of Batubara district in Indonesia](#) [15.02.2018]

ամենացածր գնահատականը, աշակերտները՝ մի փոքր ավելի բարձր, իսկ ուսուցիչները՝ ամենաբարձր գնահատականը:

- Դպրոցի տնօրենները չեն կարողանում լիարժեք կառավարել դպրոցի ֆինանսները՝ բարելավելու համար դպրոցի պայմանները:
- Բավականին ցածր է դպրոցների տնօրենների իրազեկվածությունը հիմնանորոգման և վերանորոգման համար դպրոցների ընտրության ընթացակարգի վերաբերյալ. նրանց գնահատմամբ, այդ ընթացակարգը հստակ և թափանցիկ չէ:
- Աշակերտների քանակով պայմանավորված՝ մի շարք դպրոցներ գերծանրաբեռնված են, իսկ մի շարք դպրոցներ՝ թերծանրաբեռնված, խոսքը, մասնավորապես, վերաբերում է ավագ դպրոցներին:
- Բուժզննումների նկատմամբ վերահսկողությունը բավարար չափով չի իրականացվում, արդյունքում աշակերտները չեն անցնում պարտադիր զննումները:
- Ուսումնասիրված **բոլոր դպրոցներում էլ առկա են մի շարք պայմաններ, որոնք չեն համապատասխանում ՀՀ իրավական նորմերին**, որոնք սահմանված են «Հանրակրթական ծրագրերի իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N2.2.4-016-17 սանիտարական կանոններ և նորմեր» ՀՀ առողջապահության նախարարի թիվ 12-Ն հրամանով.<sup>2</sup> Հատկապես խնդրահարույց կետերից են՝
  - **սանհանգույցների** մաքրությունը,
  - **ճաշարանի** բացակայությունը,
  - **խմելու ջրի** հասանելիությունը և որակի հետ կապված խնդիրները,
  - **մարզադահլիճների և հանդերձարանների** բացակայությունը,
  - **լաբորատորիաների**, ինչպես նաև **բուժկետերի** համապատասխան սարքավորումներով ոչ լիարժեք կահավորումը,
  - **ներքին հարդարման** մեջ հետաքրքիր, նորարարական, ուսուցանող տարրերի բացակայությունը:

### Մոնիտորինգի հիմնական առաջարկությունները՝

- Ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017թ. թիվ 12-Ն հրամանով սահմանված նորմերի նկատմամբ պարբերական վերահսկողությունը՝ կառավարության ենթակա տեսչական մարմինների կողմից:
- Ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 06.06.2014թ. թիվ 32-Ն հրամանով սահմանված հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների մենդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջների, սանիտարական կանոնների և նորմերի նկատմամբ վերահսկողությունը:
- Համալրել դպրոցների բուժկետերը ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017թ. թիվ 12-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված համապատասխան դեղորայքով և պարագաներով:
- Ապահովել ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից դպրոցի աշակերտների ամենամյա զննումների պատշաճ իրականացումը ըստ ՀՀ առողջապահության նախարարի 09.04.2013թ. թիվ 874-Ա հրամանի հավելված 2-ի սահմանված ծավալների:
- Բոլոր դպրոցներում, անկախ աշակերտների թվից, ապահովել առնվազն մեկ բուժաշխատողի մշտական ներկայություն ողջ ուսումնական օրվա ընթացքում:

<sup>2</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=112989>

- Խմելու ջրի առկայության ապահովում դպրոցներում, հատկապես այն համայնքներում, որտեղ բացակայում է խմելու ջուրը:
- Սահմանել առարկայական չափորոշիչներից բխող անհրաժեշտ սարքավորումների և նյութերի կազմը, ապահովել դպրոցները այդ կազմը ձեռք բերելու հնարավորությամբ՝ սահմանելով պարտադիր միջոցներ բյուջեում և ձեռք բերելու համար տարբեր՝ մասնագիտացված արտոնագրված մատակարարներ:
- Ապահովվել առանձնացված դասասենյակներ՝ ըստ առարկաների հագեցած ուսումնական և թեմատիկ նյութերով: Աշակերտների բնագիտական հմտությունները զարգացնելու, ինչպես նաև բնությանը մոտ լինելու նպատակով բուսականությունն ավելացնել դպրոցներում:
- Դպրոցներն ապահովել առարկայական չափորոշիչից բխող համապատասխան մարզական գույքով:
- Դպրոցի ճաշարանների աշխատանքները բարելավելու նպատակով անհրաժեշտ է ավելացնել սննդի բազմազանությունը և թարմությունը, ինչպես նաև խստացնել սննդի նկատմամբ վերահսկողությունը: Ուսուցիչների և բարձր դասարանի (5-րդ դասարան և ավելի) երեխաների համար ստեղծել ճաշարանից օգտվելու պայմաններ, եթե դպրոցը ընդգրկված է «դպրոցական սնունդ» ծրագրում և կա գործող ճաշարան:
- Դպրոցների ներքին հարդարանքում կիրառել հետաքրքիր, նորարար լուծումներ:
- Հիմնանորոգվող, վերանորոգվող դպրոցների ցանկերի որոշման գործընթացը դարձնել առավել թափանցիկ, մասնակցային և հստակ չափանիշների վրա հիմնված:
- Ուսումնասիրել մարզերում ավագ դպրոցների ընտրության կարգը և տեղաբաշխել դպրոցների շենքերը՝ ըստ աշակերտների թվի:
- Աշակերտների պարտադիր որակյալ գնումների ապահովման նպատակով խստացնել բուժգնումների նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև, որոշ դեպքերում, շարժական լաբորատորիաների միջոցով ստուգումներ իրականացնել դպրոցներում:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետ համատեղ ԱՄՆ ՄԶԳ օժանդակությամբ «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում իրականացրել է ՀՀ հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական և սանիտարահիգիենիկ պայմանների մոնիտորինգ: Մոնիտորինգի շրջանակներում տվյալների հավաքագրումն իրականացվել է մարզային Քաղաքացիական երիտասարդական կենտրոնների (ՔԵԿ) ակտիվ երիտասարդական խմբերի կողմից, որոնք անցնել են հատուկ մեթոդաբանական դասընթաց: Տվյալների հավաքագրման գործիքների մշակումը, տվյալների հավաքագրման գործընթացի մասնագիտական վերահսկումը և տվյալների վերլուծությունը և սույն հաշվետվության մշակումն իրականացրել է Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը:

Հետազոտության դաշտային աշխատանքները իրականացվել են 2018թ. մայիս ամսին: Նախնական արդյունքների շուրջ իրականացվել են հանրային քննարկումներ բոլոր 10 մարզերում՝ 2019թ. փետրվար-մարտ ամիսներին: Մինչ հրապարակումը զեկույցը ներկայացվել է նաև Կրթության գիտության նախարարությանը դիտարկումների համար: Ստացված պատասխանն առ այն, որ նախարարությունը որևէ դիտարկում չունի ներկայացված է հավելված 5-ում:

Հաշվետվությունը ներկայացնում է ուսումնասիրված դպրոցների սանիտարահիգիենիկ պայմանների, նյութատեխնիկական ապահովվածության, անհրաժեշտ գույքի առկայության և դպրոցների այլ պայմանների առկա վիճակի վերլուծությունը, ինչպես նաև այդ պայմանների վերաբերյալ ուսուցիչների և աշակերտների գնահատականները:

## Մոնիտորինգի մեթոդաբանության տեսական հիմքերը

Դպրոցական հարմարությունների (school facilities) հետ կապված բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են հարմարության պահպանումը, դրանց վաղեմությունը, ջերմային մթնոլորտը, օդափոխությունը, ակուստիկ միջավայրը, դասասենյակների լուսավորության չափը և տեսակը, մաքրությունը, տեխնոլոգիաների առկայությունը և բավականաչափ ուսումնական նյութերն ու ռեսուրսները արագորեն թողնում են իրենց ազդեցությունը ուսումնական միջավայրի համարժեքության վրա:<sup>3</sup>

Ուսանողների կրթական արդյունքների և դպրոցի հարմարությունների միջև փոխկապվածությունը ուսումնասիրվել է մի շարք հետազոտողների, մասնավորապես, Լեմաստերի կողմից: Ըստ հեղինակի ուսումնասիրությունի, սովորողները նոր հարմարությունների դեպքում ավելի բարձր միավորներ են ձեռք բերում (Lemasters, 1997): Լեմաստերը գտնում է, որ դպրոցի հարմարությունները ազդում են նաև ուսուցիչների ակադեմիական աշխատանքի վրա (Lemasters, 1997):<sup>4</sup>

Դպրոցի ջեռուցումը, օդափոխության և օդորակման հարմարությունները ևս կարևոր են հարմարավետ դասավանդման և ուսուցման համար (Baum, 2004):<sup>5</sup>

Ջեռազոտողների մեկ այլ խումբ ընդգծել է ուսումնական միջավայրում նախատեսված նստարանների, դասասենյակի չափերի, դռների և պատուհանների դասավորության, էլեկտրականության, ձայնային էֆեկտների, լուսավորման համակարգի, ջերմաստիճանի և օդափոխության, գունավոր և սպիտակ գրատախտակների կարևորությունը ուսուցման գործընթացի համար:<sup>6</sup>

Դպրոցի արդյունավետ գործունեության համատեքստում դպրոցական հարմարությունների չափանիշները նկարագրվել են նաև Մարկ Շնեյդերի կողմից. դրանք են՝

1. Դպրոցում օդի որակը
2. Օդափոխման և ջեռուցման հարմարությունները
3. Լուսավորությունը
4. Ակուստիկան
5. Դպրոցի չափերը և դասավորվածությունը (configuration)
6. Շենքի որակը:<sup>7</sup>

Մարկ Շնեյդերը մեջբերում է բազմաթիվ հետազոտություններ, որոնք հիմնավորում են այս պայմանների ազդեցությունը կրթական արդյունքների և աշխատանքի որակի վրա:

Դասասենյակներում աշակերտների նստարանների դասավորվածությունը, տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում ևս կարևոր գործոններ են երեխաների մոտ խմբային աշխատանքի, համագործակցության, արդյունավետ հաղորդակցության և այլ հմտությունների ձևավորման համար: Ջեռազոտողների մի խումբ որպես կրթական արդյունքների ձեռքբերման վրա ազդող գործոններ ընդգծում են ավելի շատ դասասենյակների դասավորվածությունը, դասարաններում բաց տարածքների առկայությունը, գրքերի, ուսումնական նյութերի առկայությունը:

<sup>3</sup> Morris Jr., R. (2003). The relationships among school facility characteristics, student achievement, and job satisfaction levels among teachers. Unpublished doctoral dissertation, University of Georgia, Athens

<sup>4</sup> Նույն տեղում

<sup>5</sup> Baum, S. Howell. (2004). "How communities can use research to hold school system accountable", *The Urban Review*. 36(1): 37-59.

<sup>6</sup> Joseph, D.C. and J.C. Michael. (2001). *Time saver standards for building types*. New York: McGraw-Hill.

<sup>7</sup> Mark Schneider, "Do School Facilities Affect Academic Outcomes?", November 2002

«... Միջավայրի դասավորվածությունը, որը հարմար է մեծահասակների համար, կարող է լիովին սխալ դասավորում լինել երեխաների համար, ովքեր հաճախ նախընտրում են օգտագործել տարածքը (հատակը) հորիզոնական ձևով»:<sup>8</sup>

Ըստ հեղինակի, դասասենյակում դատարկ տարածություն ունենալը ևս կարևոր է: 2003թ. կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ տարրական դասարաններում բաց տարածքի մեծությունը ազդել է գիտության ոլորտում աշակերտների կրթական արդյունքների բարձր մակարդակի վրա:<sup>9</sup>

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից 2005-2006թթ. մշակված [«Երեխային հարմար դպրոց»](#) [ձեռնարկը](#) ևս ամփոփում է այն հիմնական չափանիշները, որոնց պետք է համապատասխանեն դպրոցները՝ յուրաքանչյուր երեխայի ներուժի լիարժեք բացահայտման նպատակով անհրաժեշտ միջավայր ստեղծելու համար:<sup>10</sup>

Ըստ այդ ձեռնարկի, երեխաների զարգացման համար կան երեք տարրեր, որոնք կարևոր են երեխային հարմար դպրոցի դիզայնի առումով. դրանք են՝ անվտանգությունը, առողջությունը, սնուցումը:

Ձեռնարկում ներկայացված են այն հիմնարար չափանիշները, որոնց հիման վրա պետք է պլանավորել և նախագծել դպրոցները:

1. Դպրոցի կառուցվածքը
2. Աղմինիստրատիվ գրասենյակները
3. Անվտանգ ջուրը
4. Հիգիենայի պայմանները
5. Սանհանգույցները
6. Լույսը, օդը, արևը, փոշին, արտացոլանքը, խոնավությունը, աղմուկը, հոտը
7. Գույները
8. Էներգիան՝ Էլեկտրաէներգիան կամ այլընտրանքայինը
9. Անվտանգության պայմանները
10. Առողջապահական պայմանները
11. Գրադարանը
12. Կանաչապատումը

Այս դրույթները ներկայացված են որպես հիմնական, և կան նաև հավելյալ բաղադրիչներ. դրանք են՝

1. Ճկուն տարածքները
2. Դպրոցական գրադարանը և ռեսուրս սենյակը
3. Լոգարանները
4. Դասասենյակներին մոտ հանգստի սենյակը
5. Անհատական սենյակները
6. Բաց տարածքները
7. Խոհանոցը
8. Բուժկետը
9. Պաշտպանական միավորը

<sup>8</sup> Edward Duncanson, Ed.D., Western Connecticut State University, Janice Volpe, Ed.D. Western Connecticut State University, Charles Achilles, Ed.D., Seton Hall University, "A Case Study: Natural Outcomes of Creating Classroom Space", National Forum Of Educational Administration And Supervision Journal Volume 26, Number 4, 2009

<sup>9</sup> Նույն աղբյուրը

<sup>10</sup> [Child friendly school](#), UNICEF, [16.02.2018]

### ՀՀ օրենսդրական կարգավորումները

Հայաստանում դպրոցների նյութատեխնիկական պայմանները կարգավորվում են մի շարք իրավական ակտերով.

- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք<sup>11</sup>
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք<sup>12</sup>
- «ՊՈԱԿ-ների մասին» ՀՀ օրենք<sup>13</sup>
- «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ, սանիտարական կանոններ և նորմեր» ՀՀ ԱՆ հրաման<sup>14</sup>
- «Պետության կողմից երաշխավորված անվճար արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ ԱՆ հրաման<sup>15</sup>
- «Նախադպրոցական կամ հանրակրթական ուսումնական հաստատության բուժկետ/կաբինետի անհրաժեշտ դեղերի ել բժշկական նշանակության ապրանքների ցանկ» ՀՀ ԱՆ հրաման<sup>16</sup>
- Կրթական չափորոշիչներ, որոնցում սահմանված են յուրաքանչյուր առարկայի բովանդակության ապահովման համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանները:

<sup>11</sup> [ՀՀ օրենքը «Լիցենզավորման մասին»](#), ընդունված 08.12.2010թ.

<sup>12</sup> [ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին»](#), ընդունված 10.07.2009թ.

<sup>13</sup> [ՀՀ օրենքը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»](#), ընդունված 23.10.2001թ.

<sup>14</sup> [«Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ, N 2.2.4-016-17 սանիտարական կանոններ և նորմեր» ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն](#), 28.03.2017թ.

<sup>15</sup> [«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 70-Ն](#) 01.11.2013թ.

<sup>16</sup> [«Նախադպրոցական կամ հանրակրթական ուսումնական հաստատության բուժկետ/կաբինետի անհրաժեշտ դեղերի ել բժշկական նշանակության ապրանքների ցանկ» ՀՀ առողջապահության նախարարի հրաման N44-Ն](#) հավելված 1, 31.07.2015թ.

**Մոնիտորինգի նպատակը, խնդիրները**

Հայաստանում դպրոցների նյութատեխնիկական պայմանների մոնիտորինգը իրականացվել է երկու հիմնական ուղղությամբ և տրամաբանությամբ.

**Առաջին ուղղություն.** Որքանով են դպրոցների պայմանները համապատասխանում ՀՀ օրենսդրական և իրավական կարգավորումներին և դրանցում առկա չափանիշներին և չափորոշիչներին, ինչը հիմք կծառայի կրթության կազմակերպման բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթի մշակման համար:

**Երկրորդ ուղղություն.** Որքանով են դպրոցների պայմանները համապատասխանում լավագույն փորձին առնչվող հետազոտությունների տեսական մոտեցումներին և դրանցում առկա չափանիշներին, ինչը հիմք կծառայի օրենսդրական վերլուծությունների իրականացման և օրենսդրական առաջարկությունների փաթեթի մշակման համար:

Մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ դպրոցների նյութատեխնիկական պայմանները, սանիտարահիգիենիկ պայմանները, մասնավորապես, մոնիտորինգի հիմնական խնդիրներն են՝ պարզել՝

- հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների բուժսպասարկման առկա վիճակը,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների ապահովվածությունը անհրաժեշտ կրթական նյութերով և պարագաներով՝ դասագիրք, գրականություն, ուսումնական ձեռնարկ, դիդակտիկ նյութեր, լաբորատոր նյութեր և սարքավորումներ,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների ապահովվածությունը անհրաժեշտ ենթակառուցվածքներով և սարքավորումներով՝ համակարգիչներ, գրադարան, համացանց, լաբորատորիաներ, բուժկետ, ճաշարան, դասասենյակներ, ուսուցչանոց, մարզադահլիճներ,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների ապահովվածությունը կոմունալ-կենցաղային, սանիտարահիգիենիկ պայմաններով՝ ջեռուցում, ջրամատակարարում, լուսավորություն, էլեկտրաէներգիա, մաքրություն,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին հարդարանքի առկա վիճակը՝ կահավորում, լուսավորություն, գունային ընտրություն,
- ինչպես են ազդում հանրակրթական ուսումնական հաստատությունների պայմանները երեխաների կրթական արդյունքների, ինչպես նաև ուսուցիչների աշխատանքային արդյունավետության վրա:

Այս խնդիրների պարզաբանման հիմքում կլինեն ինչպես կրթական արդյունքների և աշխատանքային արդյունավետության վերաբերյալ փաստացի տվյալներ, այնպես էլ ուսուցիչների և աշակերտների սուբյեկտիվ ընկալումները և բավարարվածությունը պայմաններից:

Այս հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքում նախատեսված է մշակել առաջարկությունների փաթեթ՝ ուղղված կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունների պայմանների և այդ պայմանները կարգավորող օրենսդրական և իրավական կարգավորումների բարելավմանը:



## Տեղեկատվության ստացման մեթոդները

Այս խնդիրների ուսումնասիրության նպատակով կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ աղբյուրները և մեթոդները՝

- Հարցման մեթոդ

Ստանդարտացված հարցազրույցներ **ուսուցիչների** շրջանում ([Հավելված 1](#))՝ պարզելու համար, թե որքանով են նրանք գոհ դպրոցի պայմաններից և որքանով է կրթական միջավայրը ազդում նրանց աշխատանքի արդյունավետության վրա:

Խմբային անկետավորում **աշակերտների** շրջանում ([Հավելված 2](#))՝ պարզելու համար, թե որքանով են նրանք գոհ դպրոցի պայմաններից և որքանով է կրթական միջավայրը ազդում նրանց կրթական արդյունքների և առաջադիմության վրա:

- Փաստաթղթերի վերլուծություն

Իրականացվել է նախկին հետազոտությունների, դպրոցների գործունեությանն առնչվող և կրթական գործընթացի կարգավորման վերաբերյալ իրավական փաստաթղթերի վերլուծություն, ինչպես նաև դպրոցների ներքին գնահատման հաշվետվությունների բովանդակային վերլուծություն:

Իրականացվել է դպրոցի տնօրեններին ուղղված գրավոր հարցման ([Հավելված 3](#)) պատասխանների բովանդակային վերլուծություն: Այդ հարցման միջոցով փորձ է արվել պարզելու դպրոցի նյութատեխնիկական պայմանների վերաբերյալ փաստացի տվյալներ, ինչպես նաև այդ պայմանների պահպանմանն ու բարելավմանն ուղղված միջոցները:

- Դիտարկում

Դպրոցների պայմանների անմիջական ուսումնասիրման նպատակով իրականացվել է ձևայնացված չընդգրկված դիտարկման մեթոդը համապատասխան դիտարկման քարտի միջոցով ([Հավելված 4](#)): Դիտարկման քարտի լրացմանը զուգահեռ իրականացվել է որոշ պայմանների լուսանկարում ըստ դիտարկման քարտի ցուցումների: Դիտարկման վրա կողմնակի գործոնների ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով կիրառվել են հետևյալ սկզբունքները՝ գաղտնի դիտարկում և/կամ պատահական/հանկարծակի դիտարկում՝ հնարավորության դեպքում:

Արդյունքների վալիդացիա

Բոլոր 10 մարզերում հանրային քննարկումների միջոցով իրականացվել է մոնիտորինգի արդյունքների ճշգրտում:

## Հետազոտության ընտրանքը

### Դպրոցների ընտրանք

Հետազոտությունն իրականացվել է ընդհանուր թվով 50 դպրոցում, ներառվել են՝

- մարզկենտրոնի 1 դպրոց,
- մարզի այլ քաղաքների 2 դպրոց,
- մարզի գյուղական 2 դպրոց:

Դպրոցների ընտրանքի համար հիմք են ծառայել հետևյալ չափանիշները՝ ավագ, միջնակարգ, հիմնական դպրոց և աշակերտների թիվը: Քանի որ հետազոտությունը փորձելու է ստուգել հետևյալ վարկածը, որ գյուղական աշակերտների թվով փոքր դպրոցները խոցելի են նյութատեխնիկական պայմանների տեսանկյունից, գյուղական դպրոցների ընտրության հիմքը նպատակաուղղված ընտրանքի մեթոդն է՝ ընտրվել են մարզի ամենափոքր և ամենամեծ գյուղական դպրոցները՝ ըստ աշակերտների թվի: Դպրոցներն ընտրվել են հետևյալ համամասնությամբ.

**Աղյուսակ 1. Դպրոցների ընտրանքն ըստ դպրոցի տեսակի**

	N	%	n	Ընտրանք/դպրոցների թիվ
Ավագ դպրոցներ	94	7	4	4
Հիմնական դպրոցներ	446	33	16	23
Միջնակարգ	824	60	30	23
Ընդամենը	1364	100	50	50

Քանի որ քաղաքային համայնքներում միջնակարգ դպրոցները սակավաթիվ են, իսկ գյուղական համայնքներում նպատակահարմար չէ ընտրել միայն միջնակարգ դպրոցներ, հիմնական և միջնակարգ դպրոցների թիվը հավասարաչափ է բաշխվել: Արդյունքում 7 միջնակարգ դպրոցի փոխարեն ընտրվել է 7 հիմնական դպրոց:

Դպրոցների ընտրությունը իրականացվել է պատահականության սկզբունքով.

1. Ընտրվել է 1-ական դպրոց մարզկենտրոններից՝ պատահական թվերի բանաձևի միջոցով (RAND)
2. Ընտրվել են 2-ական դպրոց այլ քաղաքներից՝ պատահական թվերի բանաձևի միջոցով (RAND)<sup>17</sup>
3. Նույն քաղաքում երկու դպրոց չի ընտրվել: Այսինքն՝ մենք ունենք դպրոցներ 50 տարբեր համայնքներից:

**Աշակերտների ընտրանք**

Մոնիտորինգի շրջանակներում աշակերտների շրջանում իրականացվող հարցումների համար կիրառվել է սիստեմատիկ ընտրանքի մեթոդը: Միավոր դպրոցում թիրախային տարիքի աշակերտների թիվը բաժանվել է այդ դպրոցում նախատեսված հարցումների թվի վրա՝ որոշելու ընտրանքի քայլը:

Հարցումն իրականացվել է ընդհանուր թվով 637 աշակերտի շրջանում՝ ապահովելով 4% վստահության միջակայք և 95% վստահության մակարդակ: Հարցմանը մասնակցել են 7-րդ և բարձր դասարանի աշակերտները: Հարցմանը մասնակցած աշակերտների ծնողները տեղեկացվել են մոնիթորինգի նպատակների և ընթացքի վերաբերյալ և սովել են իրենց համաձայնությունը:

Ընդ որում, հարցմանը մասնակցել են 7-րդ և բարձր դասարանի աշակերտները՝ պայմանավորված ավելի ցածր դասարանի աշակերտների տարիքային առանձնահատկություններով և ուսումնական պլանի համեմատաբար թեթև ծանրաբեռնվածությամբ:

**Ուսուցիչների ընտրանք**

Մոնիտորինգի շրջանակներում ուսուցիչների շրջանում իրականացվող հարցումների համար կիրառվել է քվոտային ընտրանքի մեթոդը: Ուսուցիչների ընտրանքային համախմբությունը ներկայացվել է ըստ գլխավոր համախմբության մեջ ուսուցիչների բաշխվածության՝ հիմք ընդունելով դասավանդվող առարկաները: Ընդ որում, առարկաները բաշխվել են ըստ հանրակրթության պետական չափորոշիչով

<sup>17</sup> 2016-2017 ուսումնական տարում ՀՀ-ում գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ

սահմանված հիմնական 9 ուսումնական բնագավառների, և յուրաքանչյուր դպրոցում ուսուցիչների ընտրանքային համախմբության մեջ պահպանվել է այս բոլոր բնագավառներից ներկայացվածությունը՝

1) հայոց լեզու, գրականություն. 2) օտար լեզուներ. 3) մաթեմատիկա. 4) տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ (այսուհետ՝ ՏՀՏ), համակարգչային գիտություններ. 5) բնություն, բնական գիտություններ. 6) հասարակություն, հասարակական գիտություններ. 7) արվեստ. 8) տեխնոլոգիա. 9) ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

### **Չեռագրտության սահմանափակումներ**


Դիտարկման մեթոդը կիրառվել է ընտրանքով նախատեսված 50 դպրոցներից 44-ում: Մյուս 6 դպրոցների համապատասխան տեղեկատվությունը համալրվել է դպրոցների տնօրենների կողմից լրացված հարցաթերթերի պատասխանների հիման վրա: Հաշվետվության մեջ դպրոցների քանակի հետ կապված որոշ անհամապատասխանությունները, ինչպես նաև բացակայող այլ տեղեկատվությունը պայմանավորված են հետևյալ պատճառներով.

- Դիտարկվում իրականացվել է 50 դպրոցներից 44-ում
- Որոշ հարցերի պատասխաններ չեն ստացվել, քանի որ հարցվողները դժվարացել են պատասխանել:


**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

ՀՀ հանրակրթական դպրոցների ծառայությունների որակի, հանրային միջոցների օգտագործման սույն մոնիտորինգն իրականացվել է ՀՀ մարզերի 50 դպրոցներում, յուրաքանչյուր մարզից ներառվել են հինգական դպրոց (Հավելված 5):

Հետազոտության մեջ ներգրավված դպրոցներից 10-ում սովորում է մինչև 50 աշակերտ: Դպրոցների տնօրենների կողմից աշակերտների և ուսուցիչների թվի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև:




Հետազոտությանը մասնակցել է 637 աշակերտ, որից 45%-ը աղջիկներ են, իսկ 55%-ը տղաներ: Հարցված աշակերտների սեռատարիքային բաշխումը ներկայացված է ստորև.




Հետազոտությանը մասնակցել է 316 ուսուցիչ՝ 17%-ը արական սեռի, 83%-ը՝ իգական: Ուսուցիչների սեռատարիքային բաշխումը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

**Գծապատկեր 3. Հարցված ուսուցիչների սեռատարիքային բաշխումը (N)**




Ուսուցիչների 67%-ը դասավանդում է 1 առարկա, իսկ 33%-ը երկուսից ավելի: Ուսուցիչների բաշխումն ըստ դրույթաչափերի ներկայացված է ստորև:

**Գծապատկեր 4. Հարցված ուսուցիչների դրույթաչափերը ուսումնասիրված դպրոցներում**



Գծապատկեր 5-ում տեսնում ենք, որ հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 67%-ն ունի 16 տարուց ավելի ընդհանուր մանկավարժական ստաժ, իսկ հարցվածների 27%-ը 26 տարուց ավելի դասավանդում է միևնույն դպրոցում:


**Գծապատկեր 5. Հարցված ուսուցիչների մանկավարժական ստաժը**



Ուսուցիչների 94%-ը աշխատում է միայն մեկ դպրոցում, իսկ 6%-ը՝ նաև այլ դպրոցում: Միաժամանակ, ուսուցիչների 19%-ը մասնավարժությունից բացի ունի նաև այլ զբաղվածություն: Ուսուցիչների 68%-ը անժամկետ պայմանագիր է կնքել իրենց ներկայիս դպրոցների հետ, 25%-ն աշխատում է որոշակի ժամկետով, իսկ 6%-ը՝ դժվարացել է նշել ժամկետը:

Ուսուցիչների 95%-ը բարձրագույն կրթություն ունեն: Ուսուցիչների բաշխումն ըստ իրենց կողմից դասավանդվող առարկաների (առարկաների խմբավորված տարբերակների) ներկայացված է ստորև:

**Գծապատկեր 6. Հարցված ուսուցիչների բաշխումն ըստ դասավանդվող առարկաների (%)**




Ուսուցիչների բաշխումն ըստ մասնագիտությունների և դասավանդված առարկաների ներկայացված է հավելվածում ([Աղյուսակ 14](#)):

Հետազոտությանը մասնակցած ուսուցիչները նաև պատասխանել են իրենց եկամուտներին վերաբերող հարցերի: Մասնավորապես, ուսուցիչների 63%-ի եկամուտն առանց հարկերի կազմում է 50000-100000 ՀՀ դրամ, 20%-ը ստանում է 50000 ՀՀ դրամից պակաս, 14%-ը՝ 100001-150000 և ընդամենը 2%-ն է ստանում 150000-ից ավելի:

Հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 28%-ը նշել են, որ իրենց ընտանիքում մեծագույն գումար են սակայն դժվարանում են հագուստի գնման հարցում, մինչդեռ աշակերտների ընդամենը 2%-ն է այդպես նշել:


**Գծապատկեր 7. Տվյալ դատողություններից ո՞րն է առավել լավ բնորոշում ձեր ընտանիքի ֆինանսական դրությունը: (%)**



Գծապատկեր 7-ից տեսնում ենք, որ ըստ հարցվածների պատասխանների, աշակերտների ընտանիքները համեմատաբար առավել բարեկեցիկ են, քան ուսուցիչների ընտանիքները: Պետք է, սակայն, հաշվի առնել այն հանգամանքը, որ շեղումը չի կարող այսօրվա մեծ լինել, և որ աշակերտների մի մասը կարող է անկեղծ չլինել այս հարցին պատասխանելիս: Միևնույն ժամանակ, եթե հաշվի առնենք, որ ուսուցիչների մեծամասնությունը ստանում է մինչև 50000 ՀՀ դրամ աշխատավարձ, ընտանիքի ֆինանսական դրության մասով նրանց պատասխանները կարելի է համարել օրինաչափ:

Երեխաների կրթական արդյունքների և ուսուցիչների աշխատանքային արդյունավետության վրա հանրակրթական ուսումնական հաստատությունների պայմանների ազդեցությունը պարզելու նպատակով հետազոտության ընթացքում իրականացվել է հարցվողների սուբյեկտիվ ընկալումների և պայմաններից բավարարվածության վերլուծություն: Դպրոցի պայմանների սուբյեկտիվ գնահատմանը զուգընթաց հետազոտության ընթացքում իրականացվել է այդ պայմանների դիտարկում: Այս բաժնում ներկայացված են դպրոցի կոմունալ-կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանների դիտարկման և հարցվողների կարծիքների համեմատական վերլուծությունը:

**Գծապատկեր 8. Հիմնականում հաճույթով եք դպրոց գալիս/ դպրոց գալիս աշխատանքի: (%)**



Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 8**-ից, հետազոտությանը մասնակցած թե՛ աշակերտների, թե՛ ուսուցիչների մեծամասնությունը նշել են, որ հաճույթով են դպրոց գալիս: Պետք է նկատել, սակայն, որ եթե ուսուցիչների 84%-ն է միանշանակ այո պատասխանել «հիմնականում հաճույթով եք դպրոց գալիս հարցին», ապա աշակերտների 64%-ն է այդպես նշել: Միևնույն ժամանակ, աշակերտների 8%-ն է նշել, որ հաճույթով չի գալիս դպրոց, իսկ ուսուցիչների ընդամենը 3%-ը: Ինչպես տեսնում ենք, արդեն իսկ այս հարցի

պատասխանները թույլ են տալիս ենթադրել, որ աշակերտները և ուսուցիչներն ունեն տարբեր զգացողություններ՝ կապված դպրոց հաճախելու հետ: Դպրոց հաճախելու հետ կապված զգացողությունների, աշակերտների և ուսուցիչների ինքնազգացողության, աշակերտների առաջադիմության և ուսուցիչների աշխատանքային մոտիվացիայի վրա կարող են ազդել մի շարք գործոններ: Այդ գործոնների շարքում են դպրոցի կոմունալ-կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանները:

Մարզային քննարկումները վեր հանեցին դպրոցի պայմանների և աշակերտների առաջադիմության և ուսուցիչների աշխատանքային մոտիվացիայի միջև կապի նոր հորիզոններ: Այսպես, ըստ դպրոցական համայնքի ներկայացուցիչների, դպրոցների պայմանների անկատարությունը հաճախ բացասաբար է ազդում աշակերտների վարվեցողության, դպրոցական գույքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի վրա:

*Երեխան եթե տեսնում է, որ իր շրջապատը իդեալական չի, էլ չի մտածում զգուշ վարվի, մտածում է՝ մեկ է արդեն փչացած է:*

**Դպրոցի տնօրեն**


Պետք է նաև փաստել, որ կան որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են հարցվողների բնակության վայրով (քաղաք, գյուղ), մարզով կամ այլ գործոններով: Թեպետ հետազոտության մասնակիցների թիվը թույլ չի տալիս վիճակագրական հուսալի վերլուծություն իրականացնել մարզային մակարդակով, այնուամենայնիվ, որոշակի միտումներ կարող ենք նկատել:



Մասնավորապես, Գեղարքունիքի մարզի դպրոցներում սովորող աշակերտներն ավելի հաճույքով են դպրոց գնում (98%-ը նշել է, որ հաճույքով է գնում), քան մյուս մարզերի աշակերտները, իսկ Արմավիրի մարզի աշակերտներն ավելի քիչ հաճույքով են գնում (87%-ն է նշել, որ հաճույքով է գնում): (Գծապատկեր 9)


Հետազոտությանը մասնակցած աշակերտները և ուսուցիչները պատասխանել են կոմունալ-կենցաղային, սանիտարահիգիենիկ և այլ պայմաններին վերաբերող հարցերին:

**Գծապատկեր 9. Հիմնականում հաճույքով ե՞ք դպրոց գալիս/ դպրոց գալիս աշխատանքի, ըստ մարզերի: (%)**



Մասնավորապես, հետազոտության մասնակիցները պատասխանել են դպրոցում և դպրոցի հարակից տարածքում որոշակի հոտերի առկայությանը վերաբերող հարցերի: Եթե ուսուցիչների 66%-ն է կարծում, որ դպրոցում և հարակից տարածքում օդը մաքուր է, ապա այդպես է կարծում աշակերտների 80%-ը: Խնդիրը պայմանավորված է նաև դպրոցներում օդափոխության համակարգի բացակայությամբ: Հայաստանում դպրոցների հիմնական մասը տիպային շենքեր են, որտեղ օդափոխության համակարգ նախագծված չէ: Այդ մասին բարձրաձայնվեց նաև մարզային քննարկումների ժամանակ:

**Գծապատկեր 10. Դպրոցում առկա՞ են հետևյալ հոտերը: (%)**




Դպրոցում և/կամ դպրոցին հարող տարածքում ծխելու վերաբերյալ հարցին դրական է պատասխանել աշակերտների 42%-ը և ուսուցիչների 28%-ը: Ինչպես տեսնում ենք, պատկերը բավական մտահոգիչ է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ միայն ծխախոտի հոտը, այլև տվյալ միջավայրին ոչ բնորոշ հոտերը կարող են բացասաբար ազդել երեխաների ինքնազգացողության վրա, իսկ որոշ դեպքերում նաև կրթական գործընթացի վրա: Գծապատկեր 10-ում մենք տեսնում ենք, թե աշակերտների և ուսուցիչների կարծիքով ինչ հոտեր են առկա դպրոցում: Աշակերտների և ուսուցիչների կարծիքով ամենատարածված հոտերից մեկը սնդի հոտն է: Հատկանշական է, որ աշակերտների 62%-ն է նշել, որ օծանելիքի հոտ է զգում դպրոցում, իսկ ուսուցիչների ընդամենը 10%-ը: Ծխախոտի հոտի առկայության մասին նույնպես նշել է աշակերտների համեմատաբար ավելի մեծ տոկոսը, քան ուսուցիչների: Իսկ

հեղուկ վառելիքի հոսի առկայության մասին ավելի շատ մատնանշում են ուսուցիչները, քան աշակերտները: Խնդիրը ոչ միայն վառելիքի օգտագործմամբ է պայմանավորված, այլ նաև հեղուկ վառելիքով դպրոցների հասակը մշակելու «հին ավանդույթով»:

Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 11**-ից, ուսուցիչները համեմատաբար ավելի դժգոհ են (31%) դպրոցի շենքային պայմաններից, քան աշակերտները (14%): Մյուս բոլոր դեպքերում աշակերտները շատ ավելի դժգոհ են պայմաններից, քան ուսուցիչները: Մարզային քննարկումները փաստեցին, որ ուսուցիչների կողմից դրական գնահատականների տարածվածությունը պայմանավորված է դպրոցը ավելի լավ լույսի ներքո ներկայացնելու ցանկությամբ:

**Գծապատկեր 11. Որքանով եք գոհ դպրոցի հետևյալ պայմաններից: (%)**



Մասնավորապես, ուսուցիչների ընդամենը 13%-ն է դժգոհ սանհանգույցների մաքրությունից, իսկ աշակերտների 41%-ն է դժգոհ: Այստեղ ակնհայտ տարբերություն ենք տեսնում: Փորձենք պարզել գնահատականների տարբերության պատճառները՝ համադրելով դիտարկման արդյունքների հետ:

**Նկարներ ուսումնասիրված դպրոցներից**




Դպրոցների շենքային պայմանների բարեկարգման վերաբերյալ մոտեցումները հստակ չեն, դրա մասին վկայեցին նաև մարզային քննարկումները: Ըստ ընդունված պրակտիկայի, յուրաքանչյուր տարվա հիմնաստորոգվող/վերանորոգվող դպրոցների ցանկը որոշվում է մարզպետարանների աշխատակիցների համապատասխան գնահատումների, ստուգայցերի միջոցով, սակայն քննարկումների ժամանակ հնչեցին նաև տարակարծություններ միասնական սկզբունքի բացակայության, որոշակի կամայական

մոտեցման կիրառման վերաբերյալ: Յնչեցին կարծիքներ այն մասին, որ կան դպրոցներ, որոնք վերանորոգվել են մի քանի անգամ վերջին 10 տարիների ընթացքում, իսկ կան դպրոցներ, որտեղ բացակայում են նվազագույն պայմանները, կամ նույնիսկ դպրոցի շենքը գտնվում է վթարային վիճակում:

*Ընտրության սկզբունքի (հիմնանորոգվող/վերանորոգվող դպրոցների) վերաբերյալ ես մի փոքրիկ օրինակ բերեմ: Մարտունու դպրոցներից մեկը, որն ամենաուշը կառուցվել էր երկու տարի առաջ, տնօրենը դիմել էր էլի շինարարություն անելու համար: Պատկերացնում եք ինչ է լինելու: Դպրոցներ են լինելու, որ հերթն էդպես էլ չի հասնի:*

**Դպրոցի տնօրեն**

**Գծապատկեր 12. 2016-2017 ուս.տարում Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն ըստ շենքերի վիճակի<sup>18</sup>**



Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 12**-ից, մարզերի **339 դպրոց կարիք ունի հիմնանորոգման**, իսկ **219-ը՝ ընթացիկ սորոգման**:

Դիտարկման արդյունքների համաձայն այցելած բոլոր դպրոցներն ունեն սանհանգույց, ընդ որում, դպրոցներից 42-ում սանհանգույցը գտնվում է դպրոցի շենքի ներսում, իսկ 2-ում՝ դրսում: Դպրոցներից 35-ում առկա է առանձնացված սանհանգույց ուսուցիչների համար, իսկ 9-ում ոչ: Ընդ որում, ուսուցիչների համար առանձնացված սանհանգույց ունեցող դպրոցներից 18-ում առկա է 1-ական նմանատիպ սանհանգույց, 11-ում՝ երկուական, 3-ում՝ երեքական, մյուս երեք դպրոցներում՝ 4 և ավելի:

Դիտարկված 44 դպրոցներից 42-ում առկա են առանձնացված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար: Դպրոցներում տղաների և աղջիկների համար առանձնացված սանհանգույցների քանակը հիմնականում հավասարաչափ է բաշխված: Դիտարկված դպրոցներից 19-ում կա մեկական, 7-ում՝ երկուական, 9-ում՝ երեքական, իսկ 7-ում՝ չորս և ավելի առանձնացված սանհանգույց աղջիկների և տղաների համար: Դիտարկված դպրոցներից 25-ում (57%) սանհանգույցներն առկա են ամեն

<sup>18</sup> Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2016-2017 ուստարվա վիճակագրական տվյալները, ԿՏԱԿ, <https://lib.amedu.am/resource/26512>

հարկում, իսկ 19-ում (43%)՝ ոչ: Դիտարկված դպրոցների միայն կեսն ունի 1-4 դասարանների ուսումնական կառուցահատվածներում սանհանգույցներ:

Մարզային քննարկումների մասնակիցները բարձրաձայնեցին դպրոցում աշակերտների համար սանհանգույցների օգտագործման սահմանափակման վերաբերյալ՝ երբ աշակերտներին արգելվում է օգտվել դպրոցի սանհանգույցից կամ չի տեղադրվում որևէ պարագա՝ զուգարանի թուղթ, ձեռքերը չորացնող սարք, ձեռքերը լվանալու հեղուկ օճառ և այլն: Խնդիրն ունի մի քանի խորքային պատճառ՝ դպրոցի տնօրինությունը այդպես «կանխում է» սանհանգույցները հաճախ մաքրելու անհրաժեշտությունը, ինչպես նաև «կանխում է» աշակերտների կողմից սանհանգույցներում անկազույք վնասելու փորձերը: Ընդ որում, բոլոր մարզային քննարկումներում բարձրաձայնվեց աշակերտների կողմից դպրոցական գույքը գիտակցաբար վնասելու խնդիրը: Հատկանշական է, որ դպրոցական համայնքը խնդիրը տեսնում է ընտանիքում մատնանշելով նմանատիպ վարքի մոդելի ընդօրինակումը ընտանիքից: Հետևաբար, այս հարցի երկրորդ հետաքրքրական կողմը այն է, որ ուսուցիչների, տնօրենների մի մասը այս հարցի քննարկումը համարում է դպրոցի գործառույթների դուրս: Սակայն դպրոցական գույքը վնասելու վերաբերյալ, դա կանխելուն ուղղված դաստիարակչական, վերահսկման աշխատանքները պետք է և կարող են դառնալ դպրոցի գործառույթները: Որոշ դեպքերում տնօրենի հանձնարարությամբ դասղեկի ժամի ընթացքում նմանատիպ հարցերը դրվում են քննարկման, սակայն դա արվում է կոնկրետ դեպքի հետ կապված, սակայն ոչ կանխելու, դաստիարակելու նպատակով:

*Օրինակ մտնում ես սանհանգույց, զուգարանի թուղթը ամեն օր կախում ես: Դատկերացրեք մի օր այն կհանես զուգարանի մեջից կամ բաշտկից: Դասղեկներին համախմբեցի, ասեցի, որ սիրելի մեր դասղեկներ, խնդրում եմ դպրոցի մեր աշակերտներին ասեք՝ թե առաջին դասարան, թե իններորդ դասարան, սանհանգույցից օգտվելու կարգերը, ձևերը:*

**Դպրոցի տնօրեն, Տավուշ**

*Եթե տվյալ դպրոցը շենքային բոլոր պայմանները վերանորոգած լինի կապիտալ, ինչպես որ հարկն է, նույնիսկ ունիտազներ լինեն, որ երեխան մի հատ սեղմի ու էդ ամենը կատարյալ լինի և վերահսկողություն լինի, անընդհատ մեկին կանգնեցնենք, մի հավաքարար, որ անընդհատ թեկուզ էդ մշակույթը կձևավորվի ու կարվի: Կարծում եմ, որ դա անլուծելի չէ:*

**ՀԿ ներկայացուցիչ, Տավուշ**

Դպրոցական գույքի պահպանմանն ուղղված քննարկումը հանգեցրեց առհասարակ հանրային սեփականության նկատմամբ ձևավորված հասարակության վերաբերմունքի մասին քննարկման. չկա սեփականատիրական վերաբերմունք հանրային սեփականության նկատմամբ, ինչի արդյունքում դպրոցական գույքը չի պահպանվում մասնավորապես երեխաների կողմից, իսկ դպրոցը դրա հանդեպ հոգատար վերաբերմունքի, մշակույթի ձևավորումը չի համարում իր գործառույթը, պատասխանատվությունը ղնելով, բարդելով միայն ընտանիքի վրա:

*Ասեմ, իդեալական դպրոց ունեմ, սկի եվրոպայում չկա տեևց զուգարան ու բաղնիք: Մեր հասարակության մեջ ինչը ընդհանուր ա, ոչ մեկի սիրտը չի ցավում, որովհետև երեխան չի գիտակցում, որ դա իր դպրոցն է, իր զուգարանն է: Տանը համապատասխան դաստիարակություն չի ստանում:*


**Դպրոցի տնօրեն, Լոռի**

*Ինձ թվում ա և համացանցով, և խոսակցությունների մեջ և գլմներով, և հավաքներով բացառել, որ ոչ ոք իրավունք չունի ուսուցիչներին, դպրոցի աշխատակիցներին էնքան սևացնել, այ համաձայն եմ, որ պետք է աշխատանքներ տանել ծնողների հետ: Մեր վարկանիշը էնքանա գրոյացվել, որ արդեն դա տեղը տեղին խանգարում ա, այսինքն էսօր ծնողը-աշակերտը գիտի, որ թեկուզ առաստաղին ման գա էստղ կգանգեմ, թեժ գիծ կգանգեմ, էն կանեմ, դու նախկին թալանչի ես, դու նախկին ՀՀԿ-ական ես, դու էսօրվա թալանչի ես, դու չգիտեմ ինչ ես:*

**Դպրոցի տնօրեն, Լոռի**

Սանհանգույցների մաքրության և ընդհանուր վիճակի վերաբերյալ դիտարկման արդյունքները ներկայացված են **Գծապատկեր 13**-ում: Ինչպես տեսնում ենք, ընդհանուր վիճակը և մաքրությունը համանման գնահատականներ են ստացել:

**Գծապատկեր 13. Սանհանգույցների մաքրության և ընդհանուր վիճակի գնահատական, դիտարկման արդյունքներ (%)**




Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ուսուցիչները նույնպես մտահոգված են սանհանգույցների խնդրով. սանհանգույցների վիճակի բարելավումը որպես կարևոր պայման նշել է ուսուցիչների 58%-ը, իսկ աշակերտների դեպքում միայն 23%-ը:

Դպրոցներում սանհանգույցների վիճակի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար իրականացվել է նաև մի շարք պայմանների և պարագաների առկայության դիտարկումը (**Գծապատկեր 14**):

Մարզային քննարկումների ժամանակ տնօրենները բարձրաձայնեցին դպրոցական պայմանների բարելավմանն ուղղված գնումների ոչ ճկուն համակարգի մասին, մասնավորապես, գնումների ընթացակարգի համաձայն գնում կազմակերպելը չի երաշխավորում որակյալ ծառայության ստացումը: Արդյունքում, պատահում են դեպքեր, երբ տնօրենը դժգոհ է մնում ձեռք բերված ծառայությունից, սակայն չի ունենում լծակ, հնարավորություն հետագայում այդ ծառայությունից չօգտվելու, կամ էլ, օրինակ, հաճախ միևնույն կազմակերպությունն է դիմում գնումների հայտարարությանը:

**Գծապատկեր 14. Սանհանգույցներում առկա է... (N, դիտարկում)**



Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 14**-ում, դպրոցներում առավել մտահոգիչ խնդիրների շարքում են թղթյա սրբիչների, հեղուկ օճառների, զուգարանի թղթերի բացակայությունը, ինչպես նաև տհաճ հոտի առկայությունը:

Սանիտարահիգիենիկ կանոնների<sup>19</sup> համաձայն «Դպրոցի յուրաքանչյուր հարկում պետք է նախատեսվեն մաքրման պարագաների պահպանման և մշակման, ախտահանիչ լուծույթների պատրաստման օժանդակ սենյակներ»: Դիտարկման արդյունքները, սակայն, վկայում են այն մասին, որ այդ պայմանները պահպանվում են 44 դպրոցից ընդամենը 17-ում, 6 դպրոցում մաքրման պարագաները և գույքը պահվում են սանհանգույցում, 6-ում՝ աստիճանավանդակների տակ՝ պահարանում, մյուս դեպքերում՝ դպրոցի տարբեր սենյակներում: Որոշակի խախտումներ կան մաքրող պարագաների առկայությանն առնչվող: Մասնավորապես, զուգարանների, միջանցքների և դասասենյակների համար մաքրող պարագաները մակնշված են միայն 22 դպրոցում, սինթետիկ թելերով ավելներ առկա են միայն 12-ում, մյուս բոլոր պարանների դեպքերում իրավիճակը փոքր ինչ ավելի հուսադրող է:


**Աղյուսակ 2. Մաքրող պարագաների առկայությունը դպրոցում (N)**

	Այո	Ոչ
Դուլլեր	41	3
Թասեր	31	13
Խոզանակներ	40	4
Լաթեր	35	9
Մաքրող-ախտահանող նյութեր	34	10
Սինթետիկ թելերով ավելներ	12	32
Պարագաների մակնշում՝ զուգարանների, միջանցքների և դասասենյակների համար	22	22

Դիտարկման արդյունքների համաձայն որոշակի խնդիրներ կան նաև **ջրահեռացման** համակարգում. կեղտաջրերի հեռացում է իրականացվում դպրոցների 86%-ում, կեղտաջրերի կուտակման հորով զուգարան առկա է դպրոցների 48%-ում:

Ի տարբերություն սանհանգույցների վիճակի, վերջին տարիների ընթացքում որոշ չափով բարելավվել է դպրոցների **ջեռուցման** համակարգը: Այդ մասին են վկայում նաև հետազոտության արդյունքները. Ջեռուցումը՝ որպես բարելավման ենթակա պայման նշել է աշակերտների ընդամենը 11%-ը և ուսուցիչների 25%-ը: Իսկ այն հարցին, թե որքանով են գոհ ջեռուցման համակարգից, դրական է պատասխանել ուսուցիչների 90%-ը և աշակերտների 84%-ը (**Գծապատկեր 11**): Դիտարկված դպրոցների մեծ մասում (32-ում) գործում է կենտրոնացված ջեռուցման համակարգ, իսկ 12-ում՝ չի գործում:

**Գծապատկեր 15. Ինչպես է ջեռուցվում դպրոցը, դասարանները (N, դիտարկում)**



<sup>19</sup> «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի եվ պահպանման» N2.III.4.2... Սանիտարական կանոնները հաստատելու մասին Հրաման, ՀՀԱՆ, N82, 11 փետրվար, 2002, 16.1



Դպրոցներում ջեռուցման հետ կապված խնդիրները առավել մանրամասն քննարկվեցին մարզային քննարկումների ժամանակ, ըստ որոնց, դպրոցներում չնայած առկա են կենտրոնացված ջեռուցման համակարգեր, սակայն ֆինանսական ռեսուրսների սակավությամբ պայմանավորված՝ այդ համակարգը հաճախ անջատում են գարնանային ամիսներին՝ չնայած ցուրտ եղանակին: Խնդիրը հատկապես սուր է փոքրաթիվ աշակերտներ ունեցող գյուղական դպրոցների դեպքում: Ի դեպ, դպրոցների ֆինանսավորման սոր բանաձևում դպրոցի ֆինանսավորումը սահմանվելու է դրա աշխարհագրական դիրքից ելնելով, ինչը հնարավորություն կտա առավել ցուրտ մարզերին միացնել կենտրոնացված ջեռուցումը նաև գարնանային ամիսներին:


**Նկարներ ուսումնասիրված դպրոցներից**



Խմելու ջրի և **ջրամատակարարման** վիճակը դպրոցներում մյուս ոլորտների համեմատ ավելի քիչ է մտահոգիչ. այսպես, ուսուցիչների 90%-ը նշել է, որ դպրոցում մաքուր խմելու ջուր կա, որից կարող են

օգտվել, և այդպիսին է նաև աշակերտների 79%-ի կարծիքը: Աշակերտների պատասխաններն ըստ մարզերի դիտարկելու դեպքում կտեսնենք, որ մաքուր խմելու ջրի բացակայության խնդիրն առավել ակնառու է Արմավիրի (29%), Արագածոտնի (23%) և Սյունիքի (22%) մարզերում: Որպես բարելավման ենթակա պայման, ջրամատակարարման համակարգը նշվել է ուսուցիչների 18%-ի կողմից: Ինչպես գիտենք, Հայաստանում հենց այս մարզերում առհասարակ առկա է խմելու ջրի հետ կապված խնդիրներ, ինչը նաև արտացոլվում է դպրոցում խմելու ջրի բացակայությամբ: Չնայած դեռևս չկան վիճակագրական տվյալներ, թե քանի համայնքում կա խմելու ջրի խնդիր, սակայն, ըստ որոշ աղբյուրների, Հայաստանում շուրջ 600 համայնքներ ընդգրկված չեն կենտրոնական ջրամատակարարման սպասարկման տարածքներում<sup>20</sup>:

**Գծապատկեր 16. Դպրոցում կա՞ մաքուր խմելու ջուր, որից կարող եք օգտվել: (%)**



<sup>20</sup> «Հայաստանի մի շարք մարզերում խմելու ջրի խնդիր կա. խնդրի լուծման համար մոտ 2 մլրդ դոլար է պետք» 10/12/2018 <https://armtimes.com/hy/article/149489>

Խմելու ջրին առնչվող հաջորդ խնդիրը վերաբերում է, բնականաբար, ջրի որակին: Այս հարցը բավականին սուր քննարկվեց նաև մարզային հանդիպումների ժամանակ, որտեղ մասնակիցները բարձրաձայնեցին ջրի որակի հարցը, որի պատճառով մարզերում տեխնիկական ջրից օգտվում են նաև երեխաները, քանի որ խմելու ջրի մեջ առկա վնասակար նյութերը անցնում են թուլյատրեյի սահմանը: Հարցը առավել մասնագիտական և խորքային ուսումնասիրության կարիք ունի: Առհասարակ, ՀՀ դպրոցների ենթակառուցվածքների առկա վիճակի վերաբերյալ ընդհանրական պատկերացում կազմելու համար դիտարկենք որոշ վիճակագրական տվյալները:

**Աղյուսակ 3. 2016-2017 ուս.տարում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների բանակն ըստ շենքերի վիճակի և հարմարությունների (ենթակառուցվածքներ)<sup>21</sup>**

Ենթակառուցվածք	Զրամատակարարումը		կոյուղացումը		գազամատակարարումը		ջեռուցումը			տաք ջրամատակարարումը	
	առկա է	բացակայում է	առկա է	բացակայում է	առկա է	բացակայում է	կենտրոնացված կամ անհատական	էլեկտրաջեռուցիչ կամ վառարան	բացակայում է	առկա է	բացակայում է
Երևան	259	0	259	0	255	4	257	1	1	26	233
Արագածոտն	111	11	101	21	53	69	52	69	1	0	122
Արարատ	111	1	105	7	82	30	82	29	1	11	101
Արմավիր	114	9	105	18	101	22	97	26	0	12	111
Գեղարքունիք	115	11	104	22	83	43	65	60	1	8	118
Լոռի	156	10	147	19	131	35	82	84	0	16	150
Կոտայք	105	0	102	3	90	15	86	18	1	10	95
Շիրակ	157	12	156	13	104	65	117	51	1	37	132
Սյունիք	106	12	103	15	47	71	44	74	0	4	114
Վայոց Ձոր	49	1	42	8	21	29	19	30	1	0	50
Տավուշ	78	4	67	15	49	33	44	37	1	5	77
<b>Ընդամենը</b>	<b>1361</b>	<b>71</b>	<b>1291</b>	<b>141</b>	<b>1016</b>	<b>416</b>	<b>945</b>	<b>479</b>	<b>8</b>	<b>129</b>	<b>1303</b>


<sup>21</sup> ԿՏԱԿ, <https://lib.amedu.am/resource/26512>



Խմելու ջրի պայմանների բարելավման մասին են վկայում նաև դիտարկման արդյունքները, որոնց համաձայն դպրոցների ներսում մաքուր խմելու ջրի աղբյուր չկա:

Դիտարկման ընթացքում անդրադարձ է արվել խմելու և տնտեսական մաքուր ջրի առկայությանը դպրոցի ներսում և դրսում: Դրանից բացի, անդրադարձ է արվել ջրահեռացման համակարգին: Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 17**-ում, եթե դիտարկված դպրոցների 77%-ում

**Գծապատկեր 17. Խմելու և տնտեսական ջրի առկայությունը դպրոցի ներսում և դպրոցից դուրս (%)**



մաքուր խմելու ջրի աղբյուր կա, ապա դպրոցից դուրս ընդամենը 23%-ի դեպքերում է այդպես նշվել: Իսկ դիտարկված 44 դպրոցից 6-ում մաքուր խմելու ջուր չկա ո՛չ դպրոցի ներսում, ո՛չ էլ դրսում: Փոքր-ինչ ավելի մտահոգիչ է խնդիրը մաքուր տնտեսական ջրի հետ կապված. այսպես, դպրոցներից ընդամենը 57%-ի համար է նշվել, որ ներսում կա տնտեսական մաքուր ջրի աղբյուր, և միայն դպրոցների 25%-ի դեպքում է առկա այդպիսի ջրի աղբյուր դրսում:

Այսպիսով, հետազոտության ընթացքում իրականացված սանիտարահիգիենիկ պայմանների գնահատումը աշակերտների և ուսուցիչների կողմից, ինչպես նաև դիտարկման ընթացքում ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ, չնայած ընդհանուր դրական պատկերին, դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք ենթակա են լուծման:

## ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՊԱՅՈՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐՈՎ


Դպրոցի շենքային ընդհանուր և սանիտարահիգիենիկ պայմանների գնահատումից բացի աշակերտները և ուսուցիչները գնահատել են նաև իրենց դպրոցում անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը և պայմանները: Ըստ սանիտարական կանոնների դպրոցներում անհրաժեշտ է ունենալ սենյակների հետևյալ պարտադիր թվակազմը՝ ուսումնական դասարաններ, ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների համար տարածք (դահլիճ), ճաշարան կամ բուֆետ, բուժկետ, վարչատնտեսական սենյակներ, սանհանգույցներ, միջանցքներ (ռեկրեացիաներ) և հանդերձարան<sup>22</sup>: Այս բաժնում, մասնավորապես, անդրադարձ է արվում դասասենյակների, ճաշարանի, համակարգչային սենյակի, լաբորատորիաների, մարզադահլիճների համապատասխան պայմաններին, ինչպես նաև այդ տարածքների ներքին հարդարանքի առկա վիճակին՝ կահավորում, լուսավորություն, գունային ընտրություն:

### Դպրոցի ընդհանուր և հարակից տարածքի գնահատում

Նախորդ բաժնում արդեն անդրադարձանք դպրոցի շենքային պայմաններին և մաքրությանը, այս բաժնում ներկայացված են դիտարկման արդյունքները, որոնք վերաբերում են հարակից տարածքի մաքրությանը, կանաչապատմանը, թեքահարթակների, բազրիքների և աղբամանների առկայությանը, դպրոցի լուսավորությանը և այլ բաղադրիչների:

Ըստ ԿՏԱԿ-ի 2017-2018թթ. վիճակագրական տվյալների ընդհանուր առմամբ 330 դպրոց կարիք ունի հիմնանորոգման, իսկ 163-ը՝ ընթացիկ նորոգման<sup>23</sup>: **Գծապատկեր 18**-ում ներկայացված է, թե յուրաքանչյուր մարզում քանի դպրոց ունի հիմնանորոգման, ընթացիկ նորոգման կարիք:

**Գծապատկեր 18. 2017-2018 ուս.տարում 33 հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն ըստ շենքերի վիճակի**



Հուշգրավ է, որ ԿՏԱԿ-ի 2016-2017 ուստարվա նույնանման վիճակագրության հետ համեմատությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ 182 դպրոցի իրավիճակը բարելավվել է մեկ տարվա ընթացքում՝

<sup>22</sup> Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» N2.III.4.2... Սանիտարական կանոնները հաստատելու մասին Հրաման, 33ԱՆ, N82, 11 փետրվար, 2002

<sup>23</sup> Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2017-2018 ուստարվա վիճակագրական տվյալները, ԿՏԱԿ <https://lib.amedu.am/resource/23871>

98-ով նվազել է հիմնանորոգման կարիք ունեցող դպրոցների թիվը, իսկ 84-ով՝ ընթացիկ նորոգման կարիք ունեցող դպրոցների թիվը:

Սակայն դպրոցներում վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը բարելավման կարիք ունի, քանի որ հաճախ դպրոցներում վերանորոգումներ և հիմնանորոգումները ոչ պատշաճ որակով են իրականացվում, ինչի հետևանքով ծախսված միջոցները փոշիացվում են և չեն բերում ցանկալի արդյունքների:

*Մեր դպրոցը այդպիսի խնդիր ունի և վերանորոգվելուց հետո ևս առաստաղից քարաթափումներ լինում են: Կամ, օրինակ, կահույքները առնում են ու էլի փչանում են, երևի թե էժան տարբերակն են առնում:*

**Ուսուցիչ, Վայոց Ձոր**

*Մի խնդիրն էլ շինարարությունն ա, որի պատասխանատուն ոչ թե տնօրենն ա, այլ հատուկ դրա համար նախատեսված վերահսկող մեկը: Կառաջարկեմ, որ տնօրենը պատասխանատու լինի, եղ վերահսկիչը լինի ոչ թե եղ հատուկ մարդը, այլ ուսուցիչներից կազմված մի խումբ, որ շինարարներին վերահսկի, որ էդքան պատասխանատվությունը տնօրենն իր վզին չվերցնի: Նրանք բոլորը թռնում, գնում են, թղթերի տակ ստորագրողը դու ես մնում մենակ:*


**Դպրոցի տնօրեն, Տավուշ**

*Դպրոցի կապիտալ վերանորոգումից են գալիս բոլոր խնդիրները: Կոնկրետ Իջևանի ավագ դպրոցը վերանորոգվել է, շենքային պայմանները ըստ շինարարների բարեկարգվել են, բայց դպրոցի 2-րդ մասնաշենքը աշխատող սանհանգույց չունի հանձնման օրվանից: Ովքե՞ր են մեղավոր: Ի՞նչ անի տնօրենը: Որտեղից միջոց հայթայթի, որպեսզի բավարարի երկրորդը: Ամբողջ դպրոցը օգտվում է: Հավաքարարները 40,000 աշխատավարձով առավուտից իրիկուն հավաքում են: Ասեք՝ ովքե՞ր են մեղավոր:*

**ՀԿ ներկայացուցիչ, Տավուշ**

Դպրոցների հարակից տարածքների մաքրությունը բացասական գնահատական է ստացել միայն դիտարկված դպրոցներից 7-ի դեպքում:

**Գծապատկեր 19. Դպրոցի ընդհանուր վիճակ, բաղադրիչների գնահատում (% դիտարկում)**



Նմանատիպ իրավիճակ է նաև կանաչապատման հետ կապված: Այսպես, դիտարկված դպրոցներից 38-ում դպրոցի հարակից տարածքի կանաչապատման գնահատականը նշվել է որպես լավ կամ շատ լավ: **Գծապատկեր 19**-ում ներկայացված են դիտարկման արդյունքները դպրոցների լուսավորության, օդափոխության և այլ բաղադրիչների վերաբերյալ: Ինչպես տեսնում ենք, համեմատաբար բարձր գնահատական են ստացել միջանցքների մաքրությունը և դպրոցի լուսավորությունը, իսկ ամենացածրն են գնահատվել դպրոցի ներսի պատերի հարթությունը և դպրոցի օդափոխությունը:

## Նկարներ ուսումնասիրված դպրոցներից



Վերջին տարիներին ներառական կրթության համակարգի ներդրմանը զուգընթաց դպրոցների տնօրինության կողմից որոշակի աշխատանքներ են իրականացվել դպրոցի շենքային պայմանների հարմարեցման առումով, մասնավորապես, ավելացվել են դպրոցի մուտքի թեքահարթակներ: Այնուամենայնիվ, դիտարկման արդյունքները վկայում են, որ կատարված աշխատանքները դեռևս բավարար չեն: Մասնավորապես, դիտարկված 44 դպրոցից միայն 22-ն ունեն մուտքի թեքահարթակ և ընդամենը մեկ դպրոց (Շինուհայրի միջնակարգ դպրոց) ունի հարկից հարկ թեքահարթակ:

Որոշակի խնդիրներ կան նաև դպրոցի ապակիների հետ կապված: Մասնավորապես, դիտարկված դպրոցներից 5-ում ապակիների մեծ մասը կտրված են, 20-ում փոքր մասն է կտրված, և միայն 19 դպրոցում ոչ մի ապակի կտրված չէ:



## Նկարներ ուսումնասիրված դպրոցներից



Որպես դպրոցներում առկա կրթական միջավայրի վրա ազդող գործոն կարևոր է նաև դպրոցում կարգուկանոնին հետևելը՝ կապված նաև դպրոցի հարմարությունների պահպանմանը: Ըստ «Կոտրված պատուհանի» տեսության, եթե փոքր վնասը չի պատժվում կամ չի վերացվում, ապա այն բերում է վնասի ավելացման<sup>24</sup>: Եթե խնդիրը տեղափոխենք դպրոցական միջավայր, ապա դպրոցում փոքր վնաս տալը, եթե չի պատժվում կամ չի կարգավորվում, ապա այն միտում ունի ավելանալու: Այս իմաստով ստացված տվյալները՝ կապված դպրոցներում կոտրված ապակիների հետ, մտահոգիչ են: Իհարկե խնդիրը նաև ոչ միայն պահպանման, այլ նաև եղած գույքի որակին վերաբերում է:

*Մեզ մոտ ոչ թե կոտրված պատուհանի տեսությունն է, այլ պատռված ցելոֆանի տեսություն:*

**Դպրոցի տնօրեն, Գեղարքունիք**

Իհարկե, այս խնդիրը ներկայացվեց նաև դպրոցների սանհանգույցների մաքրության հետ կապված: Փաստորեն, դպրոցներում որևէ գույքի վնասված լինելը իսկապես հանգեցնում է այդ վնասի ավելացմանը: Յետևաբար, դպրոցի տնօրինությունը պետք է վնասված գույքը բերի ամբողջական տեսքի սեղմ ժամկետներում: Այս հարցին կանոնադաշտանաբ նաև հաջորդ բաժիններում (տե՛ս *Աշակերտների վերաբերմունքը գույքի նկատմամբ*):

Համեմատաբար ավելի դրական պատկեր ենք տեսնում աստիճանների բազրիքների առկայության դեպքում. 36 դպրոցում դրանք առկա են, 2-ում առկա են ոչ բոլոր բազրիքները և 4-ում աստիճանները բազրիքներ չունեն:

Դիտարկված դպրոցներից 16-ում (36%) վերին հարկերում առաստաղին առկա են կաթոցների հետքեր, իսկ 17 (39%) դպրոցի շենքի ներսում առկա են բորբոսի հետքեր:

## Նկարներ ուսումնասիրված դպրոցներից




<sup>24</sup> Kelling, George L.; Wilson, James Q. [Broken windows: the police and neighborhood safety](#). Atlantic Monthly. 1982 Mar. [22.02.2018]

Դիտարկման արդյունքների համաձայն, կենցաղային աղքի կուտակման կոնտեյներներ առկա են դիտարկված դպրոցներից 27-ում, և դրանց շրջակայքում տարածքը մաքուր է:

**Դասասենյակներում առկա վիճակի գնահատում**

Յետազոտության ընթացքում գնահատվել են նաև դասասենյակների մաքրությունը, լուսավորությունը և կահավորումը: Ուսումնասիրված դպրոցներից 13-ում առկա է մինչև 10 դասասենյակ, 8 դպրոցում՝ 11-20 դասասենյակ, 13 դպրոցում՝ 21-30 դասասենյակ, իսկ 16 դպրոցում՝ 31-ից ավելի դասասենյակ:

**Գծապատկեր 20. Որքանով եք գոհ դպրոցի հետևյալ պայմաններից, դասասենյակներ: (%)**



Գծապատկեր 20-ում տեսնում ենք, թե որքանով են հետազոտության մասնակիցները գոհ դասասենյակների պայմաններից:

Ինչպես տեսնում ենք, դասասենյակների լուսավորությունը և մաքրությունը հիմնականում գոհացնում է թե՛ աշակերտներին և թե՛ ուսուցիչներին, իսկ դասասենյակների կահավորումը շատ ավելի քիչ է գոհացնում:

Դիտարկման արդյունքների համաձայն, դպրոցների 16%-ում դասասենյակների մաքրությունը գնահատվել է որպես «վատ» («վատ», «շատ վատ»), իսկ 84%-ի դեպքերում՝ «լավ» («լավ», «շատ լավ»): Այստեղ նույնպես դիտարկման արդյունքները մոտ են աշակերտների կողմից տրված գնահատականին: Դիտարկման ընթացքում գնահատվել է նաև դասասենյակների կահույքի որակը, դպրոցների 36%-ում կահույքի որակը գնահատվել է որպես «վատ», իսկ 64%-ում՝ «լավ»: Եթե համեմատենք **Գծապատկեր 20**-ում ներկայացված՝ աշակերտների և ուսուցիչների կողմից կահավորման վերաբերյալ ներկայացված գնահատականների հետ, դիտարկման արդյունքները փոքր-ինչ ավելի բացասական են:

**Նկարներ ուսումնասիրված դպրոցներից**



Հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 25%-ը նշել է, որ ուսուցչանոցի կահավորումը իրենց չի գոհացրում և ընդամենը 13%-ն է նշել, որ շատ գոհ է: Դիտարկման արդյունքների համաձայն, ուսուցչանոցների կահավորումը բացասական է գնահատվել դպրոցներից 11-ում, իսկ 4 դպրոցում էլ ուսուցչանոցի մաքրությունն է անբավարար գնահատվել:


### Ճաշարաններում առկա վիճակի գնահատում

Հանրակրթական դպրոցների համար նախատեսված սանիտարական կանոնների 6.3 կետի համաձայն,<sup>25</sup> դպրոցի շենքը պետք է ունենա ճաշարան: Մեկ այլ կետի համաձայն, «Փոքրաթիվ աշակերտներով դպրոցներում (100 աշակերտից պակաս) սննդի բլոկի բացակայության դեպքում երեխաների սննդի կազմակերպումը թույլատրվում է իրականացնել այլ նպատակների համար հատկացված տարածքում (սենյակում), համաձայնեցնելով ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության տարածքային մարմնի հետ»: Մինչդեռ, հետազոտության արդյունքները վկայում են, որ դիտարկված 44 դպրոցներից 17-ը (39%) չունի գործող ճաշարան:

Չնայած վերջին տարիներին դպրոցական բուֆետ/ճաշարանների ստեղծման և վերագործարկման ուղղությամբ որոշակի քայլեր են իրականացվել, սակայն, հետազոտության արդյունքների համաձայն, այս ոլորտում դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք ներկայացված են ստորև.

- Ճաշարանի առկայությունը. Սևաբերդի, Չարենցավանի, Արթիկի թիվ 4, Ապարանի թիվ 2 հիմնական և մի շարք այլ դպրոցներում ճաշարանի բացակայության պարագայում աշակերտները ստիպված են սնունդ գնել դպրոցի մոտակայքում գործող կրպակներից, խանութներից կամ տանից բերել իրենց հետ:
- Սննդի թարմությունը, բազմազանությունը և ճաշարանի մաքրությունը, որպես մտահոգիչ խնդիրներ, նշվել են որոշ դպրոցների աշակերտների կողմից (Սիսիանի թիվ 5 հիմնական, Աշտարակի թիվ 1 հիմնական և այլն):

Գծապատկեր 21. Որքանո՞վ եք գոհ դպրոցի հետևյալ պայմաններից, ճաշարան (%)



Հետազոտության ընթացքում դիտարկված դպրոցներից 17-ում (39%) ճաշարան չկա կամ չի գործում:

<sup>25</sup> Հանրակրթական դպրոցների կառուցվածքի պահպանման» N2.III.4.2... Սանիտարական կանոնները հաստատելու մասին Հրաման, ՀՀԱՆ, N82, 11 փետրվար, 2002

**Գծապատկեր 21**-ում մենք տեսնում ենք, որ ճաշարանի առկայության դեպքում, թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները հիմնականում գոհ են ճաշարանի պայմաններից, սակայն այստեղ նույնպես տեսնում ենք որոշակի խնդիրներ: Եթե հաշվարկենք ճաշարանի վերաբերող գնահատականներն առանց դիտարկելու այն պատասխանները, որոնք ստացվել են ճաշարան չունեցող դպրոցների ուսուցիչների և աշակերտների կողմից, ապա կտեսնենք, որ ամենացածրը գնահատվել է սննդի բազմազանությունը (աշակերտներ՝ 23%, ուսուցիչներ՝ 22%): Թե՛ սննդի թարմությունը և թե՛ ճաշարանի մաքրությունը աշակերտների և ուսուցիչների մեծ մասը դրական է գնահատել, այնուամենայնիվ, աշակերտների 16%-ը դժգոհ է սննդի թարմությունից, իսկ 13%-ը՝ ճաշարանի մաքրությունից: Հարկ է նշել նաև, որ ուսուցիչները շատ ավելի հազվադեպ են օգտվում ճաշարանից, քան աշակերտները:

Մինևույն ժամանակ, դպրոցների մի մասում, սնունդը պատրաստվում է միայն 1-4 դասարանի աշակերտների համար: Խոսքը «դպրոցական սնունդ» ծրագրի մասին է: 2010թ. Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՅԾ) և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախաձեռնեցին «Դպրոցական սնունդ» լայնածավալ ծրագիր, որի նախնական նպատակն էր օրական մեկանգամյա սնունդ տրամադրել հիմնական դպրոցների 1-ից 4-րդ դասարանների 50,000 աշակերտի համար: «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի միջոցով ՊՅԾ-ի նպատակն է խթանել տարրական դպրոցներում սովորելու գործընթացը՝ հիմնվելով այն ապացուցված փաստի վրա, որ օրվա ընթացքում սննդարար կերակրի բարելավված և կանոնավոր հասանելիությունը խթանում է երեխաների ճանաչողական զարգացումը: Բացի այդ, ՊՅԾ-ի նպատակն է անցնել տեղական արտադրությամբ պատրաստված դպրոցական սննդի՝ ամրապնդելով ֆերմերների և դպրոցների միջև կապը: 2018թ. դրությամբ, ՊՅԾ-ն ապահովում է տաք սննդարար կերակուր 566 դպրոցների 60,000 տարրական դպրոցահասակ երեխաների համար: Ծրագրի շրջանակում բնեղեն տարբերակով և դրամական փոխանցումների միջոցով այդ դպրոցները կարող են սնունդ տրամադրել աշակերտներին ողջ ուսումնական տարվա ընթացքում: ՊՅԾ-ն ակտիվորեն աշխատում է իր կողմից իրականացվող ծրագրում ընդգրկված վեց մարզերի դպրոցները ՀՀ «Կայուն դպրոցական սնունդ» (ԿԴՍ) պետական ծրագրին փոխանցելու ուղղությամբ: Ներկայումս ԿԴՍ-ն ընդգրկում է չորս մարզերի՝ Սյունիք, Վայոց Ձոր, Արարատ և Տավուշ, 340 դպրոցների տարրական դասարանների 30,000 աշակերտ: ԿԴՍ-ն կիրառում է դրամական փոխանցումների մոտեցումը՝ դպրոցներին տրամադրելով անհրաժեշտ դրամական միջոցներ դպրոցական սննդի համար մթերք ձեռք բերելու նպատակով: ՊՅԾ-ն շարունակում է աջակցել ԿԴՍ ծրագրին փոխանցված դպրոցներին սարքավորումների, ինչպես նաև դպրոցների տնօրեններին և խոհարարներին երեխաների սնուցման և առողջ սննդի թեմաներով վերապատրաստումներ անցկացնելու, դպրոցների և սնունդ արտադրողների միջև կապն ամրապնդելու միջոցով: Մարզային քննարկումների ժամանակ մասնակիցները իրենց գոհունակությունը հայտնեցին դպրոցական սնունդ ծրագրից՝ միաժամանակ մատնանշելով մի քանի խնդիր.

- 1-4-րդ դասարաններից բարձր դասարանների աշակերտների նկատմամբ խտրական վերաբերմունք էր որակվում ծրագրում նրանց չընդգրկելը: Հետաքրքրական է, որ որոշ դպրոցներ, սեփական նախաձեռնությամբ, ծնողական համայնքի հետ սերտ համագործակցության միջոցով կարողացել են սնունդ ապահովել նաև բարձր դասարանի աշակերտների համար՝ դպրոց-ծնող համաֆինանսավորման միջոցով:
- 1-4-րդ դասարանի աշակերտների համար դպրոցական սնունդ ծրագրի համար որոշ դպրոցներում հավելյալ գումարներ են հավաքվում ծնողներից՝ հավելյալ սննդամթերքով ճաշացանկը համալրելու նպատակով:



Ճաշարանների մաքրությունը «վատ» գնահատական է ստացել դիտարկված դպրոցներից ընդամենը երկուսում: Ճաշարան ունեցող դպրոցներից 5-ում (18%) դիտարկողները նշել են, որ ճաշարանում առկա է տհաճ հոտ: Դիտարկման ընթացքում գնահատվել է նաև ճաշարանի կահավորումը. դպրոցներից 6-ում (23%) ճաշարանի կահավորումը ցածր գնահատական է ստացել:

	Այո	Ոչ
Ճաշարանում փակցված է գնացուցակ	6	20
Տրամադրվում է ՀԴՄ կտրոն	1	25
Ճաշարանում աշխատակիցը ձեռնոցով է	13	13
Ճաշարանում աշխատակիցը գլխարկով է	19	7


**Նկարներ ուսումնասիրված դպրոցներից**



Դիտարկման ընթացքում գնահատվել է նաև ճաշարանի և աշխատակիցների գործունեությունը (Աղյուսակ 2): Ինչպես տեսնում ենք, գնացուցակ փակցված է ընդամենը դպրոցներից 6-ում: Իսկ ՀԴՄ կտրոն տրամադրում է դպրոցներից միայն մեկը, չնայած, ըստ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման» մասին ՀՀ օրենքի, ուսումնական հաստատությունների սննդի կետերում դասընթացների անցկացման ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է<sup>26</sup>: Ինչ վերաբերում է աշխատակիցներին, ապա դպրոցներից 13-ում նրանք կրում են ձեռնոց, իսկ 19-ում նաև գլխարկ:

Հետազոտության արդյունքների համաձայն, դպրոցի ճաշարանից օգտվում է (հաճախ, միշտ) աշակերտների 46%-ը, իսկ ուսուցիչների՝ ընդամենը 25%-ը (Գծապատկեր 22): Ընդ որում, ճաշարանից օգտվող թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները փոքր-ինչ ավելի գոհ են սննդի բազմազանությունից, թարմությունից և ճաշարանի մաքրությունից:

**Գծապատկեր 22. Որքա՞ն հաճախ եք օգտվում դպրոցի ճաշարանից (% , աշակերտներ, ուսուցիչներ)**



Ճաշարանից օգտվողների այս ցածր տոկոսն արդեն իսկ վկայում է այս ոլորտում առկա որոշակի խնդիրների մասին: Այսպիսով, կարող ենք առանձնացնել ճաշարանի հետ կապված հետևյալ հիմնական խնդիրները, որոնք նշվել են ուսուցիչների և աշակերտների կողմից.

1. Անհրաժեշտ է ավելացնել սննդի բազմազանությունը և թարմությունը

<sup>26</sup> «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենք, հոդված 4, 2(ե)

2. Ապահովել սանիտարահիգիենիկ մաքուր միջավայր
3. Ուսուցիչների և բարձր դասարանի (5-րդ դասարան և ավելի) երեխաների համար ստեղծել ճաշարանից օգտվելու պայմաններ, եթե դպրոցը ընդգրկված է «դպրոցական սնունդ» ծրագրում:

### Մարզադահլիճների վիճակի գնահատում

Հանրակրթական դպրոցների համար նախատեսված սանիտարական կանոնների 6.3 կետի համաձայն,<sup>27</sup> դպրոցի շենքը պետք է ունենա ուսումնամարզական սենյակ/սենյակներ: Դիտարկման արդյունքները, սակայն, վկայում են այն մասին, որ ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան մարզադահլիճներ: Ինչպես երևում է Աղյուսակ 3-ից, խաղերի համար մարզադահլիճ է առկա գրեթե բոլոր դպրոցներում, մինչդեռ մարզասարքերի մարզադահլիճ առկա է միայն 16 դպրոցում: Մարզային քննարկումներում բարձրաձայնվեց դպրոցների նախագծերում մարզադահլիճների բացակայության հարցը, ինչի պատճառով ի սկզբանե դպրոցներում մարզադահլիճ նախագծված չի եղել:

	Այո	Ոչ
Մարզադահլիճ խաղերի համար	38	6
Մարմնամարզության և մարզասարքերի մարզադահլիճ	16	28
Մարզախաղերի համալիր մարզահրապարակ	25	19


*Երկրաշարժից հետո դպրոցների վերակառուցման նախագծերը կազմելու ժամանակ նախագծից հանվել է մարզադահլիճը և հանդիսությունների սրահը: Տիպային նախագիծը եղել է, բայց առանց մարզադահլիճի և հանդիսությունների սրահի, քանի որ դրանք ծախսատար են:*

*Շիրակի մարզի 170 դպրոցներից 66-ը չունեն ֆիզկուլտուրայի դահլիճ: Քաղաքի կենտրոնական դպրոցներից շատերը չունեն մարզադահլիճ: Դպրոցներ էլ կան, որոնք մարզադահլիճ ունեն, բայց հատակ չկա:*

Մարզպետարանի ներկայացուցիչ, Շիրակ

Ջետաբերբական է, որ ՀՀ պետական դպրոցներից 229 մարզային դպրոցները ոչ թե տիպային շենքեր են, այլ հարմարեցված, ինչը կազմում է պետական դպրոցների 16%-ը և մարզային դպրոցների 20%-ը:<sup>28</sup> Դիտարկման ընթացքում գնահատվել է նաև առկա մարզադահլիճի մաքրությունը և ընդհանուր վիճակը (Գծապատկեր 23).

### Գծապատկեր 23. Գնահատել մարզադահլիճի... (N, դիտարկում)



<sup>27</sup> Հանրակրթական դպրոցների կառուցվածքի եվ պահպանման» N2.III.4.2... Սանիտարական կանոնները հաստատելու մասին Հրաման, ՀՀԱՆ, N82, 11 փետրվար, 2002

<sup>28</sup> ԿՏԱԿ, <https://lib.amedu.am/resource/26512>

Ինչպես երևում է գծապատկերից, դիտարկված դպրոցներից 33-ում մարզադահլիճների մաքրությունը գնահատվել է որպես «լավ/շատ լավ»: Իսկ մարզադահլիճների ընդհանուր վիճակը, կահավորումը և հատակի վիճակը «վատ/շատ վատ» են գնահատվել, համապատասխանաբար, 17, 19 և 21 դպրոցներում:

**Նկարներ ուսումնասիրված դպրոցներից**




Դիտարկված դպրոցներից 8-ը հանդերձարան չունեն, այն դեպքում, երբ դրանցից 6-ը ունեն մարզադահլիճներ: Դպրոցներից միայն 32-ում են առկա առանձնացված հանդերձարաններ աղջիկների և տղաների համար:

**Գրադարանների և հանդիսությունների դահլիճի առկա վիճակի գնահատում**

Դիտարկման արդյունքների համաձայն 44 դպրոցից 10-ում հանդիսությունների դահլիճը բացակայում է՝ պայմանավորված կրկին դպրոցի նախագծում դրանց բացակայությամբ: Նման դեպքերում դպրոցները հանդիսությունները կազմակերպում են դպրոցի միջանցքներում, բախում: [Գծապատկեր 24-](#)ում տեսնում ենք, որ հանդիսությունների դահլիճի կահույքի որակը դիտարկված դպրոցներից 19-ում գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ»:

**Գծապատկեր 24. Գնահատել հանդիսությունների դահլիճի... (դպրոցների քանակ, դիտարկում)**



**Հանդիսությունների դահլիճի** կահույքի որակից աշակերտների համեմատ ավելի դժգոհ են ուսուցիչները: **Գծապատկեր 25-ում** տեսնում ենք, որ աշակերտների ընդամենը 24%-ն է դժգոհ հանդիսությունների դահլիճի կահավորումից, իսկ ուսուցիչների՝ 40%-ը:



Հետազոտության արդյունքների համաձայն, աշակերտների միայն 36%-ն է հաճախակի կամ միշտ օգտվում **գրադարանից**, իսկ ուսուցիչների 57%-ը:

Հետազոտությանը մասնակցած աշակերտների 82%-ը գոհ է գրադարանի հագեցվածությունից, իսկ գրադարանից հաճախակի օգտվող աշակերտների 91%-ն է գոհ: Միևնույն ժամանակ ուսուցիչների 75%-ն է գոհ գրադարանի հագեցվածությունից, իսկ հաճախակի օգտվող ուսուցիչների 80%-ն է գոհ:

Որպես գրադարանից հագվադեպ օգտվելու հիմնական պատճառներ աշակերտները նշել են գիրք կարդալ չսիրելը (12%), անհրաժեշտ գրքերի բացակայությունը և գրադարանի չհագեցվածությունը (9%), իսկ աշակերտների մի մասն էլ նախընտրում է էլեկտրոնային գրքեր կարդալ համակարգչով՝ տանը (8%):

Դիտարկման ընթացքում ուսումնասիրված 44 դպրոցներից գրադարանի մաքրությունը լավ է գնահատվել 38-ում, իսկ գրադարանի կահավորումը՝ միայն 26-ում:

Դպրոցական գրադարանից չօգտվելու հարցը քննարկվեց նաև մարզային հանդիպումների ժամանակ: Հետաքրքրական է, որ աշակերտների շրջանում ընթերցասիրության հարցի վերաբերյալ կարծիքները գրեթե կիսվեցին՝ մի մասը պնդում էր, որ այսօր աշակերտները կարդում են գրքեր, սակայն հիմնականում համակարգչի միջոցով, դրա համար չեն օգտվում դպրոցական գրադարանից: Իսկ մի մասը կարծում է, որ աշակերտները գրքեր չեն կարդում: Հարցը իհարկե առավել խորքային ուսումնասիրության է արժանի: Հավելենք նաև, որ աշակերտները նաև հաճախ օգտվում են քաղաքային կամ մարզային գրադարանից, որոնք առավել հագեցած են, քան դպրոցական գրադարանները: Մարզային քննարկումների համաձայն չկա որևէ մոտեցում, սկզբունք՝ դպրոցների գրադարանների համալրման հետ կապված: Որոշ դեպքերում հաշվի է առնվում աշակերտների, ուսուցիչների նախասիրությունները, որոշ դեպքերում դպրոցի գրադարանը տարիներով չի համալրվում նոր գրականությամբ՝ ֆինանսական միջոցների սղության, այլ առաջնահերթ խնդիրների, կարիքների առկայության պատճառով: Նշենք, սակայն, որ պետական բյուջեով առանձին տողով հատկացվում է գումար դպրոցներում գրադարանների համալրման համար՝ 2019թ. պետական բյուջեում խոսքը 44,352,000 ՀՀ դրամի մասին է<sup>29</sup>:



*Գնում են գրադարան, գիրք են հարցնում, գրադարանավարը չի էլ իմանում նման գիրք կա, թե ոչ:*  
**Աշակերտ, Արարատ**

<sup>29</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը 2019թ. պետական բյուջեի մասին, <http://www.gov.am/files/docs/3124.pdf>, էջ 126  
 44

Գրադարանավարի, ուսուցիչների գործունը ևս վճռորոշ է՝ աշակերտների ընթերցանության հանդեպ հետաքրքրվածության հետ կապված: Մարգային քննարկումներում բարձրաձայնվեց գրադարանավարների ոչ պատրաստված լինելը՝ երեխաներին պատշաճ ծառայություն մատուցելու համար:

Չեռագոտության արդյունքները վկայում են այն մասին, որ դպրոցի ենթակառուցվածքները պետք է ենթարկվեն որակական փոփոխությունների, քանի որ դրանք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման վրա: Ընդ որում, փոփոխություններ պետք է կրեն նաև այն իրավական կարգավորումները, որով սահմանվում են չափանիշներ դպրոցների պայմանների նկատմամբ:

*Դպրոցները հիմնականում սովետական տարիներին են կառուցվել: Հիմա նորմերից ենք խոսում, ու գիտենք, որ յուրաքանչյուր երեխայի հաշվով 2,5 մետր տարածք է ընկնում, բայց սովետական ոչ մի դպրոց դուք չեք գտնի, որ ապահովի դա: Նախարարությունը ինչ-որ չափանիշներ է սահմանում, բայց այդ չափանիշները սահմանելուց առաջ դուք առկա իրավիճակը տեսեք ինչքան է: Ուրեմն եղ դեպքում դուրս է գալիս, որ 30-35 աշակերտանոց դասարան չպետք է լինի:*

**Դպրոցի տնօրեն, Գեղարքունիք**

Չեռագոտության մասնակիցներին հատկապես մտահոգում են ճաշարանի, մարզադահլիճի, գրադարանի և ուսումնական այլ անհրաժեշտ սենյակների բացակայությունը, իսկ վերջիններիս առկայության դեպքում՝ ներքին հարդարանքը, կահավորումը և այլ տարրեր:


**ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ ԵՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՎ**

Հանրակրթական դպրոցներում ներքին հարդարանքի, մասնավորապես, դասասենյակների կահավորման, բնական և արհեստական լուսավորության կանոնները սահմանված են «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» սանիտարական կանոններին վերաբերող ՀՀ ԱՆ հրամանով<sup>30</sup>: Սակայն սույն հետազոտության շրջանակներում նպատակ է դրվել ոչ այնքան գնահատել դպրոցներում առկա վիճակի համապատասխանությունն այդ կանոններին, այլ ուսումնասիրել և գնահատել դպրոցների ներքին հարդարանքը աշակերտների, ուսուցիչների կարծիքի հիման վրա՝ համադրելով այդ կարծիքը հետազոտողների դիտարկման հետ:

**Դպրոցների ներքին հարդարանքը**

Հետազոտության ընթացքում դիտարկում իրականացնողները ուսումնասիրել են, թե ինչ հիմնական գույներ են կիրառվում դպրոցների ներքին հարդարանքում: **Գծապատկեր 27**-ում ներկայացված են այդ դիտարկումների արդյունքները. **դպրոցի պատերի** ամենատարածված գույնը սպիտակն է. այդ գույնն առկա է եղել դիտարկված դպրոցներից 29-ում: Սպիտակ գույնին հաջորդում են կապույտի երանգները, կանաչը, դեղինը, մոխրագույնը և այլն:

**Գծապատկեր 27. Պատերի գույն/եր/ը դպրոցում (N, դիտարկում)**



Համաձայն սանիտարական կանոնների, «Ուսումնական սենյակներում և առանձնասենյակներում անհրաժեշտ է նախատեսել հարդարանքի և կահավորանքի երանգավորման մեղմ գույների երանգներ՝ լույսի անդրադարձման առնվազն 0,45 միջին կշռված գործակցով»: Ինչպես տեսնում ենք, կա ընդամենը գույների կիրառության մեկ սահմանափակում, այն է՝ գույների մեղմությունը: Հարկ է նշել, որ հոգեբանների կարծիքով դասասենյակի գույները չպետք է լինեն.<sup>31</sup>

- շատ մուգ. մուգ գույները ճնշող են և կարող են տրամադրություն փչացնել,
- չափազանց վառ. չնայած վառ գույները գրգռում են և բարձրացնում են երեխաների աշխատունակությունը, դրանք նաև շուտ հոգնեցնում են,
- մոնոտոն, ձանձրալի:

<sup>30</sup> Հանրակրթական դպրոցների կառուցվածքի եվ պահպանման» N2.III.4.2... Սանիտարական կանոնները հաստատելու մասին Հրաման, ՀՀԱՆ, N82, 11 փետրվար, 2002

<sup>31</sup> "Психология цвета. Советы учителю" [http://www.e-osnova.ru/PDF/osnova\\_14\\_35\\_9953.pdf](http://www.e-osnova.ru/PDF/osnova_14_35_9953.pdf)



## Նկարներ ուսումնասիրված դպրոցներից




Ներկայումս հոգեբանության, ճարտարապետության, սենյակների ներքին հարդարանքին վերաբերող մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ մոտեցումներ և հիմնավորումներ կան, թե ինչ գույներ է հարկավոր կիրառել դպրոցի, դասասենյակների պատերին՝ աշակերտների կրթական արդյունավետության բարձրացման, ապահովության զգացման, ակտիվության և այլ անհրաժեշտ զգացողություններ ապահովելու նպատակով: Անդրադառնանք մի քանի հիմնական կետերի,<sup>32</sup> որոնք կարելի է կիրառել նաև հանրակրթական դպրոցների վերանորոգման/ պատերը ներկելու և գունազարդելու դեպքում:

1. Ցածր դասարանների աշակերտների համար նախատեսված դասասենյակներում կարելի է ընտրել բաց կանաչ, բաց կապույտ և բեժ գույների տարբեր երանգներ, բայց մաքուր գույներ՝ առանց խառնուրդների:
2. Ավելի բարձր դասարաններում կարելի է այլ գույներ կիրառել. նարնջագույն, բաց դեղին և այլն: Կարևորը, որպեսզի գույներն լինեն ավելի բաց, քան ցածր դասարանների երեխաների դեպքում:
3. Որպեսզի դասասենյակը միօրինակ չթվա, կարելի է պատերը ներկել տարբեր գույներով՝ կախված լուսավորությունից: Գրատախտակի մոտ կարելի է կիրառել շատ ավելի հանգիստ գույներ, իսկ ավելի վառ գույներով կարելի է ներկել այն հատվածը, որն աշակերտները տեսնում են ընդմիջումների ժամանակ:
4. Կարելի է գունազարդել՝ աշակերտների և ուսուցիչների շրջանում հարցում անելու միջոցով պարզելով նախընտրելի գույնը, ինչպես նաև օգտագործելով աշակերտների երևակայությունը:

Դպրոցի պատերի գունային երանգները և բովանդակությունը ընտրելիս անհրաժեշտ է առաջնորդվել երեք հիմնական բաղադրիչներով. չափանիշներ, մասնագիտական կարծիք և ամենակարևորը՝ աշակերտների և դպրոցի անձնակազմի կարծիքը:


<sup>32</sup> “10 возможностей оформления стен в школе” <https://pedsovet.org/beta/article/10-vozmozhnostej-oformlenia-sten-v-skole>

**Գծապատկեր 28. Կահույքի գույն/երը դպրոցում (N, դիտարկում)**




Գծապատկեր 28-ում տեսնում ենք, որ **դպրոցական կահույքում** ամենահաճախ օգտագործվող գույնը դարչնագույն/շագանակագույնն է, որին հաջորդում են կանաչը, դեղինը և այլն: Դպրոցի կահույքն ընտրելիս անհրաժեշտ է պահպանել համադրելիությունը սենյակների պատերի հետ, ինչպես նաև ուշադրություն դարձնել անվտանգությանը, կիրառելիությանը և ընդհանուր որակական չափանիշներին:

**Գծապատկեր 29. Հատակի գույները դպրոցում (նշումների թիվ, դիտարկում)**



**Հատակի գույնը** դպրոցներում հիմնականում դարչնագույն է: Գծապատկեր 29-ում ներկայացված են հատակի առավել տարածված գույները: Ինչպես արդեն անդրադարձանք Նախորդ գլխում, թե՛ աշակերտներին և թե՛ ուսուցիչներին ավելի շատ մտահոգում է ոչ այնքան հատակի գույնը, որքան դրանց որակը և մաշվածությունը:

**Գծապատկեր 30. Վարագույրների գույները դպրոցում (նշումների թիվ, դիտարկում)**






Դպրոցի **պատուհանների** մեծամասնությունը սպիտակ գույնի է. այսպես, դիտարկված դպրոցներից 42-ում գույնը սպիտակ է և միայն երկու դեպքում է նշվել շագանակագույն: **Վարագույրների** դեպքում նույնպես գերակշռում է սպիտակը, որոշ դպրոցներում, սակայն, հանդիպում են այլ գույներ ևս (**Գծապատկեր 30**):


Դիտարկված դպրոցների **մարզադահլիճներում** առկա ամենատարածված գույներն են կանաչը և սպիտակը: Մյուս գույները ներկայացված են **Գծապատկեր 31**-ում:

**Գծապատկեր 31. Մարզադահլիճում առկա գույները (նշումների թիվ, դիտարկում)**



Դիտարկված դպրոցներում **հանդիսությունների դահլիճում** առկա ամենատարածված գույներն են սպիտակը և դարչնագույնը: Գունային բազմազանությունը հանդիսությունների դահլիճում շատ է, սակայն ամենահաճախ օգտագործվող գույները ներկայացված են **Գծապատկեր 32**-ում:

**Գծապատկեր 32. Հանդիսությունների դահլիճում առկա գույները (նշումների թիվ, դիտարկում)**



Դպրոցի ներքին հարդարանքի մաս են կազմում նաև պատերին առկա պետական խորհրդանիշները, դիդակտիկ պաստառներ և այլն: Դիտարկման ընթացքում ուսումնասիրվել են դպրոցի տեսանելի մասերում առկա լուսանկարները, խորհրդանիշները և այլ նյութերը (**Աղյուսակ 6**):

<b>Աղյուսակ 6. Տեսանելի վայրերում առկա խորհրդանիշներ, նկարներ և այլն (N, դիտարկում)</b>	
Ազգային գերբ	41
Հայ գրողների/գիտնականների/պատմական հասարակական գործիչների լուսանկարներ	40
Դրոշ	40
Ազգային հերոսների լուսանկարներ	40

<b>Աղյուսակ 6. Տեսանելի վայրերում առկա խորհրդանիշներ, նկարներ և այլն (N, դիտարկում)</b>	
Օրհներգի տեքստ	39
Ուսումնական դիդակտիկ նկարներ	39
Կրակմարիչ	38
Դասացուցակ	38
Տարհանման պլան	35
Գրական տեքստեր	33
Թեմատիկ նկարներ	31
Լոգունգներ	29
Այլազգի գրողների/գիտնականների/պատմական, հասարակական գործիչների լուսանկարներ	29
Առողջ ապրելակերպի վերաբերյալ պաստառ	26
Աղոթքի տեքստեր	25
Մուտքի և ելքի նշաններ	22
Կաթողիկոսի լուսանկար	21
Դպրոցի բյուջե	6
ՀՀ նախագահի լուսանկար	4

Ինչպես երևում է աղյուսակից, պետական խորհրդանիշները, ազգային հերոսների և հայ գրողների (և այլն) գործիչների լուսանկարները տեսանելի վայրում առկա են գրեթե բոլոր դպրոցներում: Նախագահի լուսանկարն առկա է 4 դպրոցում, իսկ կաթողիկոսինը՝ 21-ում: Տեքստային տեղեկատվության տեսակներից ամենաշատն առկա են գրական տեքստերը, որոնց հաջորդում են կարգախոսները: Ուսումնական և դիդակտիկ նկարներ առկա են 39 դպրոցում: Դպրոցներում առկա թեմատիկ նկարները հայրենասիրական բնույթի են, Հայաստանի բնապատկերներ են, տարբեր առարկաների պաստառներ են:

**Նկարներ ուսումնասիրված դպրոցներից**



Դպրոցներում հակահրդեհային անվտանգության ապահովման հիմնական պարագաները նույնպես առկա են տեսանելի մասում, այնուամենայնիվ, կան դպրոցներ, որտեղ, օրինակ, տարհանման պլանը (թվով 9 դպրոց) կամ կրակմարիչը (թվով 7 դպրոց) տեսանելի մասում չեն:

Ուսումնասիրված դպրոցներից միայն 6-ում է դպրոցի բյուջեն տեսանելի մասում փակցված: Այս հարցը ևս բավականին հետաքրքիր քննարկումների տեղիք տվեց մարզային հանդիպումների ժամանակ: Այսպես, դպրոցի բյուջեն հասանելի մասրում չփակցնելու հանգամանքը տնօրենները բացատրում էին մի քանի նկատառումներով, որոնք ներկայացվում ենք ըստ նրանց մեկնաբանության.

- Բյուջեն դպրոցի ներքին խոհանոցի հարց է:
- Բյուջեի հասանելի լինելը հավելյալ հարցեր տալու առիթ կհանդիսանա:
- Բյուջեն հասանելի է դպրոցի կայքէջում, ավելորդ է պատերին փակցնելը:

Մարզային քննարկումների ժամանակ որոշ ծնողներ հայտնեցին, որ տեղյակ չեն եղել, որ կարող են տեղեկանալ դպրոցի բյուջեի մասին՝ համարելով այն փակ ինֆորմացիա: Իսկ իրականում, բյուջեի հասանելի լինելը նաև դպրոցի պատերին կարող է դրական ազդեցություն ունենալ առհասարակ դպրոցի կառավարման թափանցիկության, հաշվետվողականության տեսանկյունից, ինչպես նաև կարող է դաստիարակչական, կանխարգելիչ ազդեցություն ունենալ աշակերտների վրա՝ դպրոցական գույքը չվնասելու առումով, քանի որ նրանք տեղյակ կլինեն, թե այս կամ այն գույքի համար որքան գումար է ծախսվել բյուջեից:

**Դպրոցների կահավորումը, ապահովվածությունը անհրաժեշտ կրթական նյութերով և պարագաներով**

Չանրակրթական դպրոցներում առանձին դասասենյակների, գրադարանների, մարզադահլիճի, լաբորատորիաների և այլ սենյակների կահավորումը, ապահովվածությունն անհրաժեշտ կրթական նյութերով, մասնագետների հավաստմամբ, ուղղակիորեն ազդում է կրթական գործընթացի արդյունավետության վրա: Թե որքանով են դպրոցի պայմաններն ազդում երեխաների կրթական արդյունքների և ուսուցիչների աշխատանքային արդյունավետության վրա՝ կանդիդատներն սույն հաշվետվության վերջին բաժնում: Այս բաժնում ներկայացնենք կրթական նյութերի և պարագաների առկայության, սենյակների կահավորման վերաբերյալ հետազոտության արդյունքները:

**Դասասենյակների կահավորումը և ապահովվածությունը կրթական նյութերով և պարագաներով**

Չետազոտության ընթացքում իրականացված դիտարկման ընթացքում դասասենյակների մաքրությանը և լուսավորությանը զուգընթաց գնահատվել է նաև կահույքի որակը: Դիտարկման արդյունքների համաձայն, «լավ» որակի է գնահատվել ընդամենը թվով 27 դպրոցների դասասենյակների կահույքը: Միևնույն ժամանակ, դասասենյակների կահավորումից զոհ է աշակերտների 74%-ը և ուսուցիչների 69%-ը:

Դիտարկման ընթացքում ուսումնասիրվել է նաև դասասենյակներում սեղանների դասավորվածությունը և անհրաժեշտ պարագաների առկայությունը:


Դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառումը (օր.՝ խմբային աշխատանքներ) դպրոցներում ենթադրում է նաև սեղանների որոշակի դասավորվածություն: Դասասենյակներում սեղանների դասավորվածության դիտարկումը թույլ է տալիս ենթադրել, որ որոշ մեթոդներ ուսուցիչների կողմից չեն կիրառվում կամ հազվադեպ են կիրառվում: Դպրոցների մեծամասնությունում սեղանների դասավորվածությունը դասասենյակում սյունածև շարքերով է (36 դպրոցում), 10 դպրոցում դասավորված են Ռ-աձև շարքերով և միայն 1 դպրոցում շրջանածև: Չետազոտությանը մասնակցած ուսուցիչների 81%-ը գտնում է, որ դասասենյակներում հնարավոր է տեղաշարժել սեղանները՝ խմբային աշխատանքներ կատարելու համար:

<b>Աղյուսակ 7. Դասասենյակներում առկա ... (N, դիտարկում)</b>	
Գրատախտակ	44
Կավիճ	43
Բարձիկ	41
Էլեկտրականություն	39
Վարագույր/ շերտավարագույր	39
Սրբիչ	36

Ինչպես երևում է Աղյուսակ -ից, անհրաժեշտ հիմնական իրերը և պայմաններն առկա են դիտարկված գրեթե բոլոր դպրոցներում: Այնուամենայնիվ, դպրոցներից 5-ում էլեկտրականություն չկա կամ չի գործում որոշ դասասենյակներում, իսկ դպրոցներից 8-ում չկան սրբիչներ:


Ուսուցիչները գնահատել են նաև, թե որքանով են գոհ դասասենյակներում գրենական պիտույքների, դիդակտիկ նյութերի և մասնագիտական գրականության առկայությունից:

**Գծապատկեր 33. Որքանով եք գոհ... (%)**



Դիդակտիկ նյութերի առկայության և ուսուցիչների կողմից դրանց կիրառության մասին որոշակի պատկերացում է տալիս նաև հետազոտությանը մասնակցած աշակերտների պատասխանները այն հարցերին, թե ինչ նյութեր են կիրառվում տարբեր առարկաների դասավանդման ընթացքում:

**Գծապատկեր 34. Ուսուցիչները կիրառում են հետևյալ նյութերը... (%)**



Քիմիա առարկայի համար անհրաժեշտ նյութերը համեմատաբար ավելի հազվադեպ են կիրառվում ուսուցիչների կողմից, քան աշխարհագրություն առարկայի համար անհրաժեշտ պարագաները (Գծապատկեր 34):

Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 33-ում, ամենաշատը ուսուցիչները գոհ են մասնագիտական գրականության առկայությամբ, իսկ ամենաքիչը՝ դիդակտիկ նյութերի առկայությամբ: Միևնույն ժամանակ, հետազոտությանը մասնակցած ուսուցիչները մատնանշել են դասասենյակների հետ կապված հետևյալ խնդիրները.

- Որոշ դպրոցներում դասասենյակները վերանորոգման կարիք ունեն:
- Անհրաժեշտ են առանձնացված դասասենյակներ՝ ըստ առարկաների հազեցած ուսումնական և թեմատիկ նյութերով:

- Որոշ մարզերում, ինչպես, օրինակ, Լոռում, լրացուցիչ դասասենյակների և անգամ նոր մասնաշենքի կարիք են տեսնում:

Իսկ աշակերտները առաջարկում են դասասենյակներում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Անհրաժեշտ է հաճախակի վերանորոգել դասասենյակները, ավելի պատկերավոր և գունազարդ դարձնել, ինչպես նաև ավելացնել բուսականություն:
- Անհրաժեշտ է փոխել կամ ավելացնել դասասենյակների կահույքը:
- Ապահովել ավելի լավ և երկարաժամկետ ջեռուցում դասասենյակներում:
- Առանձնացնել դասասենյակներ ըստ առարկաների:
- Ստեղծել հատուկ դասասենյակներ կրթական ֆիլմեր դիտելու համար:


### Համակարգչային սենյակի կահավորումը

Հետազոտության ընթացքում գնահատվել է նաև համակարգչային սենյակի հագեցվածությունը: Դիտարկման արդյունքների համաձայն 44 դպրոցներից 34-ում սենյակների կահավորումը գնահատվել է «լավ» կամ «շատ լավ», իսկ համացանցի արագությունը դրական է գնահատվել դպրոցներից 36-ում: Միևնույն ժամանակ, որոշ դպրոցներում դիտարկման ընթացքում նշվել են հետևյալ խնդիրները.

- Համակարգիչների թվի սակավություն
- Համացանցի գործարկման համար անհրաժեշտ կապի դանդաղություն
- Համակարգչային հմտություններ դասավանդող ուսուցչի բացակայություն
- Էլեկտրոնային գրատախտակի, տպիչի/սկաների, պրոյեկտորի բացակայություն:

Համակարգչային սենյակից համեմատաբար ավելի հաճախ օգտվում են ուսուցիչները, քան աշակերտները. աշակերտների 61%-ն է օգտվում («հաճախ», «միշտ») համակարգչային սենյակից, իսկ ուսուցիչների 71%-ը ([Գծապատկեր 35](#)):

**Գծապատկեր 35. Որքա՞ն հաճախ եք օգտվում համակարգչային սենյակից և համացանցից: (%)**



Հատկանշական է, որ աշակերտները շատ ավելի հազվադեպ են օգտվում համացանցից համակարգչային սենյակում, քան ուսուցիչները. աշակերտների ընդամենը 50%-ն է «հաճախ» կամ «միշտ» օգտվում, իսկ ուսուցիչների՝ 68%-ը:

Աշակերտները հազվադեպ են օգտվում համակարգչային սենյակից, քանի որ դպրոցում առկա նյութատեխնիկական ռեսուրսները հասանելի չեն բոլորին: Օրինակ, տպիչը կամ բազմացման սարքը ոչ միշտ են լիցքավորված կամ ծառայում են ոչ բոլոր աշակերտներին և ուսուցիչներին: Արդյունքում, խնդիրը լուծվում է ծնողների անմիջական մասնակցությամբ, ինչը ընդունված պրակտիկայի է վերածվել:

*Առանց ծնողի օգնության հարցերը ընկնում են ականջի հետև ու առաջ չեն գնում: ու աշխատակրը կատարվում է, ու դրանք եսիմ ինչ գումարներ չեն:*


**Դպրոցի տնօրեն, Արագածոտն**

Մարզային քննարկումները հնարավորություն տվեցին նաև անդրադառնալ այս հարցերին առավել խորությամբ: Այսպես, համակարգիչներից օգտվելու բարձր ցուցանիշը ուսուցիչների շրջանում պայմանավորված է հիմնականում *dasaran.am* հարթակում ուսումնական գործընթացի վերաբերյալ տվյալներ մուտքագրելու հանգամանքով: Ընդ որում, դպրոցական համայնքի մի մասի կարծիքով այդ մուտքագրումը կրում է պարտադիր բնույթ, իսկ մյուս մասը տեղեկացված է, որ այն կրում է ոչ պարտադիր բնույթ: Նշենք, որ համաձայն ՀՀ ԿԳՆ և «Նոր սերնդի դպրոց» ՀԿ-ի միջև 2016թ. կնքված փոխըմբռման հուշագրի, ԿԳՆ-ն իր իրավասությունների և լիազորությունների սահմաններում կաջակցի ՀՀ տարածքում գործող բոլոր դպրոցներին՝ *dasaran.am* հարթակի շրջանակներում համագործակցելու նշված ՀԿ-ի հետ և կատարելու բոլոր անհրաժեշտ գործողությունները: Այսինքն, այժմ առկա է տարակարծություն ԿԳՆ-ի այս աջակցության մասին, ընդ որում, հարթակում այդ գործողությունների իրականացման պարտադիր լինելու հանգամանքը դպրոցական համայնքի շրջանակներում ամրապնդվել է պարբերաբար մարզպետարանից դպրոցներին ուղարկվող գրություններով, համաձայն որոնց, դպրոցներին տրվում են գնահատականներ, թե որքանով են վերջիններս ակտիվ, «պարտաճանաչ» լրացնում պահանջվող տվյալները: Այս մշտադիտարկման շրջանակներից դուրս էր այս հարցի խորքային ուսումնասիրությունը, սակայն կարծում ենք, որ այն պետք է դառնա հետագա մասնագիտական ուսումնասիրության թեմա՝ հարթակի՝ ուսումնական գործընթացի արդյունավետության վրա ազդեցության տեսանկյունից, ինչպես նաև ոչ պակաս կարևոր՝ աշակերտների անձնական տվյալների գաղտնիության պահպանման, երաշխավորության տեսանկյունից:

Դպրոցում համակարգիչ/համացանցից չօգտվելու հիմնական պատճառ նշվել է անհրաժեշտության բացակայությունը: Ինֆորմատիկա առարկայի շրջանակներում համակարգիչ օգտվում է աշակերտների 85%-ը:

Ընդհանուր առմամբ, թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները գոհ են համակարգչային սենյակի հագեցվածությունից: Որոշակի տարբերություններ, այնուամենայնիվ, առկա են համակարգչային սենյակից օգտվող («միշտ» և «հաճախ») և չօգտվող («երբեմն» և «երբեք») աշակերտների կարծիքների մեջ:


**Գծապատկեր 36. Որքանով եք գոհ համակարգչային սենյակի հագեցվածությունից: (%)**



Գծապատկեր 36-ում տեսնում ենք, որ եթե համակարգչային սենյակից օգտվող աշակերտների 91%-ն է գոհ հագեցվածությունից, ապա չօգտվողների 69%-ն է գոհ: Նույնանման իրավիճակ է ուսուցիչների մոտ. օգտվողների 84%-ն է գոհ, իսկ չօգտվողների՝ 62%-ը:

Դիտարկված դպրոցներից յուրաքանչյուրում, միջինում, առկա է 18 համակարգիչ: Դպրոցներում առկա անսարք համակարգիչների թիվը կազմում է դիտարկված համակարգիչների թվի ընդամենը 3%-ը: Սարքին վիճակում գտնվող համակարգիչների թիվն, ըստ դպրոցների քանակի, ներկայացված է ստորև:

**Գծապատկեր 37. Համակարգիչներ թիվն ըստ դպրոցների քանակի (N, դիտարկում)**



MS Office-ի ծրագրերն առկա են բոլոր համակարգիչներում: Դպրոցներում օգտագործվող ամենատարածված Windows-ի տարբերակը Windows 2007-ն է: Դպրոցներում առկա 728 համակարգիչներից 431-ում օգտագործվում է այս տարբերակը:

**Աղյուսակ 8. Համակարգիչների քանակն ըստ Windows-ի տարբերակների (N, դիտարկում)**

Windows 2007	431
Windows 2010	95
Windows XP	70
Windows 2001	64
Windows 2003	18
Windows 2008	16
Windows 2018	14
Windows 2016	7
Windows 7 Ultimat	6
Windows V7	6
Windows 2002	1

Այսպիսով, տեսնում ենք, որ դպրոցներում առկա համակարգիչների օպերացիոն համակարգերի մեծ մասը թարմացման կարիք ունի: Դպրոցներում համակարգիչների սպասարկումը պատշաճ մակարդակով չի իրականացվում փաստացի, չնայած դպրոցներում առկա են օպերատորի հաստիքներ, որոնց էլ հենց վերապահված է այդ գործառնությունը: Արդյունքում, երեխաները չեն կարողանում օգտվել համակարգիչներից և համացանցից անսարքության պատճառով կամ նրանց չի թույլատրվում օգտվել՝ հնարավոր անսարքությունն ստեղծելու պատճառով:

*Անցյալ կիսամյակ ես 3 հատ ֆլեշկա եմ վառել դպրոցի համակարգչում վիրուս լինելու պատճառով, ո՞վ պիտի դրա համար պատասխան տա:*

**Ուսուցիչ, Արագածոտն**

*Էստեղ նաև երեխեքի շնորքն էլ պիտի լինի. Իրենք գալիս են ու ետ համակարգիչների վրա փոխանակ դասերով հետաքրքրվեն, բացում են տարբեր խաղեր, նունիսկ քաշում են ու նունիսկ վիրուսներ էլ գալիս: Ու մի ինֆորմատիկային ուսուցչուհին ուղղակի չի կարող այդ ամենը կարգավորել ֆիզիկապես, կարող է պահանջել:*

**Ուսուցիչ, Արագածոտն**

**Աղյուսակ 9.** -ում տեսնում ենք, որ դիտարկված դպրոցներից չորսում տպող սարքեր չկան, 25 դպրոցում առկա է ընդամենը մեկ տպող սարք, իսկ 15-ում կա երկուսից ավելի սարք:

**Աղյուսակ 9. Տպող, պատճենահանող սարքերի առկայությունը դպրոցում (N, դիտարկում)**

Առկա չէ	4
1 հատ	25
2-ից ավելի	15

Յետագոտությանը մասնակցած թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները գտնում են, որ անհրաժեշտ է առավել հաճախ օգտագործել պրոյեկտորները դասերի ընթացքում: Մինչդեռ, միայն 33 դպրոց ունեն պրոյեկտոր, որից 21 դպրոցում առկա է մեկական, իսկ 12-ում՝ երկուսից ավելի պրոյեկտոր: Իսկ 11 դպրոց ընդհանրապես պրոյեկտոր չունեն: Աշակերտների/ ուսուցիչների կարծիքով կա նաև էլեկտրոնային գրատախտակների անհրաժեշտություն:

<b>Աղյուսակ 10. Պրոյեկտորների առկայությունը դպրոցում (N, դիտարկում)</b>	
Առկա չէ	11
1 հատ	21
2-ից ավելի	12

### Գրադարանների հագեցվածությունը

Թեպետ հետագոտությանը մասնակցած աշակերտների և ուսուցիչների մեծամասնությունը գոհ է գրադարանի հագեցվածությունից, այստեղ նույնպես առկա են որոշակի բացեր: Մասնավորապես, դպրոցներից 21-ում գրադարանում համակարգիչ չկա, 9 դպրոցի գրադարանում առկա է մեկական համակարգիչ և միայն 12 դպրոցում կա երկու և ավելի համակարգիչ:

Մյուս պարագաների/սարքերի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է [Աղյուսակ 4](#)-ում:


<b>Աղյուսակ 4. Գրադարանի հագեցվածությունը</b>			
	Առկա չէ	1 հատ	2 և ավելի
Յամակարգիչ	21	9	12
Քարտարան	10	34	
Գրադարակ	6	11	26
Տպող, պատճենահանող սարք	23	8	13
Projector	29	15	
Ընթերցանության հարմարություն	19	25	

Ինչպես տեսնում ենք, գրադարաններում նույնպես առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, դպրոցներից 19-ում չկան անգամ ընթերցանության համար հարմարություններ (սեղաններ և աթոռներ): Մարզային քննարկումների ժամանակ ևս այս խնդիրը մատնանշվեց ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների և ծնողների կողմից:

### Քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաների կահավորումը

Յետագոտությանը մասնակցած աշակերտների բնագիտական առարկաների շրջանակներում լաբորատոր աշխատանքների մասին հարցի պատասխանները ներկայացված են [Գծապատկեր 38](#)-ում:

**Գծապատկեր 38. Բնագիտական առարկաների շրջանակներում սովորաբար կատարո՞ւմ եք լաբորատոր փորձեր (%)**



Յետագոտության արդյունքների համաձայն, լաբորատոր փորձերի կատարումը ֆիզիկա առարկայի շրջանակներում ամենաշատը նշվել է Արմավիրի մարզի աշակերտների կողմից (95%), իսկ ամենաքիչը՝



Տավուշի մարզի աշակերտների կողմից (56%): Քիմիա առարկայի շրջանակներում լաբորատոր փորձերի կատարումն ամենաքիչը նշվել է Վայոց Ձորի աշակերտների կողմից (48%), իսկ ամենաշատը՝ Լոռու մարզի (89%) աշակերտների կողմից: Կենսաբանություն առարկայի շրջանակներում լաբորատոր փորձեր առավել շատ կատարում են Լոռու մարզում (86%), իսկ ամենաքիչը՝ կրկին Տավուշի մարզում (45%): Հետազոտության արդյունքների համաձայն, լաբորատոր փորձերի կիրառության հաճախականությունն անմիջական կապ ունի դպրոցներում համապատասխան լաբորատոր պայմանների և գույքի առկայության հետ:


**Աղյուսակ 5. Քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիայում առկա է... (N, դիտարկում)**

Գույք և պարագաներ		Առկա է	Առկա չէ	Լաբորատորիաներ չունեն
Քիմիայի լաբորատորիա	Քարշիչ պահարան	12	22	10
	Քիմիական նյութերի պահպանման համար փակ պահարան	17	17	10
	Չիրկիզվող պահարան	8	26	10
	Վարագույր/ շերտավարագույր	25	9	10
Ֆիզիկայի լաբորատորիա	Ֆիզիկական սարքավորումներ՝ մագնիս, չափման գործիքներ և այլն	32	3	9
	Վարագույր/ շերտավարագույր	22	13	9

Ինչպես տեսնում ենք **Աղյուսակ 5**-ում, դիտարկված դպրոցներից 10-ում քիմիայի, իսկ 9-ում՝ ֆիզիկայի լաբորատորիաներ չկան, միևնույն ժամանակ, քիմիայի լաբորատորիաների համար անհրաժեշտ գույքն առկա է դիտարկված դպրոցների փոքր մասում:

Բացի դիտարկման արդյունքներից, լաբորատորիաների հագեցվածությունը գնահատվել է նաև աշակերտների և ուսուցիչների կողմից:

**Գծապատկեր 39. Որքանո՞վ եք գոհ լաբորատորիաների հագեցվածությունից (%)**



**Գծապատկեր 39**-ից երևում է, որ աշակերտների 27%-ը դժվարացել է գնահատել լաբորատորիաների հագեցվածությունը և միայն 35%-ն է գոհ հագեցվածությունից: Իսկ ուսուցիչների 60%-ն է նշել, որ գոհ է հագեցվածությունից, իսկ 15%-ն էլ նշել է, որ շատ գոհ է:

**Նկարներ ուսումնասիրված դպրոցներից**



Մարզային քննարկումների ժամանակ այս հարցի վերաբերյալ հնչեցին հետաքրքրական տեղեկություններ, մասնավորապես՝ որոշ դպրոցներ, ցանկանալով ձեռք բերել անհրաժեշտ լաբորատոր գույք, չեն կարողանում կազմակերպել գնումների գործընթացը, քանի որ, նախ, նմանատիպ գույք կարելի է ձեռք բերել անհատներից, որոնց կանխիկ ձևով վճարումից խուսափում են դպրոցների տնօրենները, ապա, հաճախ չեն կարողանում գտնել նաև համապատասխան գույք: Որոշ դպրոցներ ստացել են նաև նվիրատվություն, սակայն վերջիններս բավականին անտրակ են եղել և չեն ծառայել նպատակին: Դպրոցական համայնքը ակնկալում է այս հարցում պետական մոտեցում բոլոր դպրոցներին լաբորատոր գույքի միանվագ տրամադրման առումով:

**Մարզադահլիճի կահավորումը և մարզասարքերի առկայությունը**

Դիտարկման ընթացքում մարզադահլիճի կահավորումը որպես «վատ» կամ «շատ վատ» է գնահատվել դպրոցների 43%-ում: Միևնույն ժամանակ, մարզադահլիճի հագեցվածությունից դժգոհ են ուսուցիչների 33%-ը, իսկ աշակերտների՝ ընդամենը 22%-ը:

Այժմ տեսնե՞ք, թե ինչպիսի մարզական գույք է առկա դպրոցներում:<sup>33</sup>

**Աղյուսակ 6. Դպրոցում առկա է... (N, դիտարկում)**

Մարզական գույք և պարագաներ	Առկա է	Առկա չէ
Մարզադահլիճ խաղերի համար	38	6
Մարմնամարզության և մարզասարքերի մարզադահլիճ	16	28
Մարզախաղերի համալիր մարզահրապարակ	25	19
Աթլետիկական վարժությունների համար վազբուլդներ	19	25
Աթլետիկական վարժությունների համար ցատկափոս	14	30
Աթլետիկական վարժությունների համար նետումների համար հատված	22	22
Դպրոցում առկա են հանդերձարաններ	34	10
Մարմնամարզական գործիքներ-գուգափայտ	24	20
Մարմնամարզական գործիքներ-պտտածող	27	17
Մարմնամարզական գործիքներ-մարմնամարզական գերան	11	33
Մարմնամարզական գործիքներ-մարմնամարզական պատ	26	18
Մարմնամարզական գործիքներ-մարմնամարզական նստարան	28	16
Մարմնամարզական գործիքներ-ներքակներ	25	19
Մարմնամարզական գործիքներ-մարզափայտեր	13	31
Մարմնամարզական գործիքներ-օղեր	28	16
Մարմնամարզական գործիքներ-ցատկապարաններ	31	13
Մարմնամարզական գործիքներ-մարմնամարզական այծիկ	25	19
Մարմնամարզական գործիքներ-մարմնամարզական կամրջակ	21	23
Մարմնամարզական գործիքներ-լցրած գնդակներ	13	31
Մարմնամարզական գործիքներ-մարմնամարզական պարան մագլցման համար	22	22
Մարմնամարզական գործիքներ-գուրգեր (բուլավա)	12	33
Մարմնամարզական գործիքներ-մարմնամարզական ժապավեն	7	37
Մարմնամարզական գործիքներ-ռետինե գնդակներ	19	25
Մարզախաղերի պարագաներ -բասկետբոլի գնդակներ	24	20
Մարզախաղերի պարագաներ -վոլեյբոլի գնդակներ	27	17
Մարզախաղերի պարագաներ -հանդբոլի գնդակներ	14	30
Մարզախաղերի պարագաներ -ֆուտբոլի գնդակներ	31	13
Մարզախաղերի պարագաներ -թենիսի սեղան	24	20

<sup>33</sup> Ըստ «Հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչներում առկա ցանկի

Մարզական գույք և պարագաներ	Առկա է	Առկա չէ
Մարզախաղերի պարագաներ -սեղանի թենիսի գնդակներ	21	23
Մարզախաղերի պարագաներ -սեղանի թենիսի ռակետկա	22	22
Աթլետիկական պարագաներ -բարձր կանգնակներ	7	37
Աթլետիկական պարագաներ -ծող	12	32
Աթլետիկական պարագաներ -Էստաֆետային փայտիկներ	21	23
Աթլետիկական պարագաներ -վայրկյանաչափ	24	20
Աթլետիկական պարագաներ -չափեզր	18	26
Աթլետիկական պարագաներ -դրոշակներ՝ սպիտակ-կարմիր	16	28
Աթլետիկական պարագաներ -թիրախ	12	32
Աթլետիկական պարագաներ -սուլիչներ	31	13
Աթլետիկական պարագաներ -փոքր գնդակներ	24	20
Աթլետիկական պարագաներ -նռնակներ	2	42
Աթլետիկական պարագաներ -ձմեռային պարապմունքների համար դահուկային կոմպլեկտ	2	42
Աթլետիկական պարագաներ -ուժային պատրաստության համար	18	26
Աթլետիկական պարագաներ -կցազնոներ	9	35
Աթլետիկական պարագաներ -Էսպանդերներ զսպանակով	8	36
Աթլետիկական պարագաներ -մարզասարքեր	11	33
Աթլետիկական պարագաներ -ուժաչափ	19	25
Աթլետիկական պարագաներ -շախմատ	38	6
Աթլետիկական պարագաներ -բարձրախոս	12	32
Աթլետիկական պարագաներ -մագնիտոֆոն կամ նվագարկիչ	13	31
Աթլետիկական պարագաներ -ձայներիզներ տարբեր ռիթմերով	8	36

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 6-ում, դիտարկված 44 դպրոցներից 38-ում առկա է մարզադահլիճ խաղերի համար, մարզախաղերի համալիր մարզահրապարակ առկա է 25 դպրոցում, իսկ ահա մարմնամարզության և մարզասարքերի մարզադահլիճ առկա է ընդամենը 28 դպրոցում: Իսկ աթլետիկական պարագաների և մարմնամարզական գործիքների գրեթե բոլոր տեսակները դիտարկված դպրոցների մեծամասնությունում բացակայում են: Հետազոտությանը մասնակցած աշակերտների 51%-ի կարծիքով ֆիզկուլտուրա առարկայի ընթացքում իրենք ամբողջովին ապահովված են անհրաժեշտ մարզական գույքով և միայն 4%-ն է նշել, որ բոլորովին ապահովված չեն:

### Արտակարգ իրավիճակների կառավարման համակարգը դպրոցներում

Հետազոտության ընթացքում տնօրենների կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ուսումնասիրված բոլոր 50 դպրոցներն ունեն աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) և արտակարգ իրավիճակների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը: Մինևույն ժամանակ, դպրոցներում գործում են ԱՌՆ խորհուրդներ: Անհրաժեշտ փաստաթղթերի առկայության մասին տեղեկատվությունն ըստ դպրոցների բանակի ներկայացված է Աղյուսակ 14-ում:


### Աղյուսակ 7. Աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ փաստաթղթերի առկայությունը (տնօրենների հարցում, դպրոցների թիվ)

ԱՌՆ փաստաթղթեր	Առկա է	Առկա չէ
Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների համակարգի վերաբերյալ փաստաթղթեր կամ տեղեկատվություն	50	0
Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման թերթիկներ	40	10
Կարողությունների բացահայտման թերթիկներ	39	11

ԱՌՆ փաստաթղթեր	Առկա է	Առկա չէ
Դպրոցի աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու համակարգի գործելու մասին տնօրենի հրամանը	46	4
Աղետների ռիսկին նվազեցման միջոցառումների տարեկան պլան-ժամանակացույց	46	4
Տարհանման սխեմա	50	0
Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների միջոցառումների հաշվառման թերթիկ	45	5
Դպրոցի և շրջակա տարածքում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների վիճակագրական տվյալների և տեղեկատվության մատյան	41	9
Ծնողների տվյալների բազայի առկայություն	45	5

Չնայած դպրոցներում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների պլանի/տարհանման պլանի առկայությանը՝ աշակերտների միայն 42%-ն է ծանոթ այդ փաստաթղթերի հետ: Ի տարբերություն աշակերտների՝ ուսուցիչների մեծամասնությունը (92%-ը) ծանոթ է այդ փաստաթղթերին:


**Գծապատկեր 40. Ծանոթ եք դպրոցի աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների պլանի/տարհանման պլանի հետ:**



ԱՌՆ և արտակարգ իրավիճակների պլանի մշակմանը մասնակցել է այդ փաստաթղթին ծանոթ աշակերտների ընդամենը 36%-ը (հետազոտությանը մասնակցած աշակերտների 20%-ը): Ուսուցիչներն առավել ակտիվ մասնակցություն են ունեցել այդ փաստաթղթի մշակմանը. հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 44%-ը մասնակցել է փաստաթղթի մշակմանը:

Հետազոտության մասնակիցները պատասխանել են նաև այն հարցին, թե երբ է վերջին անգամ իրականացվել տարհանում ուսումնական նպատակով (Գծապատկեր 41):

**Գծապատկեր 41. Վերջին անգամ ե՞րբ է դպրոցում իրականացվել տարհանում ուսումնական նպատակով: (%)**



Ինչպես տեսնում ենք, թե՛ աշակերտների և թե՛ ուսուցիչների մոտ որոշակի տարակարծություններ կան տարհանման իրականացման ժամանակահատվածի առնչությամբ, ընդ որում, աշակերտների 36%-ը չի հիշում, թե երբ է այն իրականացվել, իսկ ուսուցիչների 51%-ը նշում է, որ այն իրականացվել է այս

կիսամյակի ընթացքում: Դպրոցներում յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ, հիմնականում մարտի 1-ին՝ քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվան նվիրված, իրականացվում է ուսումնական տարիանում:<sup>34</sup> Զետևաբար, նման տարակարծությունը կարող է պայմանավորված լինել մի քանի հանգամանքներով՝ տարիանման օրը աշակերտների բացակայությամբ կամ աշակերտների կողմից գործողությունը որպես տարիանում չընկալելով, կամ որևէ խմբի կողմից ոչ անկեղծ պատասխաններ տալու հանգամանքով:

Զետագոտության ընթացքում իրականացվել է նաև արտակարգ իրավիճակների կառավարման համակարգի դիտարկում, որի արդյունքները ներկայացված են ստորև:<sup>35</sup>

**Աղյուսակ 8. Դպրոցում առկա է... (դպրոցների քանակ, դիտարկման արդյունքներ)**

Արտակարգ իրավիճակների կառավարման համակարգ, սարքավորումներ և այլն	Առկա է	Առկա չէ
Հրդեհի ահազանգման համակարգ	23	21
Չակագազեր	33	11
Ածխաթթվային և փոշային կրակմարիչ	40	4
Տարիանման ուղիներ և ելքեր	40	4
Տարիանման գծապատկերային պլան	39	5
Կոնաձև դույլ	29	15
Բահ սուր ծայրով	34	10
Հրշեջի կացին	18	26
Լինգ	33	11
Կեռ լինգ	30	14
Ձեռնոց	17	27
Կոշիկ	7	37
Գլխարկ	5	39
Պատգարակ	20	24
Մանրեագերծված փաթույթային վիրակապ՝ բինտ	23	21
Էլաստիկ վիրակապ	20	24
Ձեռքը ֆիքսող բժշկական վիրակապ	14	20
Լեկոպլաստիք	21	14
Բամբակ	24	11
Էլաստիկ լարան (ժգուտ)	17	27
Վիրաբուժական կլոր մկրատ	10	23
Վիրաբուժական ունեղի	9	24
Սեղմակ	14	19
Ախտահանված և չախտահանված ձեռնոցներ	14	20
Բժշկական սպեղանի	16	18
Խոնավ անձեռոցիկ, ախտահանված անձեռոցիկ	17	16
Մանրեագերծված թանզիֆե անձեռոցիկ	11	23
Լիցքավորվող լապտեր	9	24

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 6-ում, արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերը դպրոցներում ամբողջությամբ համալրված չեն անհրաժեշտ պարագաներով, իսկ որոշ պարագաներ բացակայում են դիտարկված դպրոցների մեծ մասում:

<sup>34</sup> <http://www.mes.am/hy/news/item/2019/03/01/varjanq0103/>

<sup>35</sup> [Ըստ աղետների պատրաստվածության սարքավորումների և պարագաների երաշխավորվող/առաջարկվող/ գանկի](#)

## ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԵՐԵՆԱՆԵՐԻ ԲՈՒԺՍՊՈՍԱՐԿՄԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

Աշակերտները իրենց առօրյայի զգալի մասն անց են կացնում դպրոցներում, հետևաբար, նրանց բարոյափոփոխական վիճակը, ֆիզիկական և մտավոր առողջությունը մեծապես պայմանավորված են այն պայմաններով և միջավայրով, որն առկա է դպրոցներում: Այս բաժնում ներկայացված են դպրոցներում բուժսպասարկման առկա վիճակի գնահատման արդյունքները:

Հետազոտության արդյունքների համաձայն, աշակերտների մոտ որոշակի հաճախությամբ տարբեր տեսակի թուլության նշաններ են նկատվում (Աղյուսակ 9): Մասնավորապես, **աշակերտների 38%-ը նշել է, որ գրեթե ամեն օր հոգնածություն է զգում, ընդ որում, այդպես է նշել աղջիկների 45%-ը և տղաների 31%-ը:**

Աղյուսակ 9. Որքա՞ն հաճախ եք զգում... (% , աշակերտներ)

	Աշակերտներ				
	Գրեթե ամեն օր	Ամիսը մի քանի անգամ	Ամիսը մեկ անգամ	Երբեք	Դ.պ.
Գլխացավ	8	30	35	27	0
Փորացավ	3	23	41	32	1
Ատամնացավ	4	14	31	50	2
Հոգնածություն	38	29	13	19	1
Թուլություն	12	19	24	43	1
Տեսողության խանգարում	9	6	7	79	0
Աղջիկներ					
Գլխացավ	9	35	36	19	0
Փորացավ	2	26	45	26	1
Ատամնացավ	3	16	33	47	2
Հոգնածություն	45	31	12	12	1
Թուլություն	16	21	25	36	2
Տեսողության խանգարում	13	7	7	73	0
Տղաներ					
Գլխացավ	7	23	33	36	1
Փորացավ	3	20	37	39	1
Ատամնացավ	5	11	28	55	2
Հոգնածություն	31	26	15	26	1
Թուլություն	6	17	24	52	1
Տեսողության խանգարում	4	4	7	86	0

Աշակերտների մոտ հոգնածության զգացողությունը կարող է պայմանավորված լինել ուսումնական ծանրաբեռնվածությամբ: Չնայած նրան, որ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի հրամանով հստակ սահմանված են օրական թույլատրելի և ուսումնական ծանրաբեռնվածության նորմերը, աշակերտների և ուսուցիչների մի մասը գտնում է, որ աշակերտները օրվա ընթացքում հոգնում են և չեն կարողանում յուրացնել դասը:

Աշակերտների 30%-ը նշել է, որ ամսվա ընթացքում մի քանի անգամ գլխացավ է ունենում, ընդ որում, այդուհետև երևում է, որ աղջիկներն ավելի հաճախակի են ունենում գլխացավեր, քան տղաները: Թուլության նմանատիպ նշանները հաղթահարելու նպատակով մասնագետները, ճիշտ սննդակարգի և հեղուկի օգտագործման հետ մեկտեղ, խորհուրդ են տալիս նաև, որ երեխաները պետք է շատ շարժվեն



օրվա ընթացքում և ֆիզիկապես ավելի ակտիվ լինեն: Հետազոտության արդյունքների համաձայն, աշակերտների ընդամենը 7%-ն է նշել, որ դասերի ընթացքում, ուսուցչի ուղղորդմամբ, լիցքաթափող ֆիզիկական վարժություններ է կատարում, իսկ 51%-ը նշել է, որ ընդհանրապես չի կատարում:

Այն հարցին, թե արդյոք դպրոցում կա վայր, որտեղ կարող են հանգստանալ, աշակերտների 71%-ը նշել են, որ նման վայր կա: Ուսուցիչների 70% նույնպես նշել է, որ դպրոցում առկա է վայր, որտեղ կարող են առանձին աշխատել կամ հանգստանալ դասաժամերից հետո:

Այժմ տեսնենք, թե բժշկական միջամտության անհրաժեշտության դեպքում ինչպես են վարվում աշակերտները: Աշակերտների 24%-ը նշել է, որ երբևէ դպրոցում մարմնական վնասվածք ստացել է, 54%-ը՝ չի ստացել, իսկ 22%-ը նշել է, որ չի հիշում: Վնասվածք ստանալուց հետո այդ աշակերտների 38%-ը առաջին բուժօգնությունը ստացել է դասընկերների, 20%-ը՝ ուսուցչի, և միայն 18%-ն է նշել, որ ստացել է դպրոցի բուժքոչ կողմից:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ դպրոցներում բուժաշխատողի ներկայությունը պայմանավորված է աշակերտների թվով՝ ըստ իրավական կարգավորման մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցներում բուժկետի առկայությունը պարտադիր չէ, իսկ բուժաշխատողի ծանրաբեռնվածությունը տատանվում է քառորդ դրույքից մինչ մեկ դրույք՝ կախված աշակերտների թվից:

*Ամբուլատորիայի բժիշկը ամեն օր չի գալիս և դպրոցում հետևող չկա: /.../ Գյուղական համայնքում 6-10 գյուղ սպասարկում է 1 բժշկական հաստատության ամբուլատորիա: Բուժաշխատողների քանակն էլ չի հերիքում: Ինչն է խանգարում թեկուզ 0,5 դրույքով յուրաքանչյուր դպրոցի տալ մշտական բուժաշխատող անկախ այդ դպրոցում սովորողների քանակից*

**Մարգալետարանի ներկայացուցիչ, Շիրակ**

*Մեր մոտի բուժկետի բուժքույրը մեր աշխատողը չի: Նա պոլիկլինիկայի աշխատող է, որը կցված է կոնկրետ դպրոցի: Իրենց հետ որոշակի խնդիրներ է առաջանում: Լավ կլիներ, որ հարցը լուծվեր զինղեկի պես, այսինքն զինղեկը մեր աշխատողն է, բայց զինկոմիսարիատի համաձայնությամբ:*

**Դպրոցի տնօրեն, Տավուշ**

*Մեզ մոտ բուժքույրը աշխատում է միայն ջերմություն չափելու և սանտավիկ տալու համար:*

**Աշակերտ, Արագածոտն**

Աշակերտները նաև պատասխանել են այն հարցին, թե որքան հաճախ են օգտվում բուժկետից, և միայն նրանց 17%-ն է նշել, որ միշտ կամ հաճախակի օգտվում է: Որպես բուժկետից չօգտվելու հիմնական պատճառներ աշակերտները նշել են, որ դրա կարիքը չի եղել (26%), իսկ որոշ դեպքերում՝ նաև բուժկետերի բացակայությունը (19%): Իսկ ուսուցիչների 21%-ն է նշել, որ միշտ կամ հաճախակի օգտվում է:


Դիտարկման արդյունքում արձանագրվել են ժամկետանց դեղեր և դեղամիջոցներ, ինչպե նաև պահպանման ոչ պատշաճ պայմաններ:

## Նկարներ ուսումնասիրված դպրոցներից



Ըստ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման» չափորոշիչի<sup>36</sup>, սահմանված է անհրաժեշտ բժշկական ստուգումների ցանկ՝ ըստ երեխայի տարիքի: **Գծապատկեր 42-** ում ներկայացված է, թե ինչպիսի բժշկական ստուգումներ են անցել երեխաները ուսումնական տարվա ընթացքում և որտեղ են անցել այդ ստուգումը:

### Գծապատկեր 43. Ինչպիսի՞ բժշկական ստուգումներ եք անցել ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում (% , աշակերտներ)



<sup>36</sup> ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ 70-Ն հրաման <https://www.arlis.am/documentview.aspx?docid=97455>



Գծապատկեր 43-ում տեսնում ենք, որ քաշի և հասակի ստուգումներ անցնում են գրեթե բոլոր աշակերտները, մնացած ստուգումներն անցնում են ըստ անհրաժեշտության կամ ընդհանրապես չեն անցնում: Ընդ որում, քաշի և հասակի ստուգումներ աշակերտների մեծամասնությունն անցնում դպրոցում, իսկ մյուս ստուգումները հիմնականում անցնում են պոլիկլինիկայում: Յետազոտությանը մասնակցած աղջիկների 31%-ը գինեկոլոգիական ստուգումներ է անցել պոլիկլինիկայում: Տղաների 36%-ն է գինվորական կոմիսարիատում կցագրվողների առողջական վիճակի ստուգում անցել պոլիկլինիկայում: Սակայն, ինչպես տեսնում ենք գծապատկերում, աշակերտների մի զգալի մասը չի անցել ամենամյա ստուգումներ կյարդաբանի մոտ, ողնաշարի զննում, լսողության ստուգում, ինչը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով.


- Որոշ դպրոցներին կցված պոլիկլինիկաներում բուժսպասարկման որակը գնահատվում է ցածր, չկա դրանց որակի նկատմամբ հանրային վստահություն, որի պատճառով աշակերտները, նրանց ծնողները նախընտրում են չանցնել ստուգումներ: Ընդ որում, անվստահությունը վերաբերում է ինչպես որակին, այնպես էլ բժշկական գաղտնիքի պահպանմանը: Ըստ մարզային քննարկումների արդյունքների, հաճախ ծնողները նախընտրում են չարձանագրել իրենց երեխայի առողջական խնդիրը համապատասխան բժշկական քարտում, քանի որ վստահ չեն, որ այդ ինֆորմացիան չի տարածվի դպրոցական համայնքում:<sup>37</sup>
- Աշակերտները, ծնողները տեղեկացված չեն պարտադիր ստուգումների ցանկի վերաբերյալ:
- Աշակերտները և ծնողները չեն գիտակցում պարտադիր ստուգումների անհրաժեշտությունը:
- Աշակերտները միայն անցնում են այն պարտադիր ստուգումները, ըստ որոնց որոշվում է նրանց ներգրավվումը ֆիզիկական պատրաստվածության առարկայի համապատասխան խմբում:

Աշակերտների 20%-ը նշել է, որ դպրոցում կամ պոլիկլինիկայում զննումների ընթացքում, բացի բուժաշխատողներից, ներկա է եղել այլ մարդ (որպես կանոն, ծնողները): Յետազոտության արդյունքների համաձայն, ծնողները հիմնականում տեղեկացված են դպրոցում և բուժհաստատություններում իրենց երեխայի բժշկական զննության արդյունքներից: Այնուամենայնիվ, տեղեկատվության տրամադրման գործընթացը համակարգված բնույթ չի կրում: Այսպես, աշակերտների 82%-ը նշել է, որ բուժզննման արդյունքների մասին ծնողներն իմացել են, իսկ 14%-ը՝ որ չեն հաղորդել ծնողներին: Ծնողների մեծ մասը բուժզննման արդյունքների մասին տեղեկանում է պոլիկլինիկայում անձամբ բուժող բժիշկից, տեղեկատվության երկրորդ աղբյուրը դասուցելն է, դպրոցի բուժքույրը կամ տնօրենը և միայն երրորդ տեղում անձամբ աշակերտը:

Աշակերտների 60%-ը նշել է, որ ընթացիկ ուսումնական տարում իրենց դպրոցում առողջ ապրելակերպի վերաբերյալ միջոցառումներ են անցկացվել: Ըստ մարզերի այդ միջոցառումների անցկացման մասին տեղեկությունը կարող ենք տեսնել ստորև: Գծապատկերում տեսնում ենք, որ Սյունիքի մարզի դպրոցներում այդպիսի միջոցառումներ ավելի շատ են իրականացվել, քան մյուս մարզերում, իսկ ամենաքիչը Արագածոտնի մարզում են իրականացվել:


<sup>37</sup> Այս թեմայի վերաբերյալ մարզային քննարկումների ժամանակ դպրոցի ուսուցիչներից մեկը կարծիք հայտնելիս հիշատակեց մի դեպք, որի ժամանակ նշեց երեխայի անձնական տվյալները:

**Գծապատկեր 44. Ընթացիկ ուսումնական տարում դպրոցում իրականացվել են առողջ ապրելակերպի վերաբերյալ միջոցառումներ (այո, %, ըստ մարզերի)**



Աշակերտները և ուսուցիչները նաև իրենց կարծիքն են հայտնել դպրոցի բուժկետերի հագեցվածության մասին (Գծապատկեր 45):

**Գծապատկեր 45. Որքանով եք գոհ բուժկետի հագեցվածությունից (%)**



Դիտարկված 44 դպրոցից 11-ում բուժկետ չկա/ չի գործում: 44 դպրոցներից միայն 4-ում է բուժկետի մաքրությունը գնահատվել որպես վատ կամ շատ վատ: Գծապատկերից տեսնում ենք, որ աշակերտների 65%-ն է գոհ բուժկետի հագեցվածությունից, իսկ ուսուցիչների՝ 42%-ը:

Աղյուսակ 10-ում ներկայացված են բուժկետի կամ բժշկի սենյակի դիտարկման արդյունքները.

**Աղյուսակ 10. Դեղորայքի և պարագաների առկայությունը դպրոցի բուժկետում (N, դիտարկում)**

	Դեղորայք և պարագաներ	Առկա է	Առկա չէ	Ժամկետանց, հին
Առաջնային օգնության դեղերի	Հակահիստամինային պատրաստուկ	11	33	0
	Կորտիկոստերոիդներ	8	36	0
	Ստիմուլյատորներ	6	38	0
	Ջերմիջեցնող/ցավազրկող	27	17	0
	Սպազմոլիտիկ	16	28	0
	Կատվախտի հանուկ	21	23	0
	Կատվախտի ոգեթուրմ	23	21	0
	Ջրածնի պերօքսիդի լուծույթ 3%	23	21	0
	Սպիրտ բժշկական 70%	26	18	0
	Յոդի ոգեթուրմ 5%	25	17	2
	Անուշադրի սպիրտ 10%	23	21	0

Դեղորայք և պարագաներ	Առկա է	Առկա չէ	Ժամկետանց, հին
Խոնավածուծ սպեղանի	20	24	0
Վիրակապ, ոչ ստերիլ	26	17	1
Վիրակապ, ստերիլ	25	18	1
Բամբակ	29	15	0
Ռետինե սեղմակ	22	22	0
Ներարկիչ (2 մլ, 3մլ)	20	23	1
Սեղան	30	14	0
Աթոռ	30	14	0
Հասակաչափ	26	18	0
Կշեռք	24	20	0
Բժշկական թախտ	24	19	1
Տեսողության ստուգման աղյուսակ	20	24	0
Ռոտի ապարատ	5	39	0
Մոնոկուլյար օկյուղոր	5	39	0
Տոնոմետր	24	20	0
Բժշկական ջերմաչափ	28	16	0
Ապակե պահարան՝ առաջին օգնության անհրաժեշտ դեղերի համար	22	21	1
Շինա	14	30	0
Լվացարան	13	31	0
Ախտահանման լուծույթ	19	25	0

Հանրակրթական դպրոցների բուժկետի/կաբինետի բժշկական գործիքների և սարքավորումների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ,<sup>38</sup> իսկ անհրաժեշտ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ցանկը առողջապահության նախարարի հրամանով:<sup>39</sup> Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 10-ում, անգամ առաջին բուժօգնության պարագաներն առկա են ոչ բոլոր դպրոցներում: Հստակեցված չէ, թե որ կառույցն է պատասխանատու այդ սարքավորումների ապահովման համար՝ դպրոցը, թե պոլիկլինիկան:

*Դու պիտի ձեռք բերես բուժկետի մասով: Բայց շատ դեպքերում բաներ կա, ես շատ ման եմ եկել, չեմ գտել, օրինակ, թե եղ որ կազմակերպությունն ա, որ տրամադրում ա ապակե բժշկական շկաֆ:*

**Դպրոցի տնօրեն, Տավուշ**

Դիտարկված բոլոր դպրոցներում և տնօրենների կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, երեխաների բժշկական քարտերի թիվը հիմնականում համընկնում է դպրոցի աշակերտների թվին, իսկ այն դպրոցներում, որտեղ բուժկետ չկա, բժշկական քարտերը գտնվում են համայնքի բուժկետում/ամբուլատորիայում: Դպրոցներից 21-ում առկա են նաև առողջ ապրելակերպի վերաբերյալ պաստառներ: Այն դպրոցներում, որտեղ բուժկետ չի գործում, բուժքույրը օրվա ընթացքում այցելում է դպրոց: Մարզային քննարկումների ընթացքում այս հարցը ևս մատնանշվեց՝ այն դպրոցներում, որտեղ աշակերտների թվով պայմանավորված՝ կցված է բուժքույր միայն կես կամ քառորդ դրույթաչափով, առաջացած խնդիրների դեպքում դիմում են շտապ օգնության ծառայությանը: Որոշ համայնքներում շտապ օգնության ծառայությունը արագ չի արձագանքում, այսինքն՝ դպրոցում բուժաշխատողի ներկայությունը ողջ ուսումնական գործընթացի ժամանակ պարտադիր է:

<sup>38</sup> ՀՀ կառավարության որոշում, 2002թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1936-Ն որոշման հավելված 1-ի 1.28 կետ

<sup>39</sup> ՀՀ ԱՆ 2002 թ. փետրվարի 11-ի թիվ 82 հրամանի Հավելված 1, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=101288>


**ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՊԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՅՈՒԹԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ**

Այս բաժնում կփորձենք պարզել, թե արդյոք դպրոցի ֆիզիկական պայմանները և դպրոցում առկա բարոյահոգեբանական մթնոլորտը ազդում են աշակերտների կրթական արդյունքների, բարոյահոգեբանական վիճակի և զգացողությունների վրա: Նախորդ բաժիններում մանրամասն անդրադարձ եղավ հետազոտության ընթացքում ուսումնասիրված դպրոցների կոմունալ-կենցաղային պայմաններին, գույքային հագեցվածությանը և անհրաժեշտ կրթական նյութերով և պարագաներով ապահովվածությանը: Այժմ տեսնենք, թե որքանով են ուսումնասիրված պայմանները նպաստում երեխաների առաջադիմությանը և որքանով են դրանք կապված նրանց բարոյահոգեբանական վիճակի հետ:

**Աշակերտների առաջադիմությունը**

Հետազոտության ընթացքում աշակերտները գնահատել են իրենց առաջադիմությունը:

**Գծապատկեր 46. Ինչպիսի՞ն է թո առաջադիմությունը դպրոցում (% , աշակերտներ)**



Գծապատկեր 46-ում տեսնում ենք, որ հարցված աշակերտների 68%-ը իրենց առաջադիմությունը գնահատում են լավ կամ գերազանց: Մինևույն ժամանակ, աղջիկները համեմատաբար ավելի բարձր առաջադիմություն ունեն, քան տղաները: Չնչին տարբերությամբ, համեմատաբար ավելի բարձր առաջադիմություն ունեն նաև 15-16 տարեկան, 11-րդ դասարանի աշակերտները: Հետաքրքրական պատկեր ենք տեսնում նաև ընտանիքի ֆինանսական դրության և առաջադիմության միջև կապի

տեսանկյունից. ակնհայտ է, որ որքան ավելի բարեկեցիկ է ընտանիքը, այնքան ավելի բարձր առաջադիմություն ունեն աշակերտները:


Ինչպես տեսնում ենք, աշակերտների սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները որոշակի դերակատարում ունեն նրանց առաջադիմության հարցում: Այժմ տեսնենք, թե կա արդյո՞ք կապ դպրոցներում առկա պայմանների (ենթակառուցվածքներ, գույքային ապահովվածություն, բարոյահոգեբանական մթնոլորտ) և աշակերտների առաջադիմության միջև: Այս նպատակով **առաջին քայլով** աշակերտների հետ հարցման ընթացքում կիրառված փոփոխականների հիման վրա հաշվարկել ենք երկու տեսակի ինդեքս կամ համաթիվ, որոնց հիման վրա ուսումնասիրված դպրոցները կարելի է բաժանել ըստ նրանց ապահովվածության և առկա բարոյահոգեբանական մթնոլորտի: Համապատասխան փոփոխականների հիման վրա համաթվերի հաշվարկման նպատակով կիրառվել է գործոնային վերլուծության մեթոդը: Մասնավորապես, **դպրոցների ապահովվածության համաթիվը** ներառում է բոլոր փոփոխականները, որոնք վերաբերում են ենթակառուցվածքների, կրթական պարագաների, կոմունալ կենցաղային անհրաժեշտ պայմանների առկայությանը, իսկ դպրոցների բարոյահոգեբանական մթնոլորտի համաթիվը՝ դպրոցում երեխաների զգացողություններին վերաբերող փոփոխականները:

1. Ըստ դպրոցների ապահովվածության համաթվի՝ ուսումնասիրված դպրոցները բաժանվել են երեք խմբի.
  - Քիչ չափով ապահովված դպրոցներ - դպրոցների 26%
  - Մասամբ ապահովված դպրոցներ - դպրոցների 31%
  - Ապահովված դպրոցներ - դպրոցների 43%
2. Ըստ դպրոցների բարոյահոգեբանական մթնոլորտի համաթվի՝
  - Բացասական բարոյահոգեբանական մթնոլորտ - դպրոցների 27%
  - Մասամբ դրական մթնոլորտ - դպրոցների 47%
  - Դրական մթնոլորտ - դպրոցների 26%:

Հետազոտության մեջ ներառված դպրոցների բաշխումն ըստ ֆիզիկական/սյուրթական ապահովվածության և բարոյահոգեբանական համաթվերի ներկայացված են [Աղյուսակ 12](#)-ում ([Հավելված 5. Աղյուսակներ և Գծապատկերներ](#)):

**Երկրորդ քայլով** վերոհիշյալ համաթվերի միջոցով դիտարկվել է դպրոցների ֆիզիկական պայմանների և բարոյահոգեբանական մթնոլորտի կապը աշակերտների առաջադիմության հետ: Ինչպես տեսնում ենք, դպրոցի ֆիզիկական պայմանները Էական ազդեցություն չեն թողնում աշակերտների առաջադիմության վրա. անկախ նրանից, դպրոցներն ապահովված են, թե ոչ, անհրաժեշտ ենթակառուցվածքներով, աշակերտները համանման առաջադիմություն են ցույց տալիս ([Գծապատկեր 47](#) Աշակերտների առաջադիմությունն ըստ ֆիզիկական պայմանների համաթվի (%):

**Գծապատկեր 47 Աշակերտների առաջադիմությունն ըստ ֆիզիկական պայմանների համաթվի (%)**




Ինչպես տեսնում ենք, քանակական տվյալները վկայում են այն մասին, որ դպրոցի ֆիզիկական պայմանների և աշակերտների առաջադիմության միջև ուղիղ կապ չկա, չնայած այն հանգամանքին, որ դպրոցի հարմարությունների և աշակերտների կրթական արդյունքների միջև կապի փոխկապվածության մասին առկա են բազմաթիվ գիտական հետազոտություններ: Սույն հետազոտության շրջանակներում համանման կապի բացակայությունը պայմանավորված է մի շարք գործոններով.

- Այս հետազոտության շրջանակներում առաջադիմության գնահատականը ստացել ենք առաջադիմության ինքնագնահատմամբ, որը և որոշ չափով կարող է տարբերվել փաստացի արդյունքներից:
- Վատ ֆիզիկական պայմանները առաջադիմության վրա ունեն անուղղակի ազդեցություն:
- Եվ որ ամենակարևորն է, աշակերտները և ուսուցիչները կրթական միջավայրն ընկալում են այնպիսին, ինչպիսին կա, այլ կերպ ասած՝ «նորմալ», անգամ, եթե բացակայում է ճաշարանը, գրադարանը կամ համապատասխան մարզական գույքը:


Հատկանշական է, սակայն, որ ի տարբերություն ֆիզիկական պայմանների, դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը որոշակի ազդեցություն ունի աշակերտների առաջադիմության վրա: Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 48-ից, որքան ավելի դրական է մթնոլորտը, այնքան ավելի բարձր է աշակերտների առաջադիմությունը:**

**Գծապատկեր 48. Աշակերտների առաջադիմությունն ըստ բարոյահոգեբանական մթնոլորտի համաթվի (% , աշակերտներ)**



Հետազոտության ընթացքում աշակերտները նաև կարծիք են հայտնել, թե ինչ մասնագետ են ուզում դառնալ և ինչ հետաքրքրություններ ունեն դասերից դուրս:


**Գծապատկեր 49. Ի՞նչ մասնագետ ես ուզում դառնալ (% , աշակերտներ)**



Գծապատկեր 49-ից երևում է, որ աշակերտների 32%-ը դեռ չի որոշել, թե ինչ մասնագետ է ուզում դառնալ:


Դասերից դուրս աշակերտների հետաքրքրությունները ներկայացված են ստորև.

**Գծապատկեր 50 Ի՞նչ հետաքրքրություններ ունեք դասերից դուրս (% , աշակերտներ)**



Գծապատկերից երևում է, որ աշակերտների մոտ երաժշտությունը և սպորտը, որպես հետաքրքրություններ, գտնվում են առաջին դիրքում:

**Գծապատկեր 51. Ի՞նչ է թեզ հարկավոր ավելի լավ սովորելու համար: (% , աշակերտներ)**




Հատկանշական է, որ այն հարցին, թե՞ ինչ է իրենց հարկավոր լավ սովորելու համար, աշակերտների մեծամասնությունը պատասխանել է «ոչինչ», երկրորդ տեղում «որակյալ ուսուցիչներ»-ն են, այնուհետև «մասնագիտական կողմնորոշման դասընթացներ»-ը և միայն դրանից հետո, որպես կարևոր պայման լավ սովորելու համար, աշակերտները նշել են **«դպրոցի հարմարավետ պայմաններ»**-ը: Միևնույն ժամանակ, աշակերտների 79%-ը նշել են, որ դպրոցի ֆիզիկական պայմանները նպաստում են իրենց սովորելուն: Իսկ 82%-ն էլ նշել է, որ սովորելուն նպաստում է բարոյահոգեբանական մթնոլորտը:

**Աշակերտների վերաբերմունքը գույքի նկատմամբ**

Բարոյահոգեբանական դրական մթնոլորտի կարևորությանը կանդիդատները հաջորդ բաժնում, իսկ այժմ տեսնենք, թե՞ աշակերտների և ուսուցիչների կարծիքով որքանով են հոգատար աշակերտները, ուսուցիչները և դպրոցի տնօրինությունը դպրոցի գույքի հանդեպ:

**Գծապատկեր 52. Աշակերտները, ուսուցիչները, տնօրինությունը հոգատար են դպրոցի գույքի, պայմանների պահպանման հարցում (%)**



Գծապատկեր 52-ում տեսնում ենք, որ թե՛ աշակերտները և թե՛ ուսուցիչները գտնում են, որ դպրոցի գույքի նկատմամբ ավելի հոգատար է դպրոցի տնօրինությունը, այնուհետև ուսուցիչները և միայն վերջում աշակերտները:




Աշակերտները պատասխանել են նաև այն հարցին, **թե եղել է արդյոք դեպք, որ աշակերտները վնասեն դպրոցի գույքը, կահույքը կամ պարագաները**: Աշակերտների 58%-ը նշել է, որ նման դեպք եղել է: Միևնույն ժամանակ, 80% դեպքերում վնասված գույքն ամբողջությամբ վերանորոգվել է:

Հետազոտության մեթոդաբանության մշակման փուլում վարկած էր առաջադրվել, ըստ որի աշակերտների, ուսուցիչների և տնօրինության վերաբերմունքը անմիջական ազդեցություն ունի կրթական միջավայրի արդյունավետ գործառնության վրա: Հետազոտության արդյունքների համաձայն, այս վարկածը հաստատվում է, քանի որ, կարևորելով կրթական միջավայրը, տնօրինությունը և ուսուցիչները հնարավորության սահմաններում փորձում են անմիջապես վերանորոգել այն գույքը, որը վնասվում է ուսումնական գործընթացում:

**Բարոյահոգեբանական մթնոլորտ դպրոցներում**

Այժմ տեսնե՞ք, թե ինչպիսին է բարոյահոգեբանական մթնոլորտը դպրոցներում և ինչ գործոններով է այն պայմանավորված: **Գծապատկեր 53**-ում տեսնում ենք, որ ամենատարածված զգացողությունը, որ աշակերտներն ունենում են դպրոցում, ուրախության, հարմարավետության և հաճույքի զգացողություններն են: Այլ կերպ ասած, դպրոցի հետ կապված զգացողությունները աշակերտների մոտ հիմնականում դրական են:


**Գծապատկեր 53. Դպրոցում գտնվելիս ինչպիսի՞ զգացողություն ես ունենում (% , աշակերտներ)**



Հատկանշական է, որ գոյություն ունի ուղիղ կապ դպրոցում աշակերտների ունեցած զգացողությունների և դպրոցի ֆիզիկական, կոմունալ կենցաղային պայմանների և գույքային ապահովվածության մեջ: Աշակերտների 89%-ը վստահ է, որ դպրոցում երբևէ ֆիզիկական բռնության չի ենթարկվի, իսկ 82%-ը նշել է, որ երբևէ չի ենթարկվի հոգեբանական ճնշումների և վիրավորանքների:

**Գծապատկեր 54**-ում մենք տեսնում ենք, որ որքան ավելի լավն են դպրոցի ֆիզիկական պայմանները և գույքային հագեցվածությունը, այնքան ավելի դրական զգացողություններ են ունենում աշակերտները դպրոցում:


**Գծապատկեր 54. Աշակերտների դրական զգացողությունների կապը դպրոցի ֆիզիկական պայմանների հետ: (%)**



Եթե նախորդ բաժնում մենք տեսանք, որ ֆիզիկական պայմանները ուղղակիորեն չեն ազդում աշակերտների առաջադիմության վրա, ապա այստեղ անուղղակի ազդեցություն ենք տեսնում. **ֆիզիկական պայմանները դրական ազդեցություն ունեն բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, իսկ վերջինս էլ իր հերթին՝ աշակերտների առաջադիմության վրա** (տե՛ս [Գծապատկեր 48-ը](#)):

Աշակերտների 55%-ը գտնում է, որ դպրոցում առկա են սովորելու համար անհրաժեշտ պարագաները և պայմանները: Միևնույն ժամանակ, թե՛ աշակերտները և թե՛ ուսուցիչները պատասխանել են այն հարցին, թե ինչ պայմանների և պարագաների կարիք ունի իրենց դպրոցը:

**Գծապատկեր 55. Ի՞նչ պարագաների և պայմանների կարիք ունի դպրոցը: (%)**




Գծապատկեր 55-ում տեսնում ենք, որ թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները առաջին հերթին կարևորել են լաբորատոր նյութերի և պարագաների առկայությունը, այնուհետև սանհանգույցների վիճակի բարելավումը: Որպես լրացուցիչ պայմաններ ուսուցիչները նշել են.

- Նոր համակարգիչների և տեխնիկական միջոցների համալրման անհրաժեշտությունը
- Դիդակտիկ նյութերի, մեթոդական գրքերի, գեղարվեստական և մասնագիտական գրքերի համալրումը
- Ուսուցիչների համար հանգստի սենյակի անհրաժեշտությունը
- Ուսուցիչների համար բուֆետի անհրաժեշտությունը
- Նոր կահույքի ձեռքբերումը:

**Դպրոցի ֆիզիկական պայմանների և բարոյահոգեբանական մթնոլորտի կապը ուսուցիչների աշխատանքային արդյունավետության հետ**

Հետազոտությանը մասնակցած ուսուցիչների մեծամասնությունը (88%) գտնում է, որ դպրոցի առկա ֆիզիկական պայմանները նպաստում են իրենց աշխատանքի արդյունավետությանը:

**Գծապատկեր 56. Դպրոցի ֆիզիկական պայմանները և բարոյահոգեբանական մթնոլորտը որքանով են նպաստում Ձեր աշխատանքի արդյունավետությանը: (% , ուսուցիչներ)**




Գծապատկեր 56-ում տեսնում ենք, որ թե՛ դպրոցի ֆիզիկական պայմանները, թե՛ բարոյահոգեբանական մթնոլորտը մեծապես նպաստում են ուսուցիչների աշխատանքային արդյունավետությանը: Միևնույն ժամանակ, եթե ուսուցիչների ընդամենը 31%-ն է նշել, որ ֆիզիկական պայմանները նպաստում են, ապա 56%-ը նշել է, որ բարոյահոգեբանական մթնոլորտը նպաստում է աշխատանքային արդյունավետությանը: Ուսուցիչների 86%-ը նշում են, որ դպրոցում դասաժամերի ընթացքում անաղմուկ է լինում, 95%-ը նշել են, որ իրենց անվտանգ են զգում դպրոցում:

Այսպիսով, հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ **դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը ավելի մեծ դերակատարում ունի աշխատանքային արդյունավետության/ առաջադիմության հարցում, քան դպրոցի ֆիզիկական պայմանները:**

Նախորդ բաժնում արդեն անդրադարձանք այն պարագաներին և պայմաններին, որոնց անհրաժեշտությունն ունի դպրոցը: Այժմ տեսնենք, թե որքան գումար են ծախսում ուսուցիչներն անձնապես անհրաժեշտ պարագաների ձեռքբերման համար: Հետազոտության արդյունքների համաձայն, ուսուցիչները ամսական միջինում 3000 ՀՀ դրամ ծախսում են իրենց առարկայի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերման համար: Ընդ որում, ուսուցիչների 28%-ը ծախսում է մինչև 1000 ՀՀ դրամ, 39%-ը՝ 1001-3000 ՀՀ դրամ, 33%-ը՝ 3001-ից ավելի ՀՀ դրամ:

**Գծապատկեր 57. Ի՞նչ պարագաների ձեռք բերման համար եք ծախսում գումարը: (% , ուսուցիչներ)**




Գծապատկեր 57-ից երևում է, որ ուսուցիչները անձնապես գումար են ծախսում հիմնականում նյութերի տպագրության, պատճենահանման և գրեմական պիտույքների ձեռքբերման վրա:

**Վերապատրաստումների անհրաժեշտությունը**


Չեռագոտությունը մասնակցած ուսուցիչների 43%-ը ընթացիկ ուսումնական տարում մասնակցել է վերապատրաստման դասընթացների: Մասնագիտական վերապատրաստումների մեծ մասն (85%-ը) անցկացվել է Կրթության Ազգային Ինստիտուտի կողմից:

**Գծապատկեր 58. Որքանով եք գոհ այդ վերապատրաստումներից: (% , ուսուցիչներ)**



Ուսուցիչների 71%-ը նշել են, որ գոհ են մասնագիտական վերապատրաստումներից, իսկ 82%-ը նշել են, որ գոհ են դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ վերապատրաստումներից:

**Գծապատկեր 59. Ի՞նչ վերապատրաստումների կարիք ունեք այժմ: (% , ուսուցիչներ)**



Գծապատկերում տեսնում ենք, որ ուսուցիչները, նախ և առաջ, կարևորում են համակարգչային և օտար լեզուների վերապատրաստումները:

Այսպիսով, ուսումնասիրությունը անդրադարձավ դպրոցների նյութատեխնիկական պայմանների առկա վիճակին, ինչպես նաև ուսուցիչների և աշակերտների ընկալումներին և գնահատականներին՝ դպրոցական պայմանների վերաբերյալ:

## ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հանրակրթական դպրոցների ծառայությունների որակի և հանրային միջոցների օգտագործման մոնիտորինգի արդյունքները՝ ներկայացնենք հետազոտության հիմնական եզրակացությունները և առաջարկությունները:

### Ընդհանուր եզրակացություններ

- Հետազոտության արդյունքների համաձայն, դպրոցի ֆիզիկական պայմանները, ներառյալ՝ սանիտարահիգիենիկ պայմանները, ենթակառուցվածքների առկայությունը և որակը, դպրոցի ներքին հարդարանքը, անուղղակի ազդեցություն ունեն, մի կողմից, աշակերտների առաջադիմության, մյուս կողմից, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա: Հետազոտական տարբեր մեթոդների և գործիքների կիրառմամբ ստացված տվյալների համադրումը թույլ է տալիս արձանագրել, որ դպրոցի ֆիզիկական պայմանների ազդեցությունը աշակերտների առաջադիմության և ուսուցիչների վրա միջնորդավորված է դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտով: **Այլ կերպ ասած, ֆիզիկական պայմանները ազդում են բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, իսկ վերջինս էլ, իր հերթին, աշակերտների առաջադիմության վրա:**
- Հետազոտության մասնակիցները (աշակերտները, ուսուցիչները) տարբեր կերպ են ընկալում դպրոցներում առկա խնդիրները, որոնք, մասնավորապես, վերաբերում են ֆիզիկական պայմանների առկայությանը և ծառայությունների որակին: Սակայն նրանց միավորում է մեկ բան. թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները ժամանակի ընթացքում համակերպվում են այն իրավիճակի հետ, որն առկա է դպրոցում:
- Համեմատելով աշակերտների և ուսուցիչների կարծիքը դպրոցների դիտարկման արդյունքների հետ՝ մենք տեսնում ենք, որ հիմնականում միևնույն իրավիճակին դիտարկողը տվել է ամենացածր գնահատականը, աշակերտները՝ մի փոքր ավելի բարձր, իսկ ուսուցիչները՝ ամենաբարձր գնահատականը:

### Մասնավոր եզրակացություններ և առաջարկություններ

#### Կրթական քաղաքականության մակարդակին վերաբերող

**Եզրակացություն.** Դպրոցի տնօրենները չեն կարողանում լիարժեք կառավարել դպրոցի ֆինանսները՝ բարելավելու համար դպրոցի պայմանները:

**Առաջարկություն (ԿԳՆ).** Դպրոցների հաստիքացուցակներում ապահովել գնումների մասնագետի հաստիքը կամ այդ լիազորությունների կատարումը այլ հաստիքային աշխատողի կողմից: Այդ մասնագետների համար ապահովել գնումների, մասնավորապես պետական գնումների ուսուցման կամ իրավական խորհրդատվության հնարավորություն:

**Եզրակացություն.** Բավականին ցածր է դպրոցների տնօրենների իրազեկվածությունը հիմնանորոգման և վերանորոգման համար դպրոցների ընտրության ընթացակարգի վերաբերյալ. նրանց գնահատմամբ, այդ ընթացակարգը հստակ և թափանցիկ չէ:

**Առաջարկություն (ԿԳՆ).** Հիմնանորոգվող, վերանորոգվող դպրոցների ցանկերի որոշման գործընթացը դարձնել առավել **թափանցիկ, մասնակցային և հստակ չափանիշների վրա հիմնված:**

**Եզրակացություն.** Աշակերտների քանակով պայմանավորված՝ մի շարք դպրոցներ գերծանրաբեռնված են, իսկ մի շարք դպրոցներ՝ թերծանրաբեռնված, խոսքը, մասնավորապես, վերաբերում է ավագ դպրոցներին:

#### Առաջարկություն (ԿԳՆ)

Ուսումնասիրել մարզերում ավագ դպրոցների ընտրության կարգը և տեղաբաշխել դպրոցների շենքերը՝ ըստ աշակերտների թվի:

**Եզրակացություն.** Բուժզննումների նկատմամբ վերահսկողությունը բավարար չափով չի իրականացվում, արդյունքում աշակերտները չեն անցնում պարտադիր զննումները:

### **Առաջարկություն (ԱՆ)**

Աշակերտների պարտադիր որակյալ զննումների ապահովման նպատակով խստացնել բուժզննումների նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև, որոշ դեպքերում, շարժական լաբորատորիաների միջոցով ստուգումներ իրականացնել դպրոցներում:

**Եզրակացություն.** Ուսումնասիրված բոլոր դպրոցներում էլ առկա են մի շարք պայմաններ, որոնք չեն համապատասխանում ՀՀ իրավական նորմերին, որոնք սահմանված են «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N2.2.4-016-17 սանիտարական կանոններ և նորմեր» ՀՀ առողջապահության նախարարի թիվ 12-Ն հրամանով:<sup>40</sup>

- 1.1. Հետազոտության մասնակիցներին առավել մտահոգող հիմնախնդիրներից մեկը **սանհանգույցների** մաքրությունն է, առանձնացված սանհանգույցների առկայությունը թե՛ աշակերտների (աղջիկների և տղաների) և թե՛ ուսուցիչների համար: Ընդ որում, այս խնդիրն ավելի շատ մտահոգում է աշակերտներին, քան ուսուցիչներին: Որպես առկա վիճակի հետևանք՝ հարցմանը մասնակցած աշակերտների ընդամենը մեկ երրորդն է օգտվում սանհանգույցից: Առկա են նաև սանիտարական կանոնների խախտումներ. ուսումնասիրված դպրոցների ընդամենը կեսում է առկա աշակերտների թվով նախատեսված սանհանգույցներ, ոչ բոլոր դպրոցներում են առկա սանհանգույցներ երկրորդ հարկում, որոշ դպրոցներում չկա ուսուցիչների համար նախատեսված սանհանգույց:
- 1.2. Հետազոտության մասնակիցներին մտահոգող մյուս խնդիրը **ճաշարանի բացակայությունն է**, իսկ առկայության դեպքում վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների որակը, սննդի տեսականին և թարմությունը: Հատկանշական է, որ մեծամասնությունը բարձր է գնահատել ճաշարանի մաքրությունը, միևնույն ժամանակ, թե՛ աշակերտներին և թե՛ ուսուցիչներին որոշ դեպքերում մտահոգում է ճաշարանից եկող սննդի հոտը:
- 1.3. Որոշ դպրոցներում առկա են **խմելու ջրի** հասանելիության և որակի հետ կապված խնդիրներ: Այս խնդիրները հիմնականում բնորոշ են Արմավիրի, Արագածոտնի և Սյունիքի մարզերին:
- 1.4. Ուսումնասիրված դպրոցների մի մասը (10 դպրոց) **մարզադահլիճ և հանդերձարան** չունի: Մյուս դպրոցներում մարզադահլիճներ առկա են, սակայն ունեն գույքային խնդիրներ: Ընդ որում, շատ քիչ դպրոցներ ունեն նորմատիվներով սահմանված մարզագույք, մարզասարքեր:
- 1.5. Առկա են նաև խնդիրներ **լաբորատորիաների**, համապատասխան սարքավորումների առումով: Դիտարկված դպրոցներից 10-ում չկան քիմիայի, իսկ 9-ում՝ ֆիզիկայի լաբորատորիաներ, միևնույն ժամանակ, քիմիայի լաբորատորիաների համար անհրաժեշտ գույքն առկա է դիտարկված դպրոցների շատ քիչ մասում:
- 1.6. Ներքին հարդարման համար դպրոցների կողմից օգտագործվող **գույները** հիմնականում համապատասխանում են սանիտարական նորմերով հաստատված գույներին: Այնուամենայնիվ, թե՛ աշակերտները և թե՛ ուսուցիչները կարծում են, որ իրենք նույնպես պետք է մասնակցություն ունենան դասասենյակների գույների ընտրության և ներքին հարդարման հետ կապված մյուս գործերում:

<sup>40</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=112989>



1.7. Աշակերտների ընդամենը մեկ հինգերորդ մասն է նշել, որ «միշտ կամ հաճախակի» օգտվում է **բուժկետից**: Մինևույն ժամանակ, աշակերտների մեկ երրորդը նշել է, որ պարբերաբար ունենում է հոգնածություն կամ գլխացավ: Դիտարկված 44 դպրոցից 11-ում բուժկետ չկա կամ չի գործում: Աշակերտներին և ուսուցիչներին մտահոգում է նաև համապատասխան պարագաներով և դեղորայքով բուժկետի հագեցվածության խնդիրը: Ոչ բոլոր դպրոցներում են առկա սանիտարական նորմերով սահմանված դեղորայք և պարագաներ: Աշակերտների թվով պայմանավորված՝ դպրոցներում բուժաշխատողների ծանրաբեռնվածության հանգամանքը հնարավորություն չի տալիս աշակերտներին օգտվել բուժաշխատողի ծառայություններից և ստանալ համապատասխան օգնություն՝ դպրոցում աշակերտների գտնվելու ողջ ընթացքում:

### **Առաջարկություն (ՅՅ կառավարություն)**

- 1.1 Ապահովել ՅՅ առողջապահության նախարարի 28.03.2017թ. թիվ 12-Ն հրամանով սահմանված նորմերի նկատմամբ պարբերական վերահսկողությունը՝ կառավարության ենթակա տեսչական մարմինների կողմից:
- 1.2 Ապահովել ՅՅ առողջապահության նախարարի 06.06.2014թ. թիվ 32-Ն հրամանով սահմանված հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջների, սանիտարական կանոնների և նորմերի նկատմամբ վերահսկողությունը:

### **Առաջարկություն (ԱՆ)**

- 1.3 Համալրել դպրոցների բուժկետերը ՅՅ առողջապահության նախարարի 28.03.2017թ. թիվ 12-Ն հրամանի հավելված 2-ով սահմանված համապատասխան դեղորայքով և պարագաներով:
- 1.4 Ապահովել ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից դպրոցի աշակերտների ամենամյա զննումների պատշաճ իրականացումը ըստ ՅՅ առողջապահության նախարարի 09.04.2013թ. թիվ 874-Ա հրամանի հավելված 2-ի սահմանված ծավալների:
- 1.5 Բոլոր դպրոցներում, անկախ աշակերտների թվից, ապահովել **առնվազն մեկ բուժաշխատողի** մշտական ներկայություն ողջ ուսումնական օրվա ընթացքում:
- 1.6 Կազմակերպել առաջին բուժօգնության դասընթացներ բոլոր ուսուցիչների և աշակերտների համար:

### **Առաջարկություն (ՏՁԵՆ)**

- 1.7 Խմելու ջրի առկայության ապահովում դպրոցներում, հատկապես այն համայնքներում, որտեղ բացակայում է խմելու ջուրը:

### **Առաջարկություն (ԿԳՆ)**

- 1.8 Սահմանել առարկայական չափորոշիչներից բխող անհրաժեշտ սարքավորումների և նյութերի կազմը, ապահովել դպրոցները այդ կազմը ձեռք բերելու հնարավորությամբ՝ սահմանելով պարտադիր միջոցներ բյուջեում և ձեռք բերելու համար տարբեր՝ մասնագիտացված արտոնագրված մատակարարներ:
- 1.9 Ապահովել առանձնացված դասասենյակներ՝ ըստ առարկաների հագեցած ուսումնական և թեմատիկ նյութերով: Աշակերտների բնագիտական հմտությունները զարգացնելու, ինչպես նաև բնությանը մոտ լինելու նպատակով բուսականություն ավելացնել դպրոցներում:
- 1.10 Դպրոցներն ապահովել առարկայական չափորոշիչից բխող համապատասխան մարզական գույքով:

### **Առաջարկություն դպրոցների տնօրեններին**

- 1.11 Դպրոցի **ճաշարանների աշխատանքները** բարելավելու նպատակով անհրաժեշտ է ավելացնել սննդի բազմազանությունը և թարմությունը, ինչպես նաև խստացնել սննդի նկատմամբ

վերահսկողությունը: Ուսուցիչների և բարձր դասարանի (5-րդ դասարան և ավելի) երեխաների համար ստեղծել ճաշարանից օգտվելու պայմաններ, եթե դպրոցը ընդգրկված է «դպրոցական սնունդ» ծրագրում և կա գործող ճաշարան:

#### 1.12 Դպրոցների **ներքին հարդարանքում հետաքրքիր, նորարար լուծումների** կիրառում.

- Ցածր դասարանների աշակերտների համար նախատեսված դասասենյակներում կարելի է ընտրել բաց կանաչ, բաց կապույտ և բեժ գույների տարբեր երանգներ, բայց մաքուր գույներ առանց խառնուրդների:
- Ավելի բարձր դասարաններում կարելի է այլ գույներ կիրառել. նարնջագույն, բաց դեղին և այլն: Կարևոր է, որ գույներն ավելի բաց լինեն, քան ցածր դասարանների երեխաների դեպքում:
- Որպեսզի դասասենյակը միօրինակ չթվա, կարելի է տարբեր գույների ներկել պատերը՝ կախված լուսավորությունից: Գրատախտակի մոտ կարելի է կիրառել շատ ավելի հանգիստ գույներ, իսկ ավելի վառ գույներով կարելի է ներկել այն հատվածը, որն աշակերտները տեսնում են ընդմիջումների ժամանակ:
- Կարելի է գունազարդել, պատկերազարդել դպրոցի տարածքը՝ աշակերտների և ուսուցիչների շրջանում հարցում անելու միջոցով պարզելով նախընտրելի գույնը, ինչպես նաև օգտագործելով աշակերտների երևակայությունը և նրանց ներգրավել աշխատանքներում:

### Ենթակառուցվածքներին վերաբերող

**Եզրակացություն.** Դպրոցների գրադարանները, որպես ենթակառուցվածք, հաճախ չեն օգտագործվում իրենց ողջ ներուժով՝ աշակերտների և ուսուցիչների շրջանում ընթերցանության քիչ տարածվածության, ինչպես նաև գրադարանների ոչ թարմացված ֆոնդի պատճառով:

**Առաջարկություն (դպրոցների տնօրեններին).** Խրախուսել ընթերցանությունը դպրոցներում կազմակերպելով մրցույթներ, բաց դասեր, ընթերցանության օրեր և այլն: Համալրել դպրոցի գրադարանները թարմ գրականությամբ, այդ թվում՝ էլեկտրոնային համակարգիչներով, կրթական ֆիլմեր դիտելու հնարավորությամբ, արագ համացանցով: Բարձրացնել գրադարանավարի մասնագիտական հմտությունները:

**Եզրակացություն.** Դասապրոցեսը հաճախ հետաքրքիր չի անցնում, քանի որ դասասենյակները հագեցած չեն ժամանակակից տեխնոլոգիաներով, անհրաժեշտ կահույքով:

**Առաջարկություն (դպրոցների տնօրեններին).** Անհրաժեշտ է փոխել կամ ավելացնել դասասենյակների կահույքը:

### Պրակտիկաներին վերաբերող

**Եզրակացություն.** Չնայած դպրոցներում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների պլանի/տարահանման պլանի առկայությանը՝ աշակերտների միայն կեսն է ծանոթ այդ փաստաթղթերին: Ի տարբերություն աշակերտների՝ ուսուցիչների մեծամասնությունը ծանոթ է այդ փաստաթղթերին:

**Առաջարկություն (դպրոցների տնօրեններին).** Իրականացնել տեղեկատվական արշավներ դպրոցներում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների պլանի/տարահանման պլանի վերաբերյալ:

**Եզրակացություն.** Դպրոցի պայմանները հաճախ ապահովված չեն, քանի որ բացակայում է դրանց նկատմամբ հոգատար վերաբերմունք աշակերտների կողմից:

**Առաջարկություն (դպրոցների տնօրեններին).** Դպրոցական գույքի նկատմամբ **հոգատար վերաբերմունքի քարոզում** հավասարը հավասարին մեթոդով (peer to peer), ինչպես նաև վնասված գույքի վերականգնում կարճ ժամկետում դպրոցի տնօրինության կողմից: Անհրաժեշտ է զարգացնել երիտասարդների հետ աշխատանքի ոչ ֆորմալ կրթության մեթոդների գծով մանկավարժական կադրերի կարողությունները:

**Եզրակացություն.** Դպրոցների հիմնական մասում բյուջեն փակցված չէ հասանելի վայրում:

**Առաջարկություն (դպրոցների տնօրեններին).** Դպրոցների տարածքի հասանելի վայրում **տեղադրել դպրոցի բյուջեն**, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ առհասարակ դպրոցի կառավարման թափանցիկության, հաշվետվողականության տեսանկյունից, նաև կարող է դաստիարակչական, կանխարգելիչ ազդեցություն ունենալ աշակերտների վրա՝ դպրոցական գույքը չվնասելու առումով, քանի որ նրանք տեղյակ կլինեն, թե այս կամ այն գույքի համար որքան գումար է ծախսվել բյուջեից:



## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված 1. Ուսուցիչների հետ իրականացվող հարցման հարցաթերթ

Հարգելի ուսուցիչ, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում իրականացնում է ուսումնասիրություն Հայաստանի բոլոր մարզերի 50 դպրոցներում պարզելու, թե ինչպիսին են դպրոցների կյուրատիխնիկական և սանիտարահիգիենիկ պայմանները: Այս հարցերի վերաբերյալ Ձեր, որպես մասնագետի, կարծիքը շատ կարևոր է մեզ համար:

Մանրամասների համար կարող եք ծանոթանալ տեղեկատվական թերթիկին:

Խնդրում ենք պատասխանել այս հարցերին, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Նշենք, որ հարցումն անանուն է, Ձեր անունը չի նշվելու որևէ տեղ և լրացված հարցաթերթիկը որևէ մեկին չի տրամադրվելու:

#### 1. Խնդրում եմ նշել, թե ինչ առարկաներ եք դասավանդում դպրոցում:

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_

#### 2. Դուք հիմնականում հաճույթով եք դպրոց գալիս աշխատանքի:

1. այո
2. հիմնականում այո
3. հիմնականում ոչ
4. ոչ

#### 3. Խնդրում եմ գնահատեք, թե որքանով եք գոհ դպրոցի հետևյալ պայմաններից:

#	Պայման	շատ դժգոհ եմ	դժգոհ եմ	գոհ եմ	շատ գոհ եմ	առկա չէ	դժ. պատ.
1.	Դպրոցի ջեռուցում						
2.	Դասասենյակների լուսավորություն						
3.	Դասասենյակների մաքրություն						
4.	Սանհանգույցների մաքրություն						
5.	Դպրոցի ընդհանուր մաքրություն						
6.	Բուժկետի հագեցվածություն						
7.	Բուժետի սննդի բազմազանություն						
8.	Բուժետի սննդի թարմություն						
9.	Բուժետի մաքրություն						
10.	Դպրոցի մարզադահլիճի հագեցվածություն						
11.	Դպրոցի շենքային պայմաններ						
12.	Գրադարանի հագեցվածությունը գրականությամբ						
13.	Համակարգչային սենյակի հագեցվածություն						
14.	Լաբորատորիաների հագեցվածություն						
15.	Դասասենյակների կահավորում						
16.	Հանդիսությունների դահլիճի կահավորում						
17.	Դիդակտիկ նյութերի առկայություն						
18.	Գրեական պիտույքներով ապահովվածություն						
19.	Մասնագիտական գրականությամբ ապահովվածություն						
20.	Ուսուցչանոցի կահավորում						

**4. Որքան հաճախ եք օգտվում դպրոցի հետևյալ պայմաններից:**

		միշտ	հաճախ	երբեմն	երբեք	Եթե երբեմն եք օգտվում կամ չեք օգտվում, ապա ինչո՞ւ
1.	Բուժետ					
2.	Գրադարան					
3.	Համակարգչի սենյակ					
4.	Համացանց					
5.	Սանհանգույց					
6.	Բուժկետ					

**5. Դասասենյակներում հնարավո՞ր է տեղաշարժել աշակերտների սեղանները՝ խմբային աշխատանք կատարելու համար:**

1. այո      2. ոչ

**6. Խնդրում եմ նշեք, թե որքանով եք համաձայն հետևյալ դատողությունների հետ:**

	Դատողություն	Լիովին	Հիմնականում	Հիմնականում	Բացարձակ
